Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ։

ԼԻԿԱՆ

Առաջին իմ թափառումների գարնանային այն օրերը պատանեկությանս միանձնության վերջին օրերն էին։

Առաջին օրը Օրյոլում արթնացա դեռ այն, ինչ էի ճանապարհին,— միայնակ, ազատ, հանգիստ, օտար՝ հյուրանոցին, քաղաքին,— և քաղաքի համար ոչ սովորական ժամին, լույսը հազիվ բացված։ Սակայն հաջորդ օրն արդեն ավելի ուշ՝ ինչպես բոլորը։ Հագնվեցի խնամքով, աչքս հայելուն... Երեկ խմբագրությունում ինքս էլ արդեն անհարմարության զգացում ունեի իմ գնչուական արևայրուկից, դեմքիս քամահար նիհարությունից, երկարած և կարգի չբերված մազերիցս։ Հարկավոր էր պատշաճ տեսքի գալ, մանավանդ որ գործերս երեկ անսպասելիորեն լավացան. առաջարկություն ստացա ոչ միայն աշխատակցելու, այլև ավանս վերցնելու, որը և վերցրի՝ թունդ կարմրեցի, բայց վերցրի։ Եվ ահա քայլեցի գլխավոր փողոցով, մտա ծխախոտի խանութ ու մի տուփ թանկագին ծխախոտ գնեցի, հետո գնացի վարսավիրանոց, որտեղից դուրս եկա գեղեցիկ փոքրացած անուշաբույր գլխով և տղամարդկային այն առանձնահատուկ կայտառությամբ, ինչպես միշտ դուրս ես գալիս վարսավիրանոցից։ Ուզում էի անմիջապես գնալ խմբագրություն, որքան կարելի է շուտ շարունակել համակ տոնականությունը այս նոր տպավորությունների, որ այնքան շռայլորեն պարգևել էր ինձ բախտը երեկ։ Սակայն հիմա անմիջապես գնալ ոչ մի կերպ չէր կարելի. «Ինչպես, նա նորի՞ց է եկել։ Եվ նորի՞ց առավոտից»։ Վճռեցի քայլել քաղաքում։ Նախ, ինչպես երեկ իջա Բոլխովսկայա փողոցով, հետո Բոլխովսկայայից անցա Մոսկովսկայա՝ առևտրական երկար այդ փողոցը, որ տանում էր կայարան, քայլեցի, մինչև որ փողոցը ինչ-որ փոշեկոլոլ հաղթադարպասից այն կողմ դարձավ ամայի և աղքատիկ, որից հետո անցա և քայլեցի էլ ավելի աղքատիկ Պուշկարնայա Սլոբոդայով ու հետո նորից վերադարձա Մոսկովսկայա։ Իսկ երբ Մոսկովսկայայից շրջվեցի դեպի Օռլիկ, անցա հին փայտե կամուրջը, որ գվվում ու ցնցվում էր վրայով մեկնողների ծանրության տակ, ու բարձրացա դեպի պաշտոնատները, սկսեցին զարկել բոլոր եկեղեցիների զանգերը, և բուլվարով, զույգ սևաթույր ձիեր լծված կառքով, որ առաջանում էին արագ, բայց համաչափ՝ արժանի հակադրություն ստեղծելով սույն զանգահարությանը, ինձ ընդառաջ սլացավ քահանայապետը, ձեռքի ողորմած շարժումով աջ ու ձախ խաչակնքելով բոլոր անցորդներին։

Խմբագրությունում նորից մարդաշատ և գործնական մթնոլորտ էր, իր մեծ սեղանի առջև աշխույժ աշխատում էր փոքրիկ Ավիլովան, որ միայն քնքշորեն ժպտաց ինձ ու անմիջապես գլուխը կախ գցեց սեղանին։ Նախաճաշը դարձյալ ձգվեց երկար, ուրախ էր, հետո լսում էի, ինչպես Լիկան դաշնամուր էր նվագում հախուռն, մոլեգին, հետո նրա և Օբոլենսկայայի հետ ճոճանակով ճոճվում էինք այգում։ Թեյից հետո Ավիլովան ցույց տվեց ինձ տունը՝ շրջելով բոլոր սենյակները։ Ննջասենյակի պատին տեսա մի դիմանկար,— շրջանակի միջից նայում էր ինչ-որ մեկը՝ մազոտ, ակնոցով, ոսկրոտ լայն ուսերով։ «Հանգուցյալ ամուսինս է»,— ի միջի այլոց ասաց Ավիլովան, և ես մի քիչ շփոթվեցի, այնքան որ ապշած էի թոքախտավորի տեսքով այդ մարդու, և աշխույժ, գեղեցիկ այս կնոջ միջև որևէ ընդհանրություն տեսնելու անհեթեթությունից։ Հետո նա նորից նստեց աշխատելու, Լիկան հագնվեց և ասաց մեզ,— խոսելու իր այն եղանակով, որի որոշ առանձնահատկություններն արդեն նկատել էի՝ փոքր-ինչ հարմար չտեսնելով այն իր համար.— «Երեխեք, ես չքվեցի»,— ու գնաց չգիտես ուր, իսկ ես և Օբոլենսկայան գնացինք ամենքս մեր գործին։

Նա ինձ առաջարկեց գնալ իր հետ Կարաչևսկայա, ասաց, որ պետք է մտնի սպիտակեղենի կարուհու մոտ, և ինձ համար հաճելի եղավ այն մտերմությունը, որ նա հանկարծ ստեղծեց մեր միջև իր ինտիմ առաջարկով: Նույն այդ զգացումով քայլում էի քաղաքում նրա կողքից, ունկնդրում նրա հատու ձայնը: Կարուհու մոտ մի առանձին հաճույքով համբերությամբ կանգնած սպասում էի, մինչ նա կավարտեր իր բանակցություններն ու խորհրդակցելը: Երբ նորից դուրս եկանք Կարաչևսկայա, արդեն իրիկնանում էր: «Դուք Տուրգենև սիրո՞ւմ եք»,— հարցրեց նա: Ես շփոթվեցի,— քանի որ ծնվել և մեծացել էի գյուղում, ինձ միշտ տալիս էին այդ հարցը՝ անպայմանորեն ենթադրելով, որ պիտի սիրեի Տուրգենևին:— «Ասենք, լավ, միևնույն է,— ասաց նա,— ամեն դեպքում ձեզ համար հետաքրքիր կլինի: Այստեղ մոտ մի կալվածք կա, որ իբր նկարագրված է «Ազնվականների բույն»-ում: Կուզեի՞ք տեսնել»— Եվ մենք քայլեցինք դեպի քաղաքի ծայրամաս, մի խուլ, այգիների մեջ կորսված փողոց, որտեղ Օռլիկի զառիթափի գլխին, ապրիլյան մատղաշ կանաչով ծածկված հինավուրց այգում գորշագույնին էր տալիս վաղուց անմարդաբնակ տունը՝ կիսաքանդ ծխնելույզներով, որոնց մեջ արդեն բույներ էին հյուսել թռչնիկները: Կանգնեցինք, նայեցինք տանը ցածր ցանկապատի վրայով, դեռևս նոսր այգու միջով, որ նախշի նման էր մայրամուտի պարզ երկնքում... Լիզա, Լավրեցկի, Լեմմ... Եվ ես ամբողջ էությամբ սեր տենչացի:

Երեկոյան բոլորս քաղաքային այգում էինք, ամառային թատրոնում. կիսամութի մեջ նստել էի Լիկայի կողքին և նրա հետ հրճվում էի ողջ այն աղմկոտ անհեթեթությամբ, որ տեղի էր ունենում նվագախմբերում, բեմում, ցածից լուսավորված մի հարթակում, ուր նվագախմբի պարադրդոցի տակ դոփում էին ու անագե դատարկ գավաթները չխկչխկացնում սիրունիկ քաղաքաբնակչուհիները և թագավորական ռազմիկները, իսկ թատրոնից հետո, հենց այնտեղ, այգում, ընթրում էինք, ես նստել էի ընդարձակ և մարդաշատ պատշգամբում տիկնանց հետ, սառույցի մեջ մի շիշ գինի առջևս: Շարունակ նրանց մոտենում էին ծանոթներ, և բոլորի հետ ինձ ևս ծանոթացնում էին, և բոլորը շատ սիրալիր էին ինձ հետ, բացի մեկից, որը թեթևակի գլուխը խոնարհելով իմ կողմ, այլևս ոչ մի ուշադրության չարժանացրեց ինձ. դա մեկն էր, որ հետագայում,— դարձյալ դույզն իսկ ուշադրության չարժանացնելով,— հոգեկան մեծ տառապանքներ պատճառեց ինձ, մի շատ բարձրահասակ սպա, երկարավուն անփայլ-թուխ դեմքով, անշարժ սև աչքերով, սև կիսաայտամորուքներով, հագին լավ նստող ծնկից ցած սերթուկ և ներբաներիզներով նեղ տաբատ: Լիկան շատ էր խոսում և ծիծաղում՝ ցուցադրելով իր գեղեցիկ ատամները, վստահ, որ բոլորն իրենով հիանում են, և ես արդեն չէի կարողանում հանգիստ նայել նրանց, ես սառեցի, երբ սպան, մեր սեղանի մոտից հեռանալով, մի քիչ երկար պահեց նրա ձեռքն իր մեծ ձեռքի մեջ:

Իմ մեկնելու օրը որոտաց առաջին ամպրոպը: Հիշում եմ այդ ամպրոպը, թեթև կառքը, որ ինձ կայարան էր տանում Ավիլովայի հետ, հպարտության զգացումն այդ կառքից և այդ հարևանությունից, տարօրինակ զգացումը առաջին բաժանումից նրա հետ, որի հանդեպ իմ հորինած սիրուն արդեն հավատում էի լիովին, և մի այլ զգացում, որ գերիշխում էր մնացած բոլորին՝ մի, թվում էր, առանձնահատուկ երջանիկ ձեռքբերումի զգացում, որ իբր ունեցել էի Օրյոլում: Կայարանի կառամատույցում ինձ զարմացրեց, թե որքան հաղթամարմին, խոշոր էին բոլոր այն հանդիսավոր, ընտրովի մարդիկ, որ սպասումով խմբվել էին այնտեղ, որքան ռամկական էին թվում հոգևորականների դեմքերը, չնայած իրենց եկեղեցական արդուզարդին, որ խաչերն ու բուրվառները ձեռքներին կանգնած էին բոլորից առաջ: Այն պահին, երբ վերջապես իր ողջ ծանր ուժով կայարան ժայթքեց մեծ իշխանի գնացքն ու բոլորին կուրացրեց գնացքից դուրս թռած շիկակարմիր հսկայի կարմիր հուսարական համազգեստը, ամեն ինչ մի տեսակ խառնվեց, խճճվեց, ոչինչ այլևս չմնաց հիշողությանս մեջ, հոգեհանգստի մռայլ-սպառնալից հանդիսությունից բացի: Հետո ածխասև շոգեքարշի յուղային-պողպատյա հսկայական զանգվածը դղրդաց իր նորից շնչել

սկսող խողովակի զորեղ, տիրակալական հարվածներով և սպիտակ պողպատաշերտով երկար, սահուն ետ սողաց նրա մխոցի արմունկը, առաջ լողացին ոսկե արծիվներով վագոնների կապույտ-հայելի պատերը... Նայում էի նրանց տակ գնալով արագ պտտվող ձուլածո անիվներին, նայում էի արգելակներին և զսպանակներին, և տեսնում արդեն միայն մի բան. ամեն ինչ թանձր ծածկված էր սպիտակ փոշիով, կախարդական փոշիով երկար ճանապարհի հարավից, Ղրիմից: Գնացքը դղրդալով հեռանում էր, շարունակելով իր վեհաշուք սգո վագքը Ռուսաստանով դեպի ուր որ, դեպի նրա գլուխը, իսկ ես ամբողջապես այն հեքիաթային Ղրիմում էի, առասպելական Պուշկինի գուրզուֆյան դյութիչ օրերում:

Իմ համեստ գավառային գնացքն սպասում էր ինձ հեռու կողմնային կառամատույցում, և ես արդեն ուրախ էի այնտեղ ինձ սպասվող մեկուսացման և հանգստի համար: Ավիլովան մնաց ինձ հետ մինչև գնացքի շարժվելը, շարունակ աշխույժ շաղակրատում էր, ասելով, որ հույս ունի շուտով ինձ կրկին տեսնելու Օրյոլում, ժպիտով հասկացնում, որ ինքը հիանալի տեսնում է ինձ բաժին ընկած զվարճալի վիշտը: Երրորդ զանգին, ջերմորեն համբուրեցի նրա ձեռքը, նա շրթունքները դիպցրեց իմ այտին: Թռա վագոն, այն տեղից պոկվեց և շարժվեց, պատուհանից գլուխս հանած նայում էի, թե ինչպես նա հեռանում է ինձնից կառամատույցում կանգնած և ձեռքը թեթևակի շարժում՝ հրաժեշտ տալով…

Դրանից հետո ճամփին ինձ ամեն ինչ թվում էր հուզիչ. և այս կարճ գնացքը, որ մեկ հազիվ էր քարշ գալիս, մեկ հանկարծ սկսում էր կատաղի ճռճվել և դղրդալ, և այն ամայի կայարաններն ու կիսակայարանները, որտեղ շարունակ կանգ էր առնում չգիտես ինչու, և այն ամենը, արդեն իմը, ծանոթ, որ նորից շրջապատում էր ինձ. պատուհանի առջևով շեղ թմբիկներով շարժվող դաշտերը, որ դեռ մերկ էին, ուստի և ավելի անշուք, կեչիների մերկ անտառակները, որ լուռ սպասում էին գարնանը, խղճուկ հորիզոնները... Իրիկունը նույնպես խղճուկ էր, գարնանային-զով, դժգույն ցած երկնքով:

2

Օրյոլից հետս տանում էի մի երազանք միայն. ինչ-որ կերպ շարունակել,— և որքան կարելի է շուտ,— այն, ինչ սկսվել էր Օրյոլում: Սակայն որքան հեռանում էի Օրյոլից, այնքան ավելի հաճախ էի սկսում մոռանալ այդ մասին՝ հայացքս ուղղած պատուհանից դուրս, դաշտերին, երկար, ապրիլյան մայրամուտին: Եվ ահա վագոնում արդեն լրիվ կիսամութ է, կիսամութ և պատուհանից դուրս, այն նոսր կաղնուտում, որ շարժվում է գնացքի ձախ կողմից՝ մերկ, ծուռումուռ, ծածկված ձմռան ձյունների տակից նոր ազատված անցյալ տարվա դեղնած տերևներով: Ես արդեն կանգնած եմ, պայուսակս ձեռքիս, շարունակ ավելի ու ավելի հուզվելով, սա արդեն Սուբոտինյան անտառն է, որից հետո անմիջապես Պիսարևո կայարանն է լինելու: Գնացքը նախազգուշացնող ու մռայլ ճչում է ուր որ դատարկության մեջ. շտապում եմ հարթակ, մի տեսակ հնադարյան խոնավություն է, զով, անձրև է կաթկթում, կայարանի առջև միայնակ կանգնած է ապրանքատար գնացքը: Մեր գնացքը շրջանցում է այն, և դեռ կանգ չառած, դուրս եմ թռչում կառամատույց: Հետո վազելով կտրում եմ կառամատույցը, անցնում թույլ լուսավորված, անսահմանորեն մռայլ, գյուղացիների կոխկրտած կայարանով ու դուրս գալիս դեպի մութ մուտքը: Մուտքի առջև կլոր բակում ձմռանից հետո խղճուկ և կեղտոտ մի նախապարտեզ է, կիսախավարի մեջ հազիվ երևում է գյուղացի կառապանի ձին: Այդ գյուղացին, որ երբեմն շաբաթներով ապարդյուն սպասում է ուղևորի, գլխիկոր դեպի ինձ է նետվում, հրճվանքով համաձայնում ասածս ամեն խոսքին, պատրաստ է հետս սլանալ թեկուզ աշխարհի ծայրը՝ ինչքան էլ որ վճարեմ,— «Էհ, հո քիչ չեք տա»— և մի րոպե հետո արդեն ես հլու դիկդիկում եմ նրա սաղրիկ սայլակում՝ սկզբում ամայի ու մութ, լռին, արար-աշխարհին օտար

դաշտերով, հողի սև ծովով, որից հետո անսահմանորեն հեռու հյուսիս-արևմուտքում ամպերի տակից նշմարվում է կանաչավուն ինչ-որ բան: Դեմից փչում է դաշտի գիշերային թեթև քամին, ջրիկ, անձրևախառն, ապրիլյան, հեռվում ինչ-որ տեղ,— ասես քամուց շարունակ տեղը փոխելով,— աղմկում է լորը: Ամպերի մեջ, ցած ռուսական երկնքում առկայծում են հատուկենտ աստղեր... Նորից լորեր, գարուն, հող և նորից իմ նախկին, խուլ, խղճուկ երիտասարդությունը: Ճանապարհը տանջալից երկար է. ռուս գյուղացու հետ դաշտով տասը վերստ կտրելը հեշտ ճանապարհ չէ: Գյուղացին դարձել էր լռակյաց, խորհրդավոր, նրանից խրճիթի, նրա մաշված կիսամուշտակից՝ ոչխարենու հոտ էր փչում, լուռ էր արագ քշելու խնդրանքներիս, զառիվայր սկսվելուն պես իջնում էր նստած տեղից ու պարանե սանձերը բռնած համաքայլ շարժվում էր հազիվ քարշ եկող ձիու կողքից, դեմքը շրջած... Վասիլևսկոյե մտնելիս թվում էր արդեն ուշ գիշեր է. ոչ մի տեղ ոչ մի լույս, կենդանության ոչ մի հետք: Աչքդ սովորում է մթությանը, և լավ երևում են ամեն խրճիթ, ամեն մերկ ճյուղ լայն փողոցի երկայնությամբ ձգված խրճիթների առջև, որով մտնում ես գյուղ. հետո տեսնում ես ու զգում ցածրավայրի ապրիլյան խոնավության մեջ իջնելդ, ձախից կամուրջ է գետի վրա, աջից ճանապարհը բարձրանում է վեր, դեպի անհյուրընկալ սևին տվող կալվածատունը: Զգացություններս նորից շատ սրված են. ամեն ինչ այնքան սարսափելիորեն ծանոթ է և միաժամանակ այնքան նոր իր այդ գարնանային գյուղական մթությամբ, խղճուկությամբ, անտարբերությամբ: Գյուղացին բոլորովին հալից ընկել էր զառիվեր ելնելով: Հանկարծ այնտեղ, նախապարտեզի սոճիների ետևից պատուհանում լույս երևաց: Փա՜ռք աստծու, դեռ քնած չեն: Ուրախություն, անհամբերություն և տղայական ամոթխածություն, երբ ի վերջո սայլը կանգ է առնում առմուտքի առջև և պետք է իջնել, բացել նախասենյակի դուռը, ներս մտնել ու տեսնել ինչպես քեզ նայում են ժպտալով…

Վասիլևսկոյեից հաջորդ օրը գնացի ձիով, առավոտյան մանրմաղ ու պայծառ անձրևի տակ, որ մերթ դադարում էր, մերթ նորից մաղում, հերկած դաշտերի և ցելերի միջով: Գյուղացիները վար ու ցանքս էին անում: Հերկավորը բոբիկ քայլում էր արորի ետևից, ճոճվելով, սպիտակ ծուռ ոտնաթաթերով գայթելով փափուկ ակոսի մեջ, ձին այն շուռ էր տալիս մեծ ճիգ գործ դնելով, կորանալով, արորի ետևից ակոսի միջով թռչկոտում էր կապույտ սերմնագռավը՝ շարունակ հողի միջից գտնելով կարմրագույն որդեր, սերմնագռավի ետևից համաչափ քայլքով գնում էր ծերուկը գլխաբաց, սերմնատոպրակը ուսին, աջ ձեռքի լայն և վեհ-շռայլ շարժումով ուղիղ կիսաշրջանիկներով հողի մեջ լցնելով սերմը:

Բատուրինոյում նույնիսկ ցավ զգացի այն բանից, թե ինչ սիրով, ինչ ուրախությամբ ինձ դիմավորեցին: Եվ ամենից ավելի ինձ հուզեց ոչ նույնիսկ մորս, այլ՝ քրոջս ուրախությունը՝ պատկերացնել իսկ չէի կարող, թե սիրո և ուրախության ինչպիսի հրճվանքով նետվեց ընդառաջ, դեպի առմուտք՝ պատուհանից ինձ տեսնելով: Եվ ի՜նչ հրաշք էր նա ինքը՝ իր մաքրությամբ, երիտասարդությամբ, որքան անմեղ, թարմ, նույնիսկ իր նոր զգեստով, որ առաջին անգամ այդ օրը ինձ համար էր հագել: Ինձ զմայլանք պատճառեց նաև տունը իր հնամյա գեղեցիկ կոպտությամբ: Իմ սենյակում ամեն ինչ այնպես էր, ասես հենց նոր էի դուրս եկել այնտեղից. ամեն ինչ իր տեղում էր, նույնիսկ կիսով չափ այրված ճարպամոմը երկաթե մոմակալի մեջ, որ մնացել էր գրասեղանիս ձմռանը իմ մեկնելու օրը: Ներս մտա, նայեցի շուրջս. սև սրբապատկերներ անկյունում, վերևի գունավոր (մանիշակագույն և նռնագույն) ապակիներով հնամենի պատուհաններից երևում էին ծառերն ու երկինքը, որ տեղ-տեղ երկնագույնին էր տալիս ու մանր անձրև էր մաղում կանաչող ճյուղերին և շիվերին, սենյակում ամեն ինչ մի փոքր մռայլ

էր, ընդարձակ, խոր... առաստաղը մուգ էր, փայտե, հարթ, նույնպիսի մուգ գերաններից էին և պատերը... հարթ ու ծանր էին կաղնեփայտե մահճակալի կլոր շրջվածքները...

3

Նորից Օրյոլ մեկնելու համար գործնական առիթ եղավ, հարկավոր էր բանկ տանել տոկոսները: Եվ ես տարա, սակայն մուծեցի միայն մի մասը, մնացածը ծախսեցի: Դա թեթև զանցանք չէր, սակայն հետս տարօրինակ մի բան էր կատարվում և դրան առանձին կարևորություն չտվեցի: Ամեն ինչ անում էի մի տեսակ անմիտ-երջանիկ վճռականությամբ: Օրյոլ մեկնելիս ուշացա մարդատար գնացքից, և տեղնուտեղը տեղավորվեցի ապրանքատար գնացքի շոգեքարշում: Հիշում եմ, բարձր երկաթե ոտնակի վրայով բարձրացա ու մտա ինչ-որ կոպիտ, կեղտոտ բանի մեջ, կանգնել ու նայում էի: Մեքենավարները չափազանց կեղտոտ, երկաթափայլի տվող հագուստանման մի բանով են. նույնքան կեղտոտ ու փայլին տվող են նրանց դեմքերը, նեգրերի նման խիստ ցայտուն ակնասպիտակուցները, կոպերը կարծես դիտավորյալ, ինչպես դերասաններինը, սևացրած են: Երիտասարդը խիստ դղրդոցով երկաթե բահը խրում է հատակին լցված քարածխի մեջ, շոնդալից հետ է գցում վառարանի դռնակը, որտեղից դուրս է պրծնում դժոխային կարմիր կրակը և թափով հետ տալիս այդ դժոխքը բահի միջի ածխի սևով, տարիքավորը մատներն է սրբում զարհուրելի կեղտոտ լաթով և այն մի կողմ նետելով ինչ-որ բան է քաշում, ինչ-որ բան պտտում... Լսվում է ականջ խլացնող սուլոց, չգիտես որտեղից տաքություն է ժայթքում, տարածվում է կուրացուցիչ շոգի, հանկարծ դղրդացող մի բան խլացնում է և՝ դանդաղ շարժվում առաջ... Ինչ վայրենի է թնդում հետո այդ դղրդոցը, ինչպես ահագնանում ու ահագնանում է մեր ուժը, թափը, ինչպես է շուրջն ամեն ինչ ցնցվում, դես ու դեն նետվում, թռչում: Կանգ է առնում, լարված քարանում է ժամանակը, կողքի հոսք-աղեղներով համաչափ երերում է հրե, վիշապային վագքը. և որքան արագ է ավարտվում յուրաքանչյուր միջուղին: Իսկ դրանից հետո յուրաքանչյուր կանգառում, գիշերվա և կայարանի խաղաղ լռության մեջ փռվում է անտառի գիշերային բուրմունքը, և շրջապատի բոլոր թփերից հորդում է, հրճվում, երանություն է սփռում սոխակի երգը... Օրյոլում ես անպատշաճորեն զուգվեցի. նուրբ պճնամոլական երկարաճիտք կոշիկներ, նրբին անթև սև վերնազգեստ, մետաքսե կարմիր շեղօձիք վերնաշապիկ, սև ազնվականական կարտուզ[1], կարմիր գլխարկաբոլորքով. գնեցի հեծյալի թանկ արժեցող թամբ, որն այնքան սքանչելի էր իր ճռճռան, բուրումնավետ կաշվով, որ գիշերը հետս տուն տանելով, չէի կարողանում քնել ուրախությունից, որ այն կողքիս է: Մեկնեցի նորից Պիսարևո՝ նաև ձի գնելու նպատակով, այնտեղ հենց այդ ժամանակ գյուղում ձիերի տոնավաճառ էր: Տոնավաճառում ծանոթացա իմ մի քանի տարեկիցների հետ, նույնպես բոլորը անթև վերնազգեստներով և ազնվականական կարտուզներով, տոնավաճառների վաղուցվա մշտական հաճախորդներ, և նրանց օգնությամբ գնեցի մի ջահել, ցեղական զամբիկ (թեև գնչուն ամեն կերպ ուզում էր վզիս փաթաթել մի պառաված, ուժասպառ եղած կրտած ձի. «առ, աղա, Միշային առ, ամբողջ կյանքումդ ինձ սիրելու ես Միշայի համար»): Դրանից հետո ամառն ինձ համար դարձավ կատարյալ տոն. ես մի երեք օր էլ իրար ետևից Բատուրինոյում չէի անցկացնում, շարունակ հյուրընկալում էի նոր բարեկամներիս մոտ, իսկ երբ Լիկան վերադարձավ Օրյոլ, արդեն քաղաքում էի լինում. հենց ստացա նրանից երկտողը՝ «Վերադարձել եմ և փափագում եմ հանդիպել»— անմիջապես սլացա կայարան, հակառակ այն բանին, որ տհաճ էր այդ երկտողի հիմար սրամտությունը, հակառակ նրա, որ արդեն մութն ընկնում էր և ամպեր էին կուտակվում, իսկ վագոնում հարբածի նման ուրախանում էի գնացքի արագ ընթացքից, որ ավելի արագ էր թվում

[1] Հովարով գլխարկ:

արդեն պայթած ամպրոպից, ու նաև նրանից, որ վագոնի դղրդոցը խառնվում էր որոտի ճայթյունների, տանիքին աղմուկով հարվածող տեղատարափ անձրևի աղմուկի հետ, և այդ ամենը կապույտ բոցի մեջ, որ ամեն րոպե հեղեղում էր սև ապակիները, որոնց փրփրալով զարկվում ու թարմ բուրում էր անձրևաջուրը: Թվում էր ուրիշ ոչինչ գոյություն չուներ, ուրախ հանդիպումների հաճույքից զատ: Բայց ահա,— դա արդեն ամռան վերջին էր,— այդ բարեկամներից մեկը, որ քրոջ և ծեր հոր հետ ապրում էր քաղաքից ոչ հեռու, Իստայի զառիթափ ափին գտնվող փոքրիկ կալվածքում, և որը նույնպես լինում էր Լիկայի մոտ, բավական մեծ հասարակություն հավաքեց իր տուն տոնաճաշի: Լիկայի ետևից նա ինքն էր եկել. Լիկան գնում էր նրա հետ միաձի երկանիվ կառքով, իսկ ես ետևից՝ ձիով: Աչք էր ուրախացնում դաշտերի չոր, արևով ողողված լայնարձակությունը, բաց և ասես ավազե դաշտերը անվերջանալիորեն ծածկված էին բարդոցներով: Ողջ էությունս պահանջում էր քաջ, ճարպիկ մի բան անել: Անխնա խթանում ու զսպում էի ձիս, հետո բաց էի թողնում և ամբողջ թափով թռչում էի բարդոցների վրայով, սուր պայտերով արյունոտելու աստիճան ջնջխելով նրա կոճերը: Տոնաճաշը փտած պատշգամբում ձգվեց մինչև երեկո, երեկոն աննկատելի կերպով փոխվեց գիշերվա՝ ճրագներով, գինով, երգ ու կիթառով: Նստած էի նրա կողքին և արդեն բոլորովին առանց քաշվելու նրա ձեռքը պահում էի ձեռքիս մեջ, ու նա ձեռքը չէր քաշում: Ուշ գիշերին, մենք, ասես պայմանավորված, վեր կացանք սեղանի մոտից, պատշգամբից իջանք այգու մթության մեջ, նա կանգ առավ տաք այդ սևի մեջ և, ծառին հենվելով, ձեռները մեկնեց ինձ. տեսնել չէի կարող, սակայն իսկույն կռահեցի այդ շարժումը... Արագ՝ սկսեց նոսրանալ մթությունը դրանից հետո այգում, խոպոտ ու մի տեսակ անօգնական-երանավետ սկսեցին կանչել ջահել աքաղաղները կալվածքում, և մի րոպե հետո ողջ այգին լուսացավ հսկայական ոսկեգույն արևելքից, որ բացվեց նրա ետևում դեղին դաշտերի, գետի ցածրավայրերի գլխին... Հետո մենք կանգնած էինք այդ ցածրավայրի վրա բարձրացող զառիվերին, և նա, նայելով արևից շառագունող երկնակամարին և արդեն ինձ չնկատելով, երգում էր Չայկովսկու «Առավոտը»: Ձայնը կտրելով բարձր, իրեն անհասանելի հնչյունի վրա, նա ձեռքի մեջ հավաքեց չիլ կաքավի գույնի բատիստե շրջազգեստի շքեղ բոլորածալերը և վազեց դեպի տուն: Ես կանգ առա շփոթված, սակայն արդեն անընդունակ ոչ միայն որևէ բան ըմբռնելու, այլև ոտքի վրա մնալու: Քաշվեցի հին կեչու տակ, որ բարձրանում էր զառիվերի լանջին, չոր խոտի մեջ, և պառկեցի ծառի տակ: Արդեն օրն սկսվել էր, արևը բարձրացել էր և, ինչպես միշտ էր ամռան վերջին, լավ եղանակին, անմիջապես բացվել էր պայծառ շոգ առավոտը: Գլուխս դրեցի կեչու արմատներին և իսկույն քնեցի: Սակայն արևը գնալով վառում էր, շուտով արթնացա այնպես շոգած և քրտնակոլոլ, որ երերալով քայլեցի ստվեր փնտրելու: Ամբողջ տունը դեռ քնած էր, չոր, կուրացուցիչ լույսով ողողված: Քնած չէր միայն ծեր տանտերը: Նրա առանձնասենյակի բաց պատուհանից, որի տակ խիտ աճել էր վայրիացած եղրևանին, լսվում էր նրա հազը, որի մեջ զգացվում էր առավոտյան առաջին ծես ծխամորճից, սերուցքով թունդ թեյից ստացած ծերունական հաճույքը: Իմ քայլերից և ճնճղուկների աղմուկից, որ հեղեղի պես պոկվեցին կողքիս արևի տակ փայլող եղրևանուց, ծերուկը դուրս նայեց պատուհանից, կրծքի վրա իրար բերելով թուրքական նախշավոր մետաքսից հին խալաթը, ցույց տվեց ինձ իր հսկայական ճերմակ մորուքից, ուռած աչքերից սարսափելի դեմքը և ժպտաց արտակարգ բարությամբ: Ես մեղավոր բարևեցի գլխի խոնարհումով, պատշգամբով անցա ու ներս մտա հյուրասենյակի բաց դռնից, որ ուղղակի հրաշալի էր իր առավոտյան լռությամբ և դատարկությամբ, մեջը թռչող թիթեռներով, կապույտ հինավուրց պաստառներով, բազկաթոռներով և բազմոցիկներով, պառկեցի այդ բազմոցիկներից մեկին՝ զարմանալի անհարմար իր կորությամբ, և նորից խոր քուն մտա: Եվ մեկ էլ,— թվում էր հենց անմիջապես, թեև ես երկար էի քնել,— մեկը մոտեցավ ինձ և ծիծաղելով սկսեց ինչ-որ բաներ խոսել, մազերս խառնշտորել: Արթնացա՝ դեմս երիտասարդ տանտերերն էին, քույր և եղբայր, երկուսն էլ սև, կրակոտ աչքերով, գեղեցիկ թաթարական գեղեցկությամբ, եղբայրը դեղին մետաքսե շեղօձիք վերնաշապիկով, քույրը նույնպիսի բլուզով: Տեղիցս վեր թռա ու նստեցի. նրանք մի տեսակ շատ լավ ասում էին, որ

ժամանակն է վեր կենալու, նախաճաշելու, որ Լիկան արդեն մեկնել է, և ոչ թե մենակ, այլ Կուզմինի հետ, և տվեցին ինձ մի երկտող: Անմիջապես հիշեցի Կուզմինի աչքերը՝ հանդուգն, լպիրշ, կարծես խայտաբղետ, մեղվագույն, վերցրի երկտողն ու գնացի դեպի հին «աղախնասենյակը»,— այնտեղ, թասով աթոռակի մոտ, հնազանդ ինձ էր սպասում ամբողջապես սևեր հագած մի պառավ, պեպեններով ծածկված նիհար ձեռքին բռնած սափորով ջուր,— քայլելիս կարդացի. «Մի փորձեք այլևս ինձ տեսնել»,— և սկսեցի լվացվել: Ջուրը սառցասառն էր, կտրող. «Մեզ մոտ աղբյուրի ջուր է, ջրհորի»,— ասաց պառավն ու ինձ մեկնեց շատ երկար քաթանե սրբիչ: Ես արագ գնացի նախասենյակ, վերցրի գլխարկս ու մտրակը, շոգ բակով վազ տվեցի ախոռ... Չին, ինձ տեսնելով, կամացուկ և տխուր վրնջաց կիսամութից, նա այնպես էլ մնացել էր թամբը վրան, դատարկ մսուրքների դեմ, աճուկներն իրար սեղմած: Ես սանձերը ձեռքս առա, թռա թամբին, դեռևս մի տեսակ վայրի ոգևորությամբ զսպելով ինձ, և բակից դուրս սլացա: Կալվածքն անցնելով, կտրուկ թեքվեցի դեպի դաշտ, ձիս կանգնեցրի առաջին իսկ բարդոցի մոտ և, թամբից ցած պոկվելով, նստեցի նրա տակ: Չին աղմկում էր, ատամներով բռնելով ու իր կողմը քաշելով հասկի խրձեր, որոնցից թափվում էին ասես ապակյա հատիկները, հնձած արտում և խրձերի մեջ հազարավոր ժամացույցիկների նման տկտկալով վխտում էին մորեխները, ավազուտ անապատի նման շուրջբոլորը փռված էին բաց արտերը. ես ոչինչ չէի լսում, չէի տեսնում, մտովի շարունակ կրկնելով միայն մի բան. կամ նա կվերադարձնի ինձ իրեն, այս գիշերը, այս առավոտը, այդ բատիստե բոլորածալքերը, որ խշխշացին չոր խոտի մեջ արագ շարժվող նրա ոտքերից, կամ էլ երկուսս էլ կենդանի չենք մնա:

Այս խելագար զգացումներով, խելահեղորեն վստահ այդ զգացումներին, սլացա քաղաք:

4

Դրանից հետո ես երկար մնացի քաղաքում, օրերով նստում էի նրա հետ փոշոտ պարտեզում, որ նրա այրիացած հոր տան բակի խորքում էր. հայրը (անհոգ մարդ, ազատամիտ դոկտոր) նրան ոչ մի բանով չէր նեղում: Այն պահից, երբ Իստայից սլացա նրա մոտ, և երբ նա, տեսնելով իմ դեմքը, երկու ձեռները սեղմեց կրծքին, այլևս դժվար էր հասկանալ, թե ում սերն էր ավելի ուժգին դարձել, ավելի երջանիկ, ավելի անմիտ՝ իմը թե նրանը (նույնպես չգիտես երբ և ինչպես ծագած): Վերջապես, որպեսզի գոնե մի փոքր հնարավորություն տանք միմյանց հանգստանալու, որոշեցինք առժամանակ հեռանալ իրարից: Դա անհրաժեշտ էր, մանավանդ որ ապրելով Դվորյանսկայա հյուրանոցում, անվճարելի պարտքի մեջ էի ընկել: Ու նաև սկսվել էին անձրևներ: Ամեն կերպ ձգձգում էի մեր բաժանումը՝ ի վերջո ուժերս ժողովեցի և ճամփա ընկա հորդ անձրևի տակ: Տանը սկզբում շարունակ քնում էի, լուռ սենյակից սենյակ էի գնում, ոչ մի բան չանելով, ոչնչի մասին չմտածելով: Հետո սկսեցի մտահոգվել. ի՞նչ է կատարվում ինձ հետ և ինչով պիտի վերջանա այս ամենը: Մի անգամ եկավ եղբայրս՝ Նիկոլայը, մտավ իմ սենյակ, նստեց, առանց գլխարկը հանելու, և ասաց.

—Այսպես, ուրեմն, բարեկամս, քո ռոմանտիկական գոյությունը բարեհաջող կերպով շարունակվում է: Ամեն ինչ առաջվա պես է. «Տանում է ինձ աղվեսը մութ անտառներից այն կողմ, բարձր լեռներից այն կողմ», իսկ թե ինչ կա այդ անտառներից այն կողմ, լեռներից այն կողմ՝ հայտնի չէ: Ես ախր ամեն ինչ գիտեմ, շատ բան եմ լսել, մնացածը կռահում եմ՝ այդ բոլոր պատմությունները հո նույնն են: Գիտեմ նաև, որ հիմա դու ի վիճակի չես ողջամիտ լինելու: Բայց, այնուամենայնիվ, հետագա մտադրություններդ ի՞նչ են:

Պատասխանեցի կիսակատակ.

— Ամեն մեկին էլ մի աղվես տանում է: Թե ուր և ինչու, իհարկե, ոչ մեկին հայտնի չէ: Նույնիսկ Սուրբ գրքում գրված է. «Գնա, երիտասարդ, ջահելությամբ քո, ուր սիրտդ է քեզ քաշում և ուր աչքդ է կտրում»:

Եղբայրս լռեց՝ հայացքը ցած գցած, ասես ականջ դնելով աշնանային խղճուկ այգուն զարկող անձրևի շշունջը, հետո տխուր ասաց.

— Գնա, ուրեմն, գնա…

Շարունակ հարց էի տալիս ինքս ինձ. ի՞նչ անեմ: Պարզ էր, թե հենց ինչ պիտի անեմ: Սակայն որքան համառորեն էի փորձում ինքս ինձ ներշնչել, որ վաղն իսկ պետք է գրել վճռական, հրաժեշտի նամակը,— դա դեռ հնարավոր էր, վերջին մտերմությունը մեր մեջ դեռ չէր եղել,— այնքան ավելի համակում էր ինձ քնքշանքը նրա հանդեպ, հիացմունքը նրանով, ազնիվ գորովանքը իմ հանդեպ նրա սիրուց, նրա աչքերի, դեմքի, նրա ծիծաղի և ձայնի գեղեցկությունից... Իսկ մի քանի օր հետո, իրիկնամուտին, հանկարծ կալվածքի բակում հայտնվեց ձիավոր թղթատարը, ոտքից գլուխ թրջված, և մեկնեց ինձ թաց հեռագիրը. «Այլևս չեմ կարող, սպասում եմ»: Մինչև առավոտ աչքս չկարողացա կպցնել այն սարսափելի մտքից, որ մի քանի ժամ հետո տեսնելու եմ, լսելու եմ նրան…

Այդպես՝ մեկ տանը, մեկ քաղաքում անցկացրի ամբողջ աշունը: Ծախեցի թամբը, ձին, քաղաքում ապրում էի արդեն ոչ թե Դվորյանսկայա հյուրանոցում, այլ Շչեպնայա հրապարակում, Նիկուլինայի պանդոկում: Հիմա քաղաքն այլ էր, բոլորովին այն քաղաքը չէր, ուր անցել էին իմ պատանեկան տարիները: Ամեն ինչ հասարակ էր, առօրեական, երբեմն միայն, երբ Ուսպենսկայա փողոցով անցնում էի գիմնազիայի շենքի և այգու մոտով, կարծես ինչ-որ բան էի զգում — մի ժամանակ ապրած, հոգուս մոտ: Վաղուց արդեն ես ծխում էի, սափրվում վարսավիրանոցում, ուր մի ժամանակ նստում էի մանկական հնազանդությամբ աչքի տակով նայելով, թե ինչպես մկրատի անընդհատ չկչկոցի տակ հատակին են թափվում մետաքս մազերս: Մենք առավոտից իրիկուն նստում էինք սեղանատան թուրքական բազմոցին, գրեթե միշտ միայնության մեջ. բժիշկը առավոտից մեկնում էր տնից, գիմնազիստը՝ նրա եղբայրը, գնում էր գիմնազիա, նախաճաշից հետո բժիշկը քնում էր և նորից ինչ-որ տեղ մեկնում, իսկ գիմնազիստը զբաղված էր լինում կատաղի խաղով, վազվզոցի մեջ էր իր շեկ Վոլչոկի հետ, որը կեղծ գազազելով, հաչելով, շունչը կտրելով, փայտյա սանդուղքով վերուվար էր անում երկրորդ հարկ: Մի ժամանակ մեր այդ միօրինակ նստելը և միգուցե նաև իմ չափազանց, մշտական զգայնությունը ձանձրացրին նրան:

Նա սկսեց պատրվակներ փնտրել տնից դուրս գալու, ընկերուհիների, ծանոթների մոտ գնալու, և ես սկսեցի բազմոցին նստել մենակ, ականջ դնելով գիմնազիստի ոտների դոփյունին, ճիչերին, հռհռոցին և Վոլչոկի թատերական հաչոցին, որ վազվզում էր սանդուղքին, արցունքների միջով նայել կիսավարագուրված պատուհանից երևացող խաղաղ գոլորշավուն երկնքին, ծխախոտ ծխախոտի ետևից ծխելով... Հետո նորից ինչ-որ բան կատարվեց նրա հետ: Նորից սկսեց տանը մնալ, իմ նկատմամբ դարձավ այնքան քնքուշ ու բարի, որ այլևս բոլորովին չէի կարողանում հասկանալ, թե նա ինչ մարդ է: «Ինչ արած, սիրելիս,— ասաց ինձ մի անգամ,— լինելու բանը, երևի, լինում է» և, ուրախ դեմքը կնճռոտելով, լաց եղավ: Դա նախաճաշից հետո էր, երբ տանը բոլորը ման էին գալիս ոտքերի մատների վրա՝ բժշկի հանգիստը չխանգարելու համար: «Միայն հայրիկին եմ սարսափելի խղճում, ինձ համար աշխարհում նրանից թանկ մարդ չկա»,— ասաց, ինչպես միշտ, զարմացնելով ինձ հոր նկատմամբ տածած իր անսահման սիրով: Եվ, ասես դիտմամբ, նույն պահին վազ տվեց եկավ գիմնազիստը, մի տեսակ ցրված քթի տակ ասաց, որ բժիշկը խնդրում է ինձ իր մոտ: Լիկան գունատվեց: Ես համբուրեցի նրա ձեռքն ու գնացի հաստատուն քայլերով:

Բժիշկն ինձ դիմավորեց քունը լավ առած և քնից հետո նոր լվացված մարդու ուրախ սիրալիրությամբ, ինչ-որ եղանակ դնդնալով ու ծխելով:

— Երիտասարդ բարեկամս,— ասաց, ինձ ևս առաջարկելով ծխել,— վաղուց ուզում էի խոսել ձեզ հետ. հասկանում եք ինչի մասին: Ձեզ քաջ հայտնի է, որ ես նախապաշարումներից զերծ մարդ եմ: Սակայն ինձ համար թանկ է դստերս երջանկությունը, ի սրտե խղճում եմ և ձեզ, ուստի խոսենք բացեիբաց, ինչպես տղամարդը տղամարդու հետ: Որքան էլ դա տարօրինակ է, բայց ես ձեզ բոլորովին չեմ ճանաչում: Ասացեք՝ դուք ո՞վ եք,— ասաց նա ժպտալով:

Կարմրելով ու գունատվելով, սկսեցի ուժգնորեն ծխախոտս քաշել: Ո՞վ եմ ես: Ուզում էի պատասխանել հպարտությամբ, ինչպես Գյոթեն (նոր էի կարդացել Էքերմանին). «Ես ինքս ինձ չեմ ճանաչում, և աստված մի արասցե ճանաչեմ ինձ»: Սակայն ասացի համեստորեն.

— Դուք գիտեք, որ ես գրում եմ... Կշարունակեմ գրել, աշխատել, կատարելագործվել…

Եվ անսպասելիորեն ավելացրի.

— Թերևս պատրաստվեմ և համալսարան ընդունվեմ...

— Համալսարանն, իհարկե, շատ լավ է,— ասաց բժիշկը:— Սակայն ընդունվելու նախապատրաստվելը հեշտ բան չէ: Եվ ի՞նչ գործունեության հատկապես կուզեիք պատրաստվել: Միայն գրականությա՞ն, թե՞ հասարակական, պաշտոնական:

Եվ նորից անմտություն եկավ գլուխս՝ նորից Գյոթեն. «Ես ապրում եմ դարերի մեջ երկրային ամեն ինչի անտանելի անկայունության զգացումով… Քաղաքականությունը երբեք պոեզիայի գործ չի կարող լինել...»:

— Հասարակականությունը բանաստեղծի գործ չէ,— պատասխանեցի:

Բժիշկը ինձ նայեց թեթևակի զարմանքով:

— Ուրեմն, ձեր կարծիքով Նեկրասովն, օրինակ, բանաստեղծ չէ՞: Բայց դուք, համենայն դեպս, գոնե մի քիչ հետևո՞ւմ եք ընթացիկ հասարակական կյանքին, գիտե՞ք ներկա պահին ինչով է ապրում ամեն մի ազնիվ և կուլտուրական ռուս մարդ, ինչն է նրան հուզում:

Մտածեցի և պատկերացրի այն, ինչ գիտեի. բոլորը խոսում են ռեակցիայի մասին, զեմստվոյական պետերի մասին, որ «քարը քարի վրա չի մնացել մեծ ռեֆորմների դարաշրջանի բոլոր լավ ձեռնարկումներից», որ Տոլստոյը կոչ է անում «վանականի խուց մտնել»... որ ապրում ենք հիրավի չեխովյան «Մթնշաղում»... Հիշեցի Մարկոս Ավրելիոսի ասույթների գրքույկը, որ տարածում էին տոլստոյականները. «Վերնաճակատը սովորեցրեց ինձ, թե որքան դաժան են հոգիները մարդկանց, որ իրենց արիստոկրատ են հորջորջում...»: Հիշեցի տխուր ծեր խոխոլին, մի ինչ-որ աղանդավորի, որի հետ զարնանը նավարկում էի Դնեպրով, և որը շարունակ իր վերափոխությամբ կրկնում էր ինձ Պողոս առաքյալի խոսքերը. «Ու ասաց Տէր, ցՏէր իմ, նստիր ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց, ամեն իշխանությունեն, ուժեն, ու տերությունեն, ամեն անունեն վեր՝ հիմի, հետայսու, ու բողոքն է մեր դեմ ոչ արյան և մարմնի, բողոքն է դեմ պետերին, տիրակալներին մեր դարու խավարի...»: Մեջս արթնացավ իմ վաղուցվա ձգտումը տոլստոյականության, որ ազատում է ամեն տեսակի հասարակական կապանքներից և միաժամանակ ընդվզում՝ ինձ համար ևս ատելի «այս դարու խավարի տիրակալների» դեմ, ու սկսեցի տոլստոյականության քարոզ:

— Այնպես որ, ըստ ձեզ, միակ փրկությունը բոլոր տեսակի չարիքներից և աղետներից այդ տխրահռչակ չգործելու, չընդդիմանալու մե՞ջ է,— հարցրեց բժիշկը չափազանցված անտարբերությամբ:

Շտապեցի պատասխանել, որ ես կողմնակից եմ գործելու և ընդդիմանալու, «միայն բոլորովին այլ տեսակի»: Իմ տոլստոյականությունը գոյացել էր ուժեղ հակասական այն զգացումներից, որ իմ մեջ առաջացնում էին Պիեռ Բեզուխովը և Անատոլի Կուրագինը, իշխան Սերպուխովսկին և Իվան Իլյիչը, «Ուրեմն, ինչ պետք է անենք» և «Շա՞տ հող է արդյոք մարդուն պետք», քաղաքի կեղտի և աղքատության սարսափելի պատկերները՝ նկարագրված մոսկովյան մարդահամարի մասին հոդվածում, և բնության, ժողովրդի մեջ ապրելու բանաստեղծական երազանքները, որ իմ մեջ ստեղծում էին «Կազակները» և իմ սեփական տպավորությունները. որպիսի բախտավորություն՝ ոտներիցդ թափ տաս մեր ողջ մեղսական կյանքի փոշին և փոխարինես այն մաքուր, աշխատավոր կյանքով մի որևէ տափաստանային խուտորում, Դնեպրի ափին սպիտակ կավածեփ խրճիթում: Որոշ բաներ էլ հենց այս ամենից, բաց թողնելով, իհարկե, կավածեփ խրճիթը, ասացի բժշկին: Նա լսում էր ինձ, թվում էր, ուշադիր, բայց մի տեսակ խիստ զիջողամտորեն: Մի պահ քնատ ծանրացած աչքերը պղտորվեցին, հորանջի նոպայից ցնցվեցին պինդ սեղմված ծնոտները, սակայն նա իրեն հաղթահարեց, հորանջեց միայն քթածակերի միջով և ասաց.

— Այո, այո, ես լսում եմ ձեզ... Ուրեմն դուք ձեզ համար անձնապես ոչինչ չեք ուզում այս աշխարհի, այսպես ասած, սովորական բարիքներից: Բայց չէ որ գոյություն ունի ոչ միայն անձնական: Ես, օրինակ, բնավ հիացած չեմ ժողովրդով, դժբախտաբար լավ գիտեմ ժողովուրդ ասածի ինչ լինելը, թերահավատ եմ մեծապես, թե այն գերիմաստությունների ծով է, և որ ես պարտավոր եմ նրա հետ միասին երկիրը պահել իր հիմքերի վրա, բայց, այնուամենայնիվ, մի՞թե մենք ոչնչով պարտական չենք նրան, ոչ մի պարտավորություն չունենք նրա հանդեպ: Ասենք, չեմ համարձակվում ձեզ խրատ տալ այդ ուղղությամբ: Համենայն դեպս, շատ ուրախ եմ, որ զրուցեցինք: Հիմա անդրադառնամ նրան, ինչից սկսեցի: Կասեմ կարճ և, ներեցեք, միանգամայն հաստատապես: Ինչպիսի զգացմունքներ էլ որ լինեն ձեր և իմ դստեր միջև և զարգացման ինչ փուլում էլ որ դրանք լինեն, ուզում եմ ասած լինել նախապես. նա, իհարկե, միանգամայն ազատ է, սակայն եթե կամենա, օրինակ, իր կյանքը ձեզ հետ կապել որևէ հաստատուն կապով և եթե դրա համար խնդրի իմ, այսպես ասած, բարեմաղթությունը, ապա վճռական մերժում կստանա: Դուք ինձ շատ հաճելի եք, ցանկանում եմ ձեզ ամեն տեսակի բարիք, սակայն կլինի այդպես: Ինչո՞ւ: Կպատասխանեմ իսկական քաղքենու նման. չեմ ուզում ձեզ երկուսիդ տեսնել դժբախտ, կարիքի մեջ տառապող, անկայուն վիճակում գոյությունը քարշ տվող: Եվ հետո, թույլ տվեք արդեն բոլորովին անկեղծ լինել. ձեր մեջ ի՞նչ ընդհանուր բան կա: Գլիկերիան սիրունիկ աղջիկ է և, ինչու թաքցնենք, բավական փոփոխամիտ. այսօր մի բանով է հրապուրվում, վաղը մի այլ բանով, և, իհարկե, երազում է ոչ տոլստոյական վանախուց, մի տեսեք, թե ինչպես է հագնվում, չնայած մեր այս խուլ վայրին: Ես բնավ չեմ ուզում ասել, որ նա փչացած աղջիկ է, կարծում եմ միայն, որ նա, ինչպես ասում են, ձեզ հարմար չէ…

Լիկան սպասում էր ինձ սանդուղքի տակ, դիմավորեց հարցական և սարսափի պատրաստ աչքերով: Ես շտապով հաղորդեցի նրան բժշկի վերջին խոսքերը: Նա գլուխը կախ գցեց:

— Այո, ես երբեք նրա կամքին հակառակ չեմ գնա,— ասաց նա:

Նիկուլինայի պանդոկում ապրելով, հաճախ դուրս էի գալիս ու սկսում աննպատակ թափառել Շչեպնայա հրապարակում, հետո՝ վանքի ետևի ամայի դաշտերում, որտեղ հին պատերով պարսպված մեծ գերեզմանոց էր: Այնտեղ միայն քամին էր սուլում՝ տխրություն էր և ամայություն, հավերժական խաղաղություն բոլորի կողմից մոռացված, լքված խաչերի և գերեզմանաքարերի, ունայն մի բան, նման մենավոր, աղոտ մտքի ինչ-որ բանի մասին: Գերեզմանոցի դարպասի գլխին նկարված էր անծայրածիր գորշակապույտ հարթություն՝ ամբողջապես քանքնդված, լայն բացված գերեզմաններով, շեղ ընկած տապանաքարերով, նրանց տակից բարձրացող ատամնավոր և կողերը ցցված կմախքներով և հին, անհիշելի ժամանակների ծեր ճգնավորներով ու պառավ կույսերով՝ բաց կանաչավուն սավանների մեջ փաթաթված: Եվ մի հսկա հրեշտակ փողը բերանի մոտ սավառնում էր, փչում փողը այդ հարթության վրա, շերտ-շերտ ծածանելով իր բաց կապույտ զգեստները, մերկ աղջկական ծնկները ծալած, ետևում բարձրացրած երկար սպիտակ ոտնաթաթերը... Պանդոկում էլ աշնանային գավառական կյանք էր, նույնպես դատարկություն, գյուղերից գրեթե եկող չէր լինում: Վերադառնում էի, մտնում բակ. բակի ծածկերի տակից դեմս է դուրս գալիս ճաշ եփող պառավը, տղամարդու սաստգներով, ձեռքին աքաղաղը. «Ըհը, տուն եմ տանում,— ասում է նա, չգիտես ինչու ծիծաղելով,— պառավելուց խելքը լրիվ զցել է, հիմի իմ կողքին պիտի ապրի...»: Բարձրանում էի լայն քարե առմուտքին, անցնում մութ միջանցքով, հետո տաք խոհանոցով, մտնում վերնասենյակները՝ այնտեղ տանտիրուհու ննջասենյակն էր և այն սենյակը, ուր երկու մեծ բազմոց էր դրված, որոնց վրա քնում էին հազվադեպ եկվորները՝ քաղքենիներից և հոգևորականությունից, իսկ առավել հաճախ՝ միայն ես: Լռություն. լռության մեջ զարթուցիչի համաչափ վազքը տանտիրուհու սենյակում... «Զբոսնեցի՞ք»,— սիրալիր, զիջողամտության անուշ ժպիտով հարցնում է տանտիրուհին՝ դուրս գալով իր սենյակից: Ինչպիսի հմայիչ, ներդաշնակ ձայն: Նա գիրուկ էր, կլորերես: Երբեմն չէի կարողանում հանգիստ նայել նրան, մանավանդ այն երեկոները, երբ ամբողջապես վարդագունած վերադառնում էր բաղնիքից և երկար թեյ էր խմում, նստում դեռ մուգ, խոնավ մազերով, աչքերի մեջ մեղմ, քնքշանվաղ մի փայլ, սպիտակ գիշերանոցով մաքուր մարմինը բազմոցի մեջ հանգիստ ու ազատ մեկնած, իսկ նրա սիրելի վարդագույն աչքերով փափկամազ-սպիտակ կատուն մռռացնում էր տիրուհու գիրուկ, մի քիչ իրարից հեռու դրած ծնկներին բազմած: Դրսից թխկոց էր լսվում. խոհարարուհին դրսից ամրացնում էր ամուր փակոցափեղկերը, չխկչխկացնելով ու պատուհանների կողքերի անցքերից դեպի սենյակ մտցնելով ծնկավոր փակոցների երկաթյա առանցքացցերը, որ հիշեցնում էին անցած-գնացած վտանգներով լի ժամանակները: Նիկուլինան վեր էր կենում, փակոցների ծայրի անցքերի մեջ երկաթյա սեպիկներ էր խրում, և նորից շարունակում էր թեյ խմել, ու սենյակը դառնում էր է՛լ ավելի հաճելի ու հարմարավետ... Վայրենի մտքեր ու զգացումներ էին արթնանում այդ ժամանակ մեջս. թողնեմ, ահա, ամեն ինչ և ընդմիշտ մնամ այստեղ, այս պանդոկում, քնեմ նրա տաք ննջասենյակում, զարթուցիչի համաչափ վազքի տակ: Բազմոցներից մեկի գլխին նկար էր կախված. զարմանալիորեն կանաչ անտառ, որ կանգնած էր հոծ պատի նման, տակը գերանե խրճիթ, իսկ խրճիթի կողքին հլու կուչ եկած մի ծերուկ, ձեռքը դրած գորշ արջի գլխին, նույնպես հլու-հնազանդ, փափկաթաթիկ. մյուս բազմոցի գլխին կախված էր մի բոլորովին անհեթեթ բան յուրաքանչյուրի համար, ով պետք է պառկեր կամ նստեր դրա տակ,— դագաղի մեջ պառկած ծերունի՝ պատկառելի, սպիտակամաշկ, սև սերթուկով,— Նիկուլինայի հանգուցյալ ամուսնու լուսանկարը: Խոհանոցից երկար աշնանային երեկոյին ներդաշնակ լսվում էր թխկոց և ծորուն երգաձայն. «Եկեղեցու մոտ կառք էր կանգնած, ճոխ հարսանիք էր այնտեղ...»— երգում ու սուր մանրիչով ձմռան համար պինդ կաղամբներ էին կտրատում օրավարձու աշխատող աղջիկները: Եվ այդ ամենի մեջ՝ քաղքենիական այդ երգի, տնային համաչափ թխկոցի, հին անճաշակ, անարվեստ նկարի, նույնիսկ հանգուցյալի մեջ, որի կյանքը ասես դեռ շարունակվում էր պանդոկի այդ անհեթեթ-երջանիկ կեցության մեջ, կար մի տեսակ քաղցր ու դառն տխրություն...

6

Նոյեմբերին մեկնեցի տուն: Հրաժեշտ տալով, պայմանավորվեցինք հանդիպել Օրյոլում: Նա այնտեղ կմեկնի դեկտեմբերի մեկին, իսկ ես, հանուն պատշաճության, գոնե մի շաբաթ հետո: Սակայն մեկին, սառնամանիք լուսնկա գիշերով սլացա Պիսարևո, որպեսզի նստեմ հենց այն գիշերային գնացքը, որով նա պետք է մեկներ քաղաքից: Ինչպե՜ս եմ տեսնում, ինչպես զգում եմ այդ հեքիաթային-դյութիչ գիշերը: Տեսնում եմ ինձ կեսճանապարհին Բատուրինոյի և Վասիլևսկոյի միջև, հարթ ձյունածածկ դաշտում: Ձույգ ձիերը սլանում են, քեղաձին ասես նույն տեղում լծաղեղն է թափահարում, սլանում խոշոր վարգով, կառքից լծվածը վեր-վեր է նետում հետևը, հետևի սպիտակ-փայլուն պայտերով վեր ու վեր թռցնում ձնագնդիկներ... մեկ էլ հանկարծ պոկվում է ճամփից, խրվում խոր ձյան մեջ կախ ընկած լծափոկերի հետ, հետո նորից պինդ դուրս է թռչում և նորից սլանում է, ամուր ձգում փոկափայտը... Ամեն ինչ թռչում է, շտապում և միաժամանակ ասես կանգնած է ու սպասում է. լուսնի տակ անշարժ արծաթափայլին է տալիս թեփուկավոր սառած ձյունաշերտը, անշարժ սպիտակին է տալիս և սառնամանիքից պղտոր լուսինը՝ լայնորեն ու միստիկական-մռայլ շրջապատված ծիածանա-թխպային օղակով, և ամենաանշարժը՝ ես, քարացած այս սլացքի և անշարժության մեջ, հնազանդ դրան առժամանակ և, միաժամանակ, խորասուզված մի հիշողության մեջ. ահա ճիշտ նույնպիսի գիշեր և նույնպիսի ճանապարհ դեպի Վասիլևսկոյե, միայն թե դա իմ առաջին ձմեռն էր Բատուրինոյում և ես դեռ մաքուր էի, անմեղ, զվարթ՝ պատանեկության առաջին օրերի զվարթությամբ, բանաստեղծական առաջին հափշտակությամբ Վասիլևսկոյեից բերված այս հին հատորիկների, նրանց ոտանավորների, ուղերձների, էլեգիաների, բալլադների աշխարհով.

Սլանում են: Ամայություն է ամենուր:
Եվ տափաստան Սվետլանայի աչքերում…

«Ուր է հիմա այդ ամենը»— մտածում եմ, սակայն մի պահ անգամ դուրս չգալով իմ հիմնական վիճակից՝ քարացած, սպասողական: «Սլանում են, ամայություն է ամենուր»,— կրկնում եմ ինքս ինձ իմ սլացքին ներդաշնակ (համաչափ շարժմանը, որ միշտ ինձ վրա կախարդական ազդեցություն է ունենում) և զգում եմ մեջս մեկին՝ քաջ, հին ու հին ժամանակների, բարձրադիր զինվորական գլխարկով և արջի մորթուց մուշտակով, որ ինչ-որ տեղ էր սլանում, իսկ իրականության մասին ինձ հիշեցնում է միայն ձնակոլոլ մշակն առաջքին կանգնած, կիսամուշտակի վրայից գյուղացու երկար վերնազգեստով, մեկ էլ ձյունափոշիով ծածկված սառը, բուրավետ վարսակի հարդը, որ լցված էր առաջքի տակ իմ սառած ոտքերին... Վասիլևսկոյեն անցնելուց հետո հարթալանջի դարուփոսերին քեղաձին ընկավ և ջարդեց քեղին. ամբողջ ժամանակ, մինչ մշակն այն կամրացներ, սարսափում էի, որ կուշանամ գնացքից: Տեղ հասնելով, անմիջապես մոտս եղած վերջին փողով գնեցի առաջին կարգի տոմս,— նա միշտ առաջին կարգով էր մեկնում,— և նետվեցի կառամատույց: Հիշում եմ սառնամանիքի գոլորշիներից պղտոր լուսնի լույսը, որի մեջ կորչում էր կառամատույցի լապտերների և հեռագրատան լուսավորված պատուհանների լույսը: Գնացքն արդեն մոտենում էր, նայում էի պղտոր ձյունե հեռուն՝ զգալով ինձ մի տեսակ ապակիացած սառնամանիքից և մեջս եղած սառը դողից: Անսպասելի և ուժեղ հնչեց զանգը, ճղճղացին և աղմուկով բացվեցին փակվեցին դռները, պինդ ու հնչեղ ճռճռացին կայարանից դուրս եկողների արագ քայլերը, և ահա մի տեսակ փրչոտ սևին տվեց հեռվում շոգեքարշը, երևաց նրա ծանր շնչառության տակ դանդաղ շարժվող պղտոր-կարմիր լույսերի սարսափելի եռանկյունին... Գնացքը մոտեցավ դժվարությամբ, ամբողջապես ձյունածածկ, սառած, ճղճղալով, ճռռալով, տնքալով... Ես վեր թռա վագոնի միջանցք, բացեցի դուռը. նա մուշտակն ուսերին գցած նստած էր կիսամութի մեջ, բալեգույն վարագուրված լապտերի տակ, միայնակ ամբողջ վագոնում, հայացքն ուղիղ ինձ…

Վագոնը հին էր, բարձր, երեք զույգ անիվների վրա. արագ շարժումից, սառնամանիքից այն անմողջապես դղրդում էր, շարունակ ասես ընկնում, գլորվում ինչ-որ տեղ, ճռճռացնում դռներն ու պատերը, սառած ապակիները փայլփլում էին մոխրագույն ադամանդափայլով... Մենք արդեն հեռու-հեռվում էինք, կեսգիշեր էր... Ամեն ինչ կատարվեց մի տեսակ ինքնին, մեր կամքից, մեր գիտակցությունից դուրս... Նա տեղից վեր կացավ վառվող, ոչինչ չտեսնող դեմքով, ուղղեց մազերն ու փակելով աչքերը, անմատչելի նստեց անկյունում...

7

Ձմռանը ապրեցինք Օրյոլում:

Ինչպես արտահայտեմ, թե ինչ էինք զգում մենք, երբ առավոտյան դուրս եկանք վագոնից, գնացինք խմբագրություն, թաքուն միացած այս նոր, զարհուրելի մտերմությամբ:

Ես տեղավորվեցի փոքրիկ հյուրանոցում, նա՝ առաջվա պես Ավիլովայի մոտ: Այնտեղ էինք անցկացնում մեր գրեթե ամբողջ օրը, իսկ նվիրական ժամերը՝ այդ հյուրանոցում:

Դա դժվար երջանկություն էր, ուժասպառող և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես:

Հիշում եմ, մի անգամ երեկոյան նա գնացել էր սահադաշտ, ես նստել պարապում էի խմբագրությունում,— այնտեղ ինձ սկսել էին արդեն որոշ աշխատանք տալ, որոշ վաստակ,— տունը լուռ և դատարկ էր, Ավիլովան մեկնել էր ինչ-որ հավաքույթի, երեկոն թվում էր անվերջանալի, պատուհանից դուրս փողոցում վառվող լապտերը թվում էր տխուր, անտեղի, անցորդների մոտեցող և հեռացող քայլերը, նրանց ճռճռոցը ձյան վրա, ասես ինձնից խլում-տանում էին ինչ-որ բան: Սիրտս տառապում էր կարոտից, վիրավորանքից, խանդից. ահա ես նստել եմ այստեղ մենակ, մի հիմար, ինձ ոչ արժանի գործ եմ անում, որն անելու աստիճանի նվաստացրել եմ ինձ հանուն նրա, իսկ նա այնտեղ, այն սառցե լճակում, եզերված սև եղևնիներով ծածկված սպիտակ ձնաբլուրներով, ողողված զինվորական նվագախմբի դղրդացող երաժշտությամբ ու մանիշակագույն գազալույսով, սահող մարդկային սև կերպարանքներով, նա այնտեղ ուրախ է... Հանկարծ լսվեց զանգը և արագ ներս մտավ նա: Հագին մոխրագույն կոստյում էր, մոխրագույն սկյուռի մորթուց գլխարկ, ձեռքին փայլուն չմուշկները, և միանգամից սենյակում ամեն ինչ լցվեց նրա ուրախ սառնամանիքաշունչ երիտասարդ թարմությամբ, ցրտից ու շարժումից վարդագունած գեղեցկությամբ: «Օհ,— ասաց նա,— հոգնել եմ»,— և մտավ իր սենյակ: Գնացի ետևից, նա փլվեց բազմոցին, ետ ընկավ ուժասպառության քմծիծաղը դեմքին, շարունակելով ձեռքին պահել չմուշկները: Տանջալից և արդեն սովորական դարձած զգացումով նայում էի նրա բարձր քուղակապ ոտնաթմբիկին, նրա ոտքին մոխրագույն գուլպայի մեջ, որ երևում էր մոխրագույն կարճ փեշի տակից,— այդ հաստ բրդյա կտորն անգամ տենչալի տառապեցնում էր ինձ,— սկսեցի կշտամբել՝ չէ որ չէինք հանդիպել ամբողջ օրը,— հետո հանկարծ քնքշանքի ու խղճահարության մի սուր զգացումով տեսա, որ քնած է... Արթնանալով, նա մեղմ և տխրորեն պատասխանեց. «Գրեթե ամեն ինչ լսեցի: Մի բարկացիր, ես չափազանց եմ հոգնել: Չէ որ այս մի տարվա ընթացքում շա՜տ, շա՜տ տառապեցի»:

8

Օրյոլում ապրելու համար պատրվակ գտնելու նպատակով նա սկսեց երաժշտություն սովորել: Ես նույնպես պատրվակ գտա՝ «Գոլոսում» աշխատանք: Առաջին շրջանում դա ինձ նույնիսկ ուրախացնում էր, ուրախացնում էր գոնե որոշ կանոնավորությունը, որ տեղ գտավ իմ գոյության

մեջ, հանգստացնում էր որոշ պարտադրականությունը, որ մտավ իմ որևէ պարտավորությունից զուրկ կյանք: Հետո ավելի ու ավելի հաճախ սկսեց մտքովս անցնել. արդյոք այդպիսի՞ կյանք էի ես երազում: Ես հիմա, միգուցե, իմ կյանքի ամենալավ շրջանն եմ ապրում, երբ ամբողջ աշխարհի տեր պետք է լինեի, մինչդեռ մի զույգ կրկնակոշիկի տեր էլ չեմ: Դա միայն առա՞յժմ, հիմա՞: Լավ, իսկ ի՞նչ է սպասվում առջևում: Ինձ սկսել էր թվալ, որ մեր մտերմության, մեր զգացումների, մտքերի, ճաշակի, որ կնշանակի նաև դրանց իսկության մեջ ամեն բան չէ, որ ներդաշնակ է. այդ «երազանքի և իրականության մշտական բախումը», սիրո լիակատարության և ամբողջականության հավերժական անհիրականալիությունը այդ ձմեռ ինձ սարսափելի տառապեցնում էր լինելով նոր մի զգացում ինձ համար և, թվում էր, ահավոր անօրինական իմ նկատմամբ:

Ամենից ավելի տառապում էի նրա հետ պարահանդեսներում, հյուր լինելիս: Երբ նա պարում էր որևէ մեկի հետ, որ գեղեցիկ էր, ճարպիկ, և ես տեսնում էի նրա հաճույքը, աշխուժությունը, նրա փեշի և ոտքերի արագ երևալն ու անհետանալը, երաժշտությունը ցավով զարկում էր սրտիս իր կայտառ հնչեղությամբ, վալսերով արցունք էր բերում աչքերիցս: Բոլորը հիանում էին, երբ նա պարում էր Տուրչանովի հետ՝ այն անբնականորեն բարձրահասակ սպայի հետ՝ երկարավուն գունատ-թուխ դեմքով, սև կիսայտամորուքներով, անշարժ սև աչքերով: Լիկան բավական բարձրահասակ էր, բայց սպան երկու գլխով բարձր էր նրանից, և կիպ գրկած սահուն, երկար պտտելով նրան, մի տեսակ համառորեն նայում էր նրան վերից վար, իսկ Լիկայի նրան դարձրած դեմքին կար երջանիկ և դժբախտ, գեղեցիկ և միաժամանակ ինձ համար չափազանց ատելի մի բան: Ինչպես էի ես այն ժամանակ աղերսում աստծուն, որ աներևակայելի մի բան պատահի, որ նա հանկարծ կռանա և համբուրի նրան ու դրանով իսկ հաստատի իմ ծանր ենթադրությունները, վերջ դնի սրտիս նվաղումներին:

— Դու միայն քո մասին ես մտածում, ուզում ես, որ ամեն բան քո ուզածով լինի,— ասաց նա մի անգամ:— Դու երևի ուրախությամբ կզրկեիր ինձ որևէ անձնական կյանքից, հասարակությունից, ինձ կհեռացնեիր բոլորից, ինչպես հեռացնում ես քեզ…

Եվ իսկապես. ասես թաքուն մի օրենքով, որ պահանջում է ամեն սիրո մեջ, հատկապես կնոջ նկատմամբ սիրո մեջ մտնի նաև խղճահարություն, կարեկցական քնքշանքի զգացում, ես դաժանորեն չէի սիրում,— հատկապես մարդկանց մեջ,— նրա ուրախության, աշխուժության, դուր գալու, փայլելու ցանկության պահերը, և ջերմորեն սիրում էի նրա պարզությունը, լռությունը, հեզությունը, անօգնականությունը, արցունքները, որից անմիջապես մանկականորեն ուռչում էին նրա շրթունքները: Հասարակության մեջ ես իրոք մեծ մասամբ ինձ պահում էի օտար, ոչ բարի դիտողի նման, հոգուս խորքում նույնիսկ ուրախանալով իմ այդ օտարացածությանը, անբարյացակամությանը, որ խիստ սրում էր իմ զգայնությունը, սրատեսությունը, խորաթափանցությունը մարդկային ամեն տեսակ թերությունների հանդեպ: Բայց և ինչպե՜ս էի տենչում նրա մտերմությունը, ինչպե՜ս էի տանջվում՝ չհասնելով դրան:

Հաճախ բանաստեղծություններ էի կարդում նրա համար:

— Լսիր. սա սքանչելի է,— բացականչում էի ես:— «Տար հոգիս իմ ղողանջող այն հեռուն, ուր թախիծ է լուսնի լույսի նման»:

Սակայն նա զմայլանք չէր զգում:

—Այո, շատ լավ է,— ասում էր նա հարմար պառկած բազմոցին, երկու ձեռքերը գլխի տակ, նայելով ինձ աչքի պոչով, հանդարտ և անտարբեր:— Բայց ինչո՞ւ «լուսնի լույսի նման»: Դա ֆե՞տն է: Նրա մոտ ընդհանրապես բնության նկարագրությունները չափազանց շատ են:

Ես վրդովվում էի՝ նկարագրությունն՝ր, սկսում էի ապացուցել, որ գոյություն չունի բնություն մեզնից անջատ, որ օդի յուրաքանչյուր, ամենաչնչին իսկ շարժումը մեր սեփական կյանքի շարժումն է: Նա ծիծաղում էր.

— Սիրելիս, սարդերն են միայն այդպես ապրում:

Ես կարդում էի.

Թախիծ, տխրություն: Ծառուղու եզրը
Նորից ծածկվեց ձյունափոշով,
Նորից արծաթափայլ օձեր
Օղակեցին թմբերը ձյունե…

Նա հարցնում էր.

— Ի՞նչ օձեր:

Եվ պետք էր բացատրել, որ դա ձյունահողմն է, ձյունամրրիկը: Ես գունատվելով կարդում էի.

Սառնամանիք զիշերը նայում է պղտոր

Ծածկասայլիս խսիրի տակ…

Եվ հեռվում ծխի մեջ ամպերի,

Լույս է տալիս ուրվականը լուսնի…

— Սիրելիս,— ասում էր նա,— բայց ես երբեք ոչ մի այդպիսի բան չեմ տեսել:

Կարդում էի արդեն թաքուն կշտամբանքով.

Արևի շողը սև ամպի միջից ցոլում էր, այրում,

Նստարանի մոտ դու խզմզում էիր ավազին փայլուն…

Նա լսում էր հավանություն տալով, սակայն հավանաբար նրա համար միայն, որ պատկերացնում էր, թե ինքն է նստած խզմզում ավազի վրա իր սիրունիկ հովանոցով:

— Սա իսկապես գեղեցիկ է,— ասում էր նա։— Բայց բավական է բանաստեղծություն կարդաս, արի ինձ մոտ… Շարունակ դժգոհ ես ինձնից:

Ես հաճախ պատմում էի նրան իմ մանկության, վաղ պատանեկության մասին, մեր դաստակերտի բանաստեղծական գեղեցկության մասին, մորս, հորս, քրոջս մասին, նա լսում էր անողոք անտարբերությամբ: Ես նրանից տխրություն, կարեկցանք էի սպասում՝ պատմելով, թե երբեմն ինչպիսի աղքատության մեջ էր ընկնում մեր ընտանիքը. այն մասին, օրինակ, թե ինչպես մի անգամ, մեր բոլոր սրբապատկերների հնագույն մակադրվագները հանեցինք և տարանք քաղաք գրավ դնելու Մեշչերինովայի մոտ, սարսափելի արևելյան տեսքի այդ միայնակ պառավի՝ կորաքիթ, բեղավոր, ակնասպիտակուցները չռված, մետաքս ու շալի մեջ, մատները մատանիների մեջ կորած, որի թանգարանային իրերով լցված ամայի տանը ամբողջ օրը վայրի ու մեռած ձայնով ճչում էր թութակը. և ի՞նչ տեսա տխրության ու կարեկցանքի փոխարեն:

— Այո, դա սարսափելի է, — անուշադիր ասաց նա:

Որքան երկար էի ապրում քաղաքում, այնքան ինձ ավելի ավելորդ էի զգում այնտեղ. նույնիսկ Ավիլովան չգիտես ինչու փոխվել էր իմ նկատմամբ, դարձել էր չար, ծաղրական. որքան ավելի անուրախ ու ձանձրալի էր դառնում իմ քաղաքային կյանքը, այնքան ավելի ձգտում էի լինել նրա հետ միայնակ՝ մի բան կարդալ, պատմել, սիրտս բանալ: Հյուրանոցի իմ սենյակը նեղլիկ էր, գորշ. սարսափելի խղճում էի ինձ՝ խղճում ճամպրուկիս ու մի քանի գրքիկների համար, որ իմ ամբողջ հարստությունն էր կազմում, միայնակ գիշերների համար, որ այնքան աղքատ ու ցուրտ ոչ թե քնում, այլ ավելի շուտ հաղթահարում էի այդ սենյակում, շարունակ քնի մեջ սպասելով լուսաբացին, հարևան զանգակատան առաջին սառնամանիքային, ձմեռային ղողանջին: Նրա սենյակում նույնպես նեղվածք էր, նա ապրում էր միջանցքի ծայրին, կիսավերնահարկ տանող սանդուղքի մոտ, սակայն պատուհանները նայում էին այգուն, սենյակը տաք էր և գեղեցիկ կահավորված. մթնշաղին այնտեղ վառարան էր վառվում, իսկ ինքը գիտեր բազմոցի բարձիկներին պառկել զարմանալիորեն հաճելի, մի տեսակ կուչ եկած և տակը քաշած իր շատ գեղեցիկ կանացի կոշիկները: Ես ասում էի.

Ռոնում էր բուքը կեսգիշերի

Անտառածածկ խուլ այդ վայրում,

Նստել էինք լուռ մենք դեմ-դիմաց,

Խռիվն էր կրակին ճարճատում…

Սակայն բոլոր այս բուքերը, անտառները, դաշտերը, հարմարավետության, կայարանի, կրակի բոլոր այս բանաստեղծական-վայրի ուրախությունները հատկապես խորթ էին նրա համար:

Երկար ժամանակ կարծում էի, որ բավական է նրան ասեմ. «Գիտե՞ս դու աշնանային հարթացած այս ճամփաները, մանիշակագույն ռետինի նման պինդ, պայտերի մեխերից ծածկված, որ փայլում են ցած արևի տակ կուրացուցիչ ոսկե գոտու նման», որպեսզի նրա մեջ հիացմունք առաջացնեմ: Պատմեցի նրան, թե ինչպես մի անգամ Գեորգի եղբորս հետ ուշ աշնանը գնացել էի կեչու փայտ գնելու. մեր խոհանոցի առաստաղը հանկարծ փլվել էր և քիչ էր մնացել սպանի զառամյալ ծերուկին, մեր նախկին խոհարարին, որ միշտ պառկած էր խոհանոցի վառարանին, և ահա մենք գնացինք անտառ կեչու փայտ գնելու կոճի համար: Անդադար անձրևներ էին (մանրակաթիլ, արևի շողերի միջից արագ մաղվող), մենք գյուղացիների հետ սայլով արագ սլանում էինք նախ մեծ ճանապարհով, հետո անտառապուրակով, որ իր դեռևս կանաչ, բայց արդեն մեռյալ և ջրածածկ բացատներով կանգնած էր զարմանալիորեն ազատ, գեղեցիկ և հնազանդ այդ մանրակաթիլ անձրևի և արևի փայլփլոցի մեջ… Ես ասում էի, թե որքան անտանելի խղճում էի այդ լայնատարած կեչուն, վերից վար ծածկված մանր ժանգագույն տերևներով, երբ գյուղացիները ծուռթաթ և կոպիտ պտտվեցին ծառի շուրջ, նայեցին ամեն կողմից և հետո թքոտելով իրենց սպիածածկ, գազանի թաթերին, ձեռներն առան կացինները և բոլորը միասին խփեցին ծառի սպիտակից ու սևից խայտաբղետ բնին… «Չես կարող պատկերացնել, թե ինչ սարսափելիորեն թաց էր շուրջն ամեն ինչ, ինչպես էր ամեն բան փայլում, փայլփլում»,— ասում էի ես և ավարտեցի խոստովանությամբ, որ մտադիր եմ պատմվածք գրել այդ մասին: Նա ուսերը թոթվեց.

—Էհ, սիրելիս, ախր այդտեղ գրելու բան չկա: Ի՞նչ իմաստ, շարունակ եղանակ նկարագրել:

Ամենաբարդ և տառապալից հաճույքներից մեկն ինձ համար երաժշտությունն էր: Երբ նա որևէ գեղեցիկ բան էր նվագում, ինչպե՜ս էի նրան սիրում: Ինչպե՜ս էր հոգիս ուժասպառվում նրա

նկատմամբ զգացած հիացական-ինքնազոհ քնքշանքից: Ինչպես էի ուզում ապրել երկար, երկար: Հաճախ մտածում էի, լսում. «Եթե մենք երբևէ բաժանվենք, ինչպես պետք է սա լսեմ առանց նրա: Ինչպես պետք է սիրեմ ընդհանրապես որևէ բան, ուրախանամ որևէ բանի համար, եթե նրա հետ չեմ բաժանելու այդ սերը, ուրախությունը»: Սակայն այն ամենում, ինչ ինձ դուր չէր գալիս, այնքան խիստ էի իմ դատողությունների մեջ, որ նա չէր կարողանում իրեն զսպել:

—Նադյա,— ձայն էր տալիս նա Ավիլովային, ստեղները թողնելով և դառնալով դեպի կողքի սենյակը:— Նադյա, մի լսիր, թե սա ինչ է դուրս տալիս:

— Եվ դուրս կտամ,— բացականչում էի ես:— Այո, սոնատներից յուրաքանչյուրի երեք քառորդը գռեհկություն է, աղմուկ, խառնաշփոթ: Ա՜հ, այստեղ լսվում է գերեզմանի բահի դխկոց: Ա՜հ, այստեղ դիցանուշներն են մարգագետնում պտտվում, իսկ այստեղ աղմկում են ջրվեժները: Այդ դիցանուշը իմ ամենաատելի բառերից մեկն է: Լրագրային «հղի» բառից ավելի:

Նա խոսում էր թատրոնի հանդեպ իր մեծ սիրո մասին, իսկ ես ատում էի թատրոնը, գնալով ավելի համոզվում, որ դերասանների և դերասանուհիների մեծ մասի տաղանդավորությունը, ըստ էության, սոսկ մյուսների համեմատությամբ նրանց ավելի կարողությունն է լինելու տափակ, ճղճիմ, ամենագռեհիկ օրինակով առավել լավ ձևանալու ստեղծագործողներ, արվեստագետներ: Բոլոր այդ խնամախոս կնիկները սոխի գույնի մետաքսե գլխաշորերով և թուրքական շալերով, որ ստորաքարշ ծամածռություններով և քաղցր-մեղցր ձայնով ծռմռվում են Տիտ Տիտիչների առջև, որ մշտական հպարտ ծանրաբարո տեսքով կանգնում են գլուխները ետ գցած և անպայմանորեն չռված մատներով ձախ ձեռքը դրած սրտին, երկարփեշ սերթուկի կողքի գրպանին, այդ խոզանման քաղաքապետները և թեթևսոլիկ Խլեստակովները, մռայլ և որովայնաձայն խոռացնող Օսիպները, գարշելի Ռեպետիլովները, ցուցամոլաբար վրդովվող Չացկիները, այդ Ֆամուսովները, մատանիները խաղացնելով և չաղլիկ, սալորանման, դերասանական շրթունքներն ուռցնելով, այդ Համլետները ջահակիրների թիկնոցներով, գանգուր փետրավոր գլխարկներով, ներկով քնքշանվաղ-անառակ դարձված աչքերով, սև-թավշյա ազդրերով և պլեբեյական տափակ ոտնաթաթերով. այդ ամենից ես ուղղակի սարսռում էի: Հապա օպերա՜ն: Ռիգոլետտոն, երեք տակ ծալծլված, ոտքերը մեկընդմիշտ իրարից հեռու չռած և բնական բոլոր օրենքներին հակառակ ծնկների մոտ իրար կապված: Սուսանինը՝ մեռելային և երանելի աչքերը երկինք գցած և դղրդյուններով դուրս բերելով. «Դու կծագես, ո՜վ իմ արշալույս», «Ջրահարսի» ջրաղացպանը ոստերի պես նիհար, դողդողացող ձեռքերը խելահեղ ու սարսափազդու տարածած, մատին էլ նշանի մատանին, որ չի հանել, և այնպիսի ցնցոտիների մեջ, քրքրված, ծվեն-ծվեն վարտիքով, ասես մի ամբողջ ռիմակ կատաղած շներ են դրան քրքրել: Թատրոնի մասին վեճերում մենք երբեք ոչ մի համաձայնության չէինք գալիս. կորցնում էինք զիջելու, իրար հասկանալու ամեն մի ունակություն: Գավառական հռչակավոր դերասանը հյուրախաղերի է Օրյոլում, ահա խաղում է «Խելագարի հիշատակարանում», և բոլորը եռանդով հետևում են, հիանում, ինչպես նա հիվանդանոցի մահճակալին նստած, խալաթով, չափն անց չսափրված կնկա դեմքով՝ երկար, տանջալից երկար լռում է անշարժացած մի տեսակ ապուշային ուրախ և շարունակ սաստկացող զարմանքով, հետո կամացուկ, կամացուկ բարձրացնում է մատը և վերջապես, չափազանց դանդաղ, անտանելի արտահայտչությամբ գազանաբար ծնոտը դուրս ծռելով սկսում է վանկ առ վանկ «Այս օրվա...»: Ահա հաջորդ օրը նա է՛լ ավելի հոյակապ ձևանում է Լյուբիմ Տորցով, իսկ մյուս օրը՝ կապտաքիթ, ճարպոտած-կեղտոտ Մարմելադով. «Կարո՞ղ եմ համարձակվել, ողորմած իմ տեր, դիմելու ձեզ պատշաճ մի զրույցով»: Ահա նշանավոր դերասանուհին բեմում նամակ է գրում՝ հանկարծ վճռել է գրել ճակատագրական մի բան և, արագ նստելով սեղանի մոտ, չոր փետուրը մտցնում է չոր թանաքամանի մեջ և մի վայրկյանում երեք երկար գիծ է քաշում թղթի վրա, դնում է այն ծրարի մեջ, զնգացնում է զանգակը և կարճ ու չոր հրամայում է սպիտակ գոգնոցով սիրունիկ սպասուհուն.

«Անմիջապես ուղարկեցեք այս թղթատարի հետ»: Ամեն անգամ թատրոնում անցկացրած այսպիսի երեկոյից հետո մենք գոռգոռում ենք իրար վրա մինչև գիշերվա երեքը, Ավիլովային էլ թույլ չտալով քնել, և ես անիծում էի արդեն ոչ միայն գոգոլյան խելագարին, Տորցովին և Մարմելադովին, այլև Գոգոլին, Օստրովսկուն, Դոստոևսկուն…

— Լավ, ասենք դուք իրավացի եք,— բղավում էր նա արդեն գունատված, մթնած աչքերով, որից և առանձնապես գեղեցիկ էր դառնում,— բայց ինչո՞ւ եք այդպես կատաղում: Նադյա, հարցրու նրան:

— Նրա համար,— բղավում էի ի պատասխան,— հենց միայն այն բանի համար, որ դերասանը «բուրմունք» բառը «բո՛ւր-մո՛ւնք» է արտասանում, ես պատրաստ եմ խեղդել նրան:

Նույնպիսի գոռգոռոց էինք գցում մենք Օրյոլի զանազան հասարակության մարդկանց հետ մեր յուրաքանչյուր հանդիպումից հետո: Ես անչափ ուզում էի նրա հետ բաժանել դիտողականությունից ստացած հաճույքը, այդ դիտողականությունը ավելի սրելու հաճույքը, ուզում էի նրան վարակել շրջապատի նկատմամբ իմ անողոք վերաբերմունքով, և հուսահատությամբ տեսնում էի, որ նրան իմ զգացումների ու մտքերի հաղորդակիցը դարձնելու ցանկությունից բոլորովին հակառակ բան է ստացվում: Մի անգամ ասացի.

—Եթե դու իմանայիր, թե ինչքան թշնամիներ ունեմ:

— Ի՞նչ թշնամի: Որտե՞ղ,— հարցրեց նա:

— Ամեն տեսակի, ամեն տեղ. հյուրանոցում, խանութներում, փողոցում, կայարանում…

— Ովքե՞ր են այդ թշնամիները:
— Դեհ, բոլորը, բոլորը: Ի՜նչ քանակությամբ գարշելի դեմքեր և մարմիններ: Չէ որ դեռ Պողոս առաքյալն է ասել. «Ոչ ամենայն մարմին նույն մարմին է, այլ՝ այլ մարմին է մարդկան և այլ մարմին անասնոց, այլ մարմին թռչնոց, և այլ մարմին ձկանց...»: Ոմանք պարզապես սարսափելի են: Քայլելիս ոտնաթաթերն այնպես են դնում, այնպես են մարմինը ծռված պահում, ասես երեկ են միայն չորքոտանիությունից դուրս եկել: Այ, երեկ երկար ժամանակ քայլում էի Բոլխովսկայայով մի թիկնեղ, հաղթանդամ ոստիկանական պրիստավի ետևից, աչքս չկտրելով շինելի մեջ նրա հաստ թիկունքից, սրնքամսերից՝ փայլուն, պինդ ուռուցիկ սրնքապանների մեջ. ա՜խ ինչպես էի ես աչքերով լափում այդ սրնքապանները, նրանց կոշկահոտը, այդ նոր մոխրագույն շինելի մահուդը, ախլակի վրայի կոճակները, և ողջ այդ ուժեղ քառասնամյա անասունին իր զինվորական հագուկապով հանդերձ:

— Ինչպե՜ս չես ամաչում,— ասաց նա նողկացող ափսոսանքով:— Մի՞թե դու իսկապես այդքան չար ես, գարշելի: Ես քեզ ընդհանրապես չեմ հասկանում: Դու ամբողջովին ինչ-որ զարմանալի հակասություններից ես բաղկացած:

9

Եվ սակայն, ամեն օր առավոտները խմբագրություն գալով, ես ավելի ու ավելի ուրախությամբ, հպարտությամբ էի նայում կախիչից կախված նրա մոխրագույն մուշտակին, որի մեջ ասես նա ինքն էր, որը ասես նրա շատ կանացի մի մասը լիներ, իսկ կախիչի տակ նրա ինձ համար սիրելի մոխրագույն երկարաճիտք կոշիկներին, ավելի հուզիչ մի մասին: Նրան որքան կարելի է շուտ տեսնելու անհամբերությունից ես գալիս էի բոլորից վաղ, նստում էի, սկսում աշխատել. նայում և ուղղում էի գավառից եկած թղթակցությունները, կարդում էի մայրաքաղաքի լրագրերը, ըստ այդ

լրագրերի կազմում «սեփական հեռագրերը», գրեթե նորից գրում էի գավառային վիպագիրների որոշ պատմվածքներ, իսկ ինքս ականջս ձայնի՝ սպասում էի, և ահա վերջապես՝ արագ քայլեր, փեշի խշխշոց: Նա մոտ էր վազում ասես բոլորովին նորացած, զով անուշաբույր ձեռներով, ջահել, և լավ քնից հետո հատկապես փայլով լի աչքերով, շտապով նայում էր շուրջն ու համբուրում ինձ: Այդպես նա երբեմն ներս էր ընկնում և ինձ մոտ հյուրանոց, մուշտակի մորթու, ձմռան օդի սառը բուրմունքով: Ես համբուրում էի նրա խնձորասառը դեմքը, մուշտակի տակ գրկելով տաքուկ, քնքուշ այն ամենը, ինչ նրա մարմինն էր և զգեստը, նա ծիծաղում էր, դուրս պրծնում. «Թող, գործով եմ եկել»,— զանգով կանչում էր հերթապահին և հրամայում իր ներկայությամբ սենյակը մաքրել, ինքն օգնում էր նրան…

Մի անգամ պատահմամբ լսեցի նրա խոսակցությունն Ավիլովայի հետ. նրանք այդ օրը երեկոյան նստած էին սեղանատանը և բաց խոսում էին իմ մասին, կարծելով, որ ես տպարանում եմ: Ավիլովան հարցնում էր.

— Լիկա, սիրելիս, հետո՞ ինչ է լինելու: Դու գիտես իմ վերաբերմունքը նրա հանդեպ, նա, իհարկե, շատ հաճելի է, հասկանում եմ, դու հրապուրվել ես… Բայց հետո՞, վե՞րջը:

Ասես անդունդ գահավիժեցի: Ինչպե՜ս, ես «շատ հաճելին եմ», և միա՞ յն: Նա, ուրեմն, սոսկ «հրապուրվե՞լ է»:

Պատասխանն ավելի սարսափելի էր:

— Բայց ի՞նչ կարող եմ անել: Ոչ մի ելք չեմ տեսնում…

Այս բառերը լսելով, մեջս այնպիսի կատաղություն բռնկվեց, որ այն է արդեն պատրաստ էի նետվելու սեղանատուն և բղավելու, որ ելք կա, որ մի ժամից այլևս ոտք չեմ դնի Օրյոլ, երբ հանկարծ նա նորից խոսեց.

— Նադյա, դու ինչպե՞ս չես տեսնում, որ ես իսկապես սիրում եմ նրան: Եվ հետո, դու նրան, այնուամենայնիվ, չես ճանաչում: Նա հազար անգամ ավելի լավն է, քան երևում է…

Այո, ես կարող էի երևալ ավելի վատը, քան կայի: Ես ապրում էի լարված, տագնապալի, հաճախ մարդկանց հետ լինում էի դաժան, մեծամիտ, հեշտությամբ ընկնում էի տրտմության, հուսահատության մեջ, սակայն և հեշտությամբ փոխվում էի, հենց որ տեսնում էի, որ ոչինչ չի սպառնում մեր համերաշխությանը, ոչ ոք նրա նկատմամբ ոտնձգություն չի անում. այդժամ անմիջապես ինձ էր վերադառնում ողջ իմ բնածին պատրաստակամությունը լինելու բարի, անկեղծ, ուրախ: Եթե գիտեի, որ որևէ երեկույթ, ուր լինելու էինք նրա հետ, ինձ վիրավորանք, ցավ չի պատճառելու, ի՜նչ ուրախ, տոնական էի ես պատրաստվում, ինչպե՜ս էի ինձ դուր գալիս հայելուն նայելով, հիանալով սեփական աչքերովս, դեմքիս ջահել վարդագույնի մուգ բծերով, ձյունասպիտակ օձիքովս, որի օսլայած ծալքերը բացվում, իրարից պոկվում էին զմայլելի խշխշոցով: Ի՜նչ երջանկություն էին ինձ համար պարահանդեսները, եթե այդ պարահանդեսներում խանդից չէի տառապում: Ամեն անգամ պարահանդեսից առաջ ես դաժան պահեր էի ունենում. պետք էր հագնել Ավիլովայի հանգուցյալ ամուսնու ֆրակը, ճիշտ է, բոլորովին նոր, կարծես ոչ մի անգամ չհագած, բայց որը, միևնույն է, ասես խոցում էր ինձ: Սակայն այդ պահերը մոռացվում էին՝ բավական էր միայն դուրս գալ տնից, սառնամանիքի շունչն առնել, տեսնել պսպղուն աստղալից երկինքը, արագ նստել կառքասահնակը… Աստված գիտի, թե ինչու էին պարահանդեսային հավաքույթների վառ փայլփլող մուտքերը զարդարում ինչ-որ կարմիր զոլավոր վրաններով, ինչու էին դրանց առջև ցուցամոլական կատաղություն խաղում հավաքույթը ղեկավարող թաղայինները:

Բայց, միևնույն է, դա արդեն պարահանդես էր, այդ տարօրինակ մուտքը՝ առջևի դոփդոփած, շիկացած լույսով վառ ու սպիտակ շողացող շաքարե ձյունը, արագության, ներդաշնակության ողջ այդ խաղը, ոստիկանական հնչեղ ճիչը, ոստիկանական սառած-ցցված բեղերը, ձյունը դոփդոփող փայլուն սապոգները, մի առանձին ձևով շրջած ու գրպանները դրած ձեռքեր սպիտակ գործած ձեռնոցներով: Մոտեցող գրեթե բոլոր տղամարդիկ համազգեստներով էին,— մի ժամանակ շատ համազգեստներ կային Ռուսաստանում,— և բոլորը ցուցադրական փքված իրենց աստիճաններով, համազգեստներով. ես դեռ այն ժամանակ նկատել էի, որ մարդիկ նույնիսկ ամբողջ կյանքում ունենալով ամեն տեսակի բարձր դիրքեր և տիտղոսներ, մինչև վերջ էլ երբեք չեն կարողանում այդ ամենին վերաբերվել, որպես սովորական մի բանի: Նրանք միշտ ինձ գրգռում էին, անմիջապես դառնալով իմ վայրկենապես սրվող անբարյացակամ սրատեսության առարկա: Փոխարենը կանայք գրեթե բոլորը հաճելի էին, ցանկալի: Նրանք նախասրահում զմայլելիորեն ազատում էին իրենց մորթիներից ու գլխարկներից, արագ դառնալով հենց այն արարածները, որ պետք է քայլեին լայն սանդուղքներին փռած կարմիր գորգերի վրայով, այնքան դյութիչ, հայելիների մեջ բազմապատկվող բազմությամբ: Իսկ հետո՝ սրահի այդ սքանչելի դատարկությունը, որ նախորդում է պարահանդեսին, նրա զով սառնությունը, ջահի ծանր ողկույզը, որ ամբողջապես ծեգծեգում է աղամանդյա փայլով, հսկայական չվարագուրված պատուհանները, հատակի փայլը և դեռևս ազատ ընդարձակությունը, թարմ ծաղիկների, դիմափոշու, օծանելիքի, պարահանդեսային սպիտակ կաշեձեռնոցների բույրը, և այդ համակ հուզմունքը մոտեցող պարահանդեսային բազմության տեսքից, սպասումը երաժշտության առաջին թնդյունի, առաջին զույգի, որ հանկարծ ներս է թռչում այդ դեռ կուսական սրահի ընդարձակության մեջ՝ ամենաինքնավստահ, ամենաճարպիկ զույգի:

Ես պարահանդես էի գնում միշտ նրանցից առաջ: Երբ գալիս էի, հավաքը դեռևս շարունակվում էր, ներքևում դեռ շարունակում էին ծառայողներին ծանրաբեռնել բուրումնալից մուշտակներով, կիսամուշտակներով, շինելներով, օդը դեռ ամեն տեղ սառն էր բարակ ֆրակի համար: Այդտեղ ես, ուրիշի ֆրակ հագած, հարթ սանրվածքով, սլացիկ, ասես է՛լ ավելի նիհարած, թեթևացած, օտար բոլորին, միայնակ,— մի տարօրինակ կերպով հպարտ երիտասարդ, որ ինչ-որ տարօրինակ դեր ունի խմբագրությունում,— ես ինձ զգում էի սկզբում այնքան սթափ, այնքան հեռու բոլորից: Հետո գնալով շատանում էր բազմությունը, աղմուկը, երաժշտությունը հնչում էր ավելի սովոր, սրահի դռների մոտ արդեն խմբվում էին, կանայք գնալով ավելանում էին, օդը դառնում էր ավելի խիտ, տաք, և ես կարծես հարբում էի, կանանց նայում ավելի համարձակ, իսկ տղամարդկանց ավելի մեծամտորեն, բազմության մեջ սահում էի ավելի ու ավելի համաքայլ, ներողություն էի խնդրում որևէ ֆրակի կամ համազգեստի դիպչելով, դառնում ավելի քաղաքավարի և գոռոզ... Հետո հանկարծ տեսնում էի նրանց,— ահա նրանք զգուշորեն, կիսաժպիտը դեմքներին շարժվում են բազմության միջից,— և սիրտս մարում էր հարազատորեն, մի տեսակ անվստահ և զարմանքով. նրանք են և ոչ նրանք, նույնն են և նույնը չեն: Մանավանդ Լիկան՝ նա բոլորովին նույնը չէ: Ինձ ամեն անգամ զարմացնում էր այդ պահին նրա ջահելությունը, նրբությունը. սեղմիրանի մեջ ձգված մարմին, թեթև և այնքան անարատ-տոնական զգեստ, ձեռնոցից մինչև ուսը բաց և սառած, դեռատի մանիշակագույն դարձած թևեր, դեռևս անվստահ դեմքի արտահայտություն. միայն սանրվածքն է բարձր, ինչպես բարձրաշխարհիկ գեղեցկուհու, և դրա մեջ կար առանձնապես հրապուրող մի բան, բայց և կարծես արդեն ինձնից ազատվելու, ինձ դավաճանելու պատրաստ, նույնիսկ թաքուն անբարոյական մի բան: Շուտով որևէ մեկը մոտ էր վազում նրան, պարահանդեսային սովորական շտապողականությամբ ցածր գլուխ տալիս, նա հովհարը տալիս էր Ավիլովային և ասես մտացրիվ, նազանքով ձեռքը դնում էր տղամարդու ուսին, և պտտվելով, սահելով ոտնաթաթերի ծայրերին, անհետանում, կորչում էր պտտվող բազմության, աղմուկի, երաժշտության մեջ:

Փոքրահասակ, աշխույժ, միշտ ուրախ և զուսպ Ավիլովան նույնպես պարահանդեսում զարմացնում էր ինձ իր երիտասարդությամբ, պայծառացող սիրունությամբ: Պարահանդեսի ժամանակ մի օր հանկարծ գլխի ընկա, որ նա քսանվեց տարեկան էր ընդամենը, և առաջին անգամ, չհամարձակվելով իսկ հավատալ ինքս ինձ, հասկացա այս ձմռանը ինձ հետ նրա վարվեցողության մեջ տեղի ունեցած տարօրինակ փոփոխության պատճառը, հասկացա, որ նա կարող էր սիրել և խանդել ինձ:

10

Հետո մենք երկար ժամանակով բաժանվեցինք:

Սկսվեց նրանից, որ անսպասելիորեն եկավ բժիշկը:

Սառնամանիք արևոտ մի օր մտնելով խմբագրության միջանցք, հանկարծ զգացի շատ ծանոթ թունդ ծխախոտի հոտ և լսեցի աշխույժ ձայներ ու ծիծաղ ճաշասենյակում: Կանգ առա՝ սա ի՞նչ է: Պարզվեց, որ ամբողջ տունը ծխախոտի ծխով լցրել էր բժիշկը, և նա էր խոսում՝ բարձր, աշխույժով այն տիպի մարդկանց, որոնք որոշակի տարիքի հասնելուց հետո, այդպես էլ, առանց փոխվելու, մնում են այդ տարիքում տարիներ շարունակ, վայելելով իրենց գերազանց ինքնազգացողությունը, անդադար ծխելն ու անլռելի շատախոսությունը: Ես ապշեցի. ի՞նչ կնշանակեր այս անսպասելի գալուստը: Որևէ պահա՞նջ աղջկանից: Եվ ինչպե՞ս ներս մտնեմ, ինչպես պահեմ ինձ: Սակայն ոչ մի սարսափելի բան տեղի չունեցավ առաջին պահերին: Ես շտապով տիրապետեցի ինձ, ներս մտա, հաճելիորեն զարմացա… Բժիշկը իր բարությամբ նույնիսկ մի քիչ շփոթվեց, ծիծաղելով և կարծես արդարանալով, շտապեց ասել, որ եկել է «մի շաբաթ հանգստանալու գավառից»: Անմիջապես նկատեցի, որ Լիկան էլ է հուզված: Չգիտես ինչու հուզված էր և Ավիլովան: Համենայն դեպս, կարելի էր հուսալ, որ այդ ամենի պատճառը բժիշկն է, որպես անսպասելի հյուր, հենց նոր գավառից նահանգ եկած մարդ, որը վագոնում անցկացրած գիշերից հետո առանձնապես հաճույքով տաք թեյ է խմում ուրիշի ճաշասենյակում: Արդեն սկսել էի հանգստանալ: Բայց հենց այդ ժամանակ վրա հասավ հարվածը. այն ամենից, ինչ ասում էր բժիշկը, հանկարծ հասկացա, որ նա եկել է ոչ թե մենակ, այլ Բոգոմոլովի հետ, երիտասարդ, հարուստ և մեր քաղաքում նույնիսկ նշանավոր կաշեվաճառի հետ, որը վաղուց արդեն աչք ուներ Լիկայի վրա. հետո լսեցի բժշկի ծիծաղը.

— Ասում է, որ սիրահարված է քեզ, Լիկա, խենթանում է, եկել է ամենավճռական մտադրություններով: Այնպես որ այդ խեղճի բախտը քո ձեռքին է: Ուզես՝ կբախտավորեցնես, չես ուզի՝ ընդմիշտ կկործանես… Իսկ Բոգոմոլովը միայն հարուստ չէր. նա խելացի էր, ուրախ և հաճելի բնավորության տեր, համալսարան էր ավարտել, ապրել էր արտասահմանում, խոսում էր երկու օտար լեզվով. արտաքուստ առաջին պահին կարող էր նույնիսկ վախեցնել՝ կարմրաշեկ, հարթ սանրվածքով, նուրբ կլորերես, զարհուրելի, անմարդավարի գեր. ոչ այն է անբնական չափերի մեծացած և արտասովոր հաստլիկ մանկիկ, ոչ այն է ամբողջապես ճարպ ու արյունից պլպլացող յորկշիր[2], սակայն այդ յորկշիրի ամեն ինչը այնքան փառահեղ էր, մաքուր, առողջ, որ նույնիսկ ուրախություն էիր զգում՝ աչքերում երկնային լազուր, դեմքի գույնն աննկարագրելի իր թարմությամբ, իսկ ողջ շարժուձևի, ծիծաղի, ձայնի հնչյունների, աչքերի և շրթունքների խաղի մեջ կար ամոթխած ու հաճելի մի բան. նրա ոտքերն ու ձեռքերը հուզիչ պստլիկ էին, հագուստը անգլիական գործվածքներից, գուլպաները, վերնաշապիկը, փողկապը՝ բոլորը մետաքսյա: Արագ հայացքս դարձրի Լիկային, տեսա նրա շփոթված ժպիտը… Եվ հանկարծ ամեն ինչ ինձ համար դարձավ օտար, հեռավոր, հանկարծ ինձ զգացի ամոթալիորեն ավելորդ, անպետք այս ամբողջ տանը, իսկ նրա նկատմամբ համակվեցի ատելությամբ…

[2] Նկատի ունի յորկշիրյան խոզ *(ծթ.)*:

Դրանից հետո մենք օրական մի ժամ էլ չէինք կարողանում մենակ անցկացնել, նա լինում էր կամ հոր, կամ Բոգոմոլովի հետ: Խորհրդավոր-ուրախ քմծիծաղը չէր անցնում Ավիլովայի դեմքից, նա Բոգոմոլովի նկատմամբ այնպիսի սիրալիրություն ցուցաբերեց, այնքան բարեհամբույր գտնվեց, որ սա առաջին իսկ օրից դարձավ յուրային նրա տանը, հայտնվում էր առավոտից և մնում մինչև ուշ երեկո. հյուրանոցում միայն գիշերում էր: Բացի այդ, սկսվեցին սիրողական դրամատիկական խմբի փորձերը, որի անդամն էր Լիկան: Խումբը ներկայացում էր պատրաստում Բարեկենդանին, և Լիկան փոքր դերերի մեջ էր քաշել ոչ միայն Բոգոմոլովին, այլև բժշկին: Նա ասում էր, որ Բոգոմոլովի սիրահետություններն ընդունում է միայն հանուն իր հոր, որպեսզի վերջինիս չվշտացնի Բոգոմոլովի հանդեպ իր խիստ վերաբերմունքով, և ես ամեն կերպ ինքս ինձ սիրտ էի տալիս, ձևացնում, թե հավատում եմ նրան, նույնիսկ ստիպում էի ինձ ներկա գտնվել նրանց փորձերին, ջանալով այդ կերպ թաքցնել իմ դաժան խանդն ու բոլոր մյուս տառապանքները, որ ունենում էի այդ ներկայացումների ժամանակ. չգիտեի աչքերս ուր փախցնեմ ամոթից Լիկայի համար, «խաղալու» նրա ողորմելի փորձերի համար: Եվ, ընդհանրապես, մարդկային անտաղանդության ի՜նչ զարհուրելի տեսարան էր այդ: Փորձերը ղեկավարում էր մի պրոֆեսիոնալ, անգործ մնացած դերասան, որ, իհարկե, իրեն մեծ տաղանդ էր երևակայում, հրճվում էր իր գարշելի բեմական փորձառությամբ, անորոշ տարիքի մի մարդ մածկանի գույնի դեմքով և այնքան կնճիռներով, որ թվում էր հատուկ են սարքված: Նա շարունակ գազազում էր՝ ցուցումներ տալով, թե ինչպես պետք է խաղալ այս կամ այն դերը, բարկանում էր այնքան կոպիտ ու կատաղած, որ սկլերոտիկ երակները պարանների նման ուռչում էին քունքերին, ինքը խաղում էր մեկ տղամարդկանց, մեկ կանանց դերեր, և բոլորը կաշվից դուրս էին գալիս նրան ընդօրինակելու, տանջելով ինձ իրենց ձայնի յուրաքանչյուր հնչյունով, մարմնի յուրաքանչյուր շարժումով. որքան էլ անտանելի լիներ դերասանը, նրան ընդօրինակողներն ավելի անտանելի էին: Եվ ինչո՞ւ էին նրանք խաղում: Նրանց մեջ կա գավառական ամեն քաղաքին հատուկ գնդի տիկին՝ չոր-չոր, ինքնավստահ, հանդուգն, կար ճչան ներկվող օրիորդ՝ միշտ տագնապոտ, միշտ ինչ-որ բանի սպասող, սովորություն դարձրած կրծոտելու շրթունքները, կային երկու քույր, որ հայտնի էին ամբողջ քաղաքին իրենց անբաժանելիությամբ և զարմանալի նմանությամբ. երկուսն էլ հաղթանդամ, կոպիտ-սևահեր, սև իրար միացած հոնքերով, խիստ-լռակյաց՝ իսկևիսկ առեղի սևաթույր զույգ ձիեր, կար նահանգապետի հատուկ հանձնարարություններ կատարող մի աստիճանավոր՝ դեռևս շատ ջահել, բայց արդեն ճաղատացող շիկահեր երիտասարդ՝ կարմիր կոպերի միջից դուրս պրծած երկնագույն աչքերով, շատ բարձրահասակ, շատ բարձր օձիքով, հոգնեցուցիչ քաղաքավարի և նրբանկատ, կար տեղացի մի նշանավոր փաստաբան՝ հաղթամարմին, խոշոր, հաստակուրծք, հաստուս, ծանր ոտնաթաթերով,— երբ նրան տեսնում էի պարահանդեսներում ֆրակ հագած, միշտ կարծում էի, թե գլխավոր սպասավորն է,— կար երիտասարդ նկարիչ՝ սև թավշյա բլուզ, երկար հնդիկի մազեր, այծային կիսադեմ այծի մորուքով, կանացի անբարոյականություն կիսախուփ աչքերին և քնքուշ վառ կարմիր շրթունքներին, որոնց տհաճ էր նայել, կանացի կոնք…

Հետո եկավ և ներկայացման օրը: Մինչ վարագույրի բացվելը, ինձ գցեցի կուլիսների ետև. այնտեղ ասես գժված լինեին՝ հագնվում էին, գրիմ անում, բղավում, կռվում, դուրս էին թռչում զգեցարաններից, ընդհարվում իրար առանց միմյանց ճանաչելու, այնքան տարօրինակ էին բոլորը զուգված, մեկը նույնիսկ դարչնագույն ֆրակով և մանիշակագույն անդրավարտիքով էր, այնքան մեռած էին նրանց կեղծամները և մորուքները, ներկված անշարժ դեմքերը, վարդագույն ծեփաններ կպցրած ճակատներին և քթերին, ներկած, փայլուն աչքերով, մեծ-մեծ ու սևացրած մանեկենների նման թարթող թարթիչներով: Ես էլ, նրա դեմը գալով, չճանաչեցի նրան, զարմացած էի նրա տիկնիկանմանությունից՝ ինչ-որ վարդագույն նրբագեղ հնաոճ զգեստ, խիտ սպիտակամազ կեղծամ, դեմքին քաղցր-մեղցր անճաշակ գեղեցկություն և մանկայնություն… Բոգոմոլովը դեղնամազ դոնապանի դերն էր խաղում,— նրան մի առանձնահատուկ հնարամտությամբ էին

զուգել «կենցաղային տիպար» ստեղծելու միտումով,— իսկ բժիշկը խաղում էր ծեր հորեղբոր, պաշտոնաթող գեներալի դերը, և հենց բժիշկն էլ սկսեց ներկայացումը. ամառանոցում, դատարկ հատակին խփած փայտե կանաչ ծառի տակ հյուսկեն բազկաթոռին նստած, չեսուչայի նոր կոստյումով, ետ էր ընկել բազկաթոռին և փքված նայում էր լայն բացած լրագրին՝ ցածից ամբողջապես վառ լուսավորված բեմեզրի լամպերով, թեև դեկորները ցույց էին տալիս պայծառ առավոտ, և այդ լույսով ողողված, իր բոլոր ճերմակ մազերով հանդերձ, զարմանալի երիտասարդ տեսք ուներ: Նա լրագիրը կարդալով ինչ-որ բան պիտի փնթփնթար, սակայն միայն նայում էր և ոչինչ չէր կարողանում ասել, հակառակ հուշարարանոցից լսվող հուսահատական ֆշշոցին, և այն ժամանակ միայն, երբ աղջիկը վերջապես դուրս թռավ կուլիսներից (մանկական-խաղացկուն, հմայիչ-աշխույժ ծիծաղով) և, ետևից նրան փաթաթվելով, ձեռներով փակեց նրա աչքերը, բղավելով՝ «ասա՝ ո՞վ է», միայն այդ ժամանակ բղավեց և բժիշկը, շեշտելով յուրաքանչյուր բառը. «Թո՛ղ, թո՛ղ, այծիկս, շատ լավ գիտեմ ով ես»:

Դահլիճում կիսամութ էր, բեմում՝ արև, լույս: Առաջին կարգում նստած, նայում էի մեկ բեմին, մեկ շուրջս. այդ կարգում նստած էին ամենահարուստները՝ իրենց գիրությունից խեղդվող քաղաքացիական գործի մարդիկ և իրենց դիրքով ու կեցվածքով ամենաաչքի ընկնող ոստիկանական և զինվորական աստիճանավորներ, բոլորն ասես կաշկանդված էին այն բանով, ինչ կատարվում էր բեմում. լարված պահվածք, չավարտված ժպիտներ… Ես չկարողացա նստել նույնիսկ մինչև առաջին գործողության վերջը: Հենց որ մի բան չխկաց բեմում,— նշան, որ շուտով վարագույրը կիջնի,— անմիջապես դուրս եկա: Այնտեղ, բեմում արդեն խաղում էին թափ առած, և լուսավոր, բնական միջանցքում, ուր ամեն ինչի սովոր ծերուկը օգնում էր ինձ հագնվել, առանձնապես անբնական էին լսվում արտիստների չափազանցված կայտառ բացականչությունները: Վերջապես փողոց դուրս թռա: Մի տեսակ կործանարար միայնության զգացումը մեջս հասնում էր մինչև հիացումի: Փողոցն ամայի էր, մաքուր, լապտերների լույսերը փայլում էին անշարժ: Քայլում էի ոչ թե դեպի տուն,— այնտեղ, իմ նեղլիկ սենյակում, հյուրանոցում, չափազանց էր սարսափելի,— այլ խմբագրություն: Անցա պաշտոնատների մոտով, շրջվեցի դատարկ հրապարակ, որի մեջտեղում բարձրանում էր տաճարը, հազիվ ոսկեփայլ գմբեթը աստղալից երկնքին խառնած… Ձյան վրա իմ քայլերի ճռճռոցի մեջ նույնիսկ մի բարձր, սարսափելի բան կար… Տաք տանը լռություն էր, ժամացույցի խաղաղ, դանդաղ տկտկոց լուսավորված ճաշասենյակում: Ավիլովայի տղան քնած էր, դայակը, որ դուռը բացել էր ինձ համար, քնատ նայեց ինձ և հեռացավ: Մտա այդ ինձ արդեն այնքան ծանոթ և ինձ համար այնքան առանձնահատուկ նշանակություն ստացած սենյակը սանդուղքի տակ, նստեցի մթության մեջ, ծանոթ, հիմա արդեն կարծես ճակատագրական բազմոցին… Եվ սպասում էի, և սարսափում այն պահից, երբ հանկարծ կգան, աղմուկով ներս կմտնեն, իրար խոսք կտրելով կսկսեն խոսել, ծիծաղել, նստել ինքնաեռի շուրջ թեյ խմելու, իրենց տպավորությունները կբաժանեն, իսկ ամենից ավելի վախենում էի այն պահից, երբ կլսվի նրա ծիծաղը, նրա ձայնը… Սենյակը լցված էր նրանով, նրա բացակայությամբ և ներկայությամբ, նրա բոլոր բույրերով՝ իր, իր զգեստների, օծանելիքների, փափուկ խալաթի, որ ընկած էր կողքիս, բազմոցին… Պատուհանից ահարկու կապտին էր տալիս ձմեռային գիշերը, այգում սև ճյուղերի ետևում փայլում էին աստղերը…

Պասի առաջին շաբաթ նա հոր և Բոգոմոլովի հետ (մերժելով վերջինիս) մեկնեց: Ես վաղուց դադարել էի նույնիսկ խոսել նրա հետ: Նա պատրաստվում էր մեկնել շարունակ լաց լինելով, ամեն րոպե հույսով, որ հանկարծ կպահեմ իրեն, չեմ թողնի:

11

Գավառային մեծ պասի օրերն էին: Կառապաններն անգործ կանգնած էին փողոցի անկյուններում, սառչում էին, երբեմն հուսահատությամբ ձեռները թափահարում, երկչոտ ձայն տալիս կողքից անցնող սպային. «Ձերդ բարեծննդություն: Տանե՞մ»: Արջնագռավներն զգալով, որ շուտով գարուն է լինելու, ճռվողում էին գրգռված, աշխույժ, բայց ագռավները դեռ կռկռում էին չոր, սուր: Բաժանումը հատկապես սարսափելի էի զգում գիշերները: Գիշերվա կեսին արթնանալով, զարմանում էի. հիմա ինչպե՞ս ապրեմ և ինչի՞ համար ապրեմ: Մի՞թե սա ես եմ, այս մարդը, որ չգիտես ինչու պառկած է այս գիշերվա մթության մեջ, հազարավոր օտար մարդկանցով լցված նահանգային ինչ-որ քաղաքում, այս համարում՝ նեղլիկ պատուհանով, որ ամբողջ գիշեր մոխրագույնին է տալիս երկարուկ համր մի սատանայի նման: Ամբողջ քաղաքում միակ մտերիմ մարդս Ավիլովան է: Սակայն մտերի՞մ իսկապես: Հակասական և դժվարին մտերմություն…

Հիմա ես ուշ էի գալիս խմբագրություն: Ավիլովան, ընդունարանից տեսնելով ինձ միջանցքում, ուրախ ժպտում էր. նա նորից դարձել էր սիրալիր, քնքուշ, վերջ էր տվել ինձ հեգնելուն, հիմա ես մշտապես տեսնում էի նրա խաղաղ սերն իմ նկատմամբ, հոգատարությունը, մշտական ուշադրությունը, հաճախ ամբողջ երեկոներ էինք անցկացնում երկուսով. նա երկար նվագում էր ինձ համար, իսկ ես կիսապառկում էի բազմոցին, շարունակ աչքերս փակ երաժշտական երջանկությունից լցվող արտասուքներից և միշտ դրա հետ մեկտեղ սաստկացող սիրային ցավից և ամեն ինչ ներող քնքշանքից: Ընդունարան մտնելով, համբուրում էի նրա փոքրիկ պինդ ձեռքը և գնում մշտական աշխատակիցների սենյակ: Այնտեղ նստած հոդված էր սարքում հիմար, մտազբաղ մի մարդ,— նրան Օրյոլ էին աքսորել ոստիկանության հսկողության տակ,— բավական տարօրինակ արտաքինով՝ ռամկական-մորուքավոր, մուգ դարչնագույն կոպիտ մահուդե անթև վերնազգեստով և յուղած, պինդ ու հաճելի հոտ արձակող սապոգներով, ինքն էլ ձախլիկ՝ աջ ձեռքի կեսը չկար, թևքում թաքցրած այդ թևի մնացորդով նա սեղանին էր սեղմում թղթի թերթը, իսկ ձախով գրում էր. երկար կնստեր, կմտածեր, թանձր ծուխ արձակելով կծխեր, և մեկ էլ թուղթն ավելի ամուր կսեղմեր սեղանին ու կսկսեր գրել, գրել՝ ուժեղ, արագ, կապկի ճարպկությամբ: Հետո գալիս էր կարճոտն ծերուկը՝ զարմացած ակնոցով արտասահմանյան տեսաբանը. միջանցքում հանում էր նապաստակի մորթուց կազակինը ու ֆիննական ականջակալներով գլխարկը, որից հետո իր փոքրիկ սապոգներով, շալվարով և գոտիով կապված ֆլանելե բլուզով դառնում էր այնքան փոքրիկ և վտիտ, ասես տասը տարեկան լիներ. նրա խիտ մոխրագույն-ճերմակած մազերը՝ ահարկու, բարձր ցցված այս ու այն կողմ, նրան խոզուկի նման էին դարձնում. ահարկու էր և նրա զարմացած ակնոցը. նա գալիս էր միշտ երկու տուփ ձեռքին՝ պարկուճների տուփը և ծխախոտի տուփը, և աշխատելու ժամանակ շարունակ ծխախոտ էր լցնում. սովոր հայացքով մայրաքաղաքի թերթն աչքի անցկացնելով, տրորում, մեքենայի պղնձե փեղկով խողովակի մեջ էր մտցնում բաց գույնի թելիկավոր ծխախոտը, ձեռքով անտարբեր շոշափում-վերցնում էր պարկուճը, մեքենայի կոթը քաշում էր դեպի իր կուրծքը, փափուկ բլուզը, իսկ խողովակիկը՝ ծխախոտի պարկուճի մեջ և ճարպկորեն կրակում սեղանին: Հետո գալիս էին էջկապը, սրբագրիչը: Էջկապը մտնում էր հանգիստ, անկախ. նա զարմանալի էր իր քաղաքավարությամբ և անթափանցելիությամբ. անասելի նիհար էր և չոր, գնչուի սև մազերով, դեմքը ձիթապտղականաչ, սև բեղերով և մեռելային մոխրագույն շրթունքներով, հագնված էր միշտ չափազանց խնամքով և մաքուր. սև շալվար, կապույտ բլուզ, մեծ օսլայած օձիք բլուզի օձիքի վրայից. ամեն ինչ փայլում էր մաքրությունից, թարմությունից. ես երբեմն խոսում էի նրա հետ տպարանի մասին. այդ դեպքում նա խախտում էր լռությունը, հանդարտ և սևեռուն նայում աչքերիս իր մուգ աչքերով և խոսում էր, խոսում ինչպես լարովի, առանց ձայնը բարձրացնելու և միշտ նույն բանը. աշխարհում տիրող անարդարության մասին՝ ամեն տեղ, ամենուրեք և ամեն ինչում: Սրբագրիչը շուտ-շուտ ներս էր գալիս՝ միշտ ինչ-որ

բան չէր հասկանում կամ չէր հավանում տպագրելիք հոդվածում և հոդվածի հեղինակից պահանջում էր կամ բացատրություն, կամ փոփոխություն. «Այստեղ, ներեցեք, կարծես այնքան էլ լավ չի ասված»: Գեր էր, անշնորհք, մանրագանգուր և միշտ ասես մի փոքր թաց մազերով, ներվայնությունից և վախից, թե բոլորը տեսնում են իր խիստ հարբածությունը, ման էր գալիս կորամեջք, գլուխը կախ էր գցում բացատրության համար դիմելիս՝ թաքցնելու համար ալկոհոլային շունչը, դողդողացող և
ձեռքով հեռվից ցույց տալով անհասկանալի կամ իր կարծիքով անհաջող տողը: Այս սենյակում նստած՝ ես առանց կենտրոնանալու ուղղում էի ուրիշների զանազան ձեռագրեր, իսկ ավելի շատ պարզապես դուրս էի նայում պատուհանից ու մտածում, թե ինչպես և ինչ գրեմ ինքս:

Հիմա ես ունեի ևս մի թաքուն տառապանք, ևս մի «անիրագործելիություն»: Սկսել էի մի քիչ գրել,— հիմա մեծ մասամբ արձակ,— և նորից սկսել էի տպագրել գրածս: Բայց մտածմունքս այն մասին չէր, ինչ գրում և տպագրում էի: Տառապում էի բոլորովին այլ բան գրելու ցանկությամբ, բոլորովին ոչ այն, ինչ կարող էի գրել և գրում էի, այլ այնպիսի մի բան, որ չէի կարողանում: Կյանքի տվածից մեջդ գոյացնել գրելու հիրավի արժանի մի բան՝ ի՜նչ բացառիկ երջանկություն, ի՜նչ հոգեկան գործ: Եվ ահա իմ կյանքը ավելի ու ավելի սկսեց վերածվել պայքարի հանուն այդ «անիրագործելիի», հանուն որոնումի և ըմբռնումի այն ուրիշ, նույնպես անըմբռնելի երջանկության, այդ երջանկության ձգտումի, անդադար մտածմունքի այդ մասին:

Կեսօրին ստացվում էր փոստը: Դուրս էի գալիս ընդունարան, նորից տեսնում Ավիլովայի գեղեցիկ ու խնամքով հարդարված գլուխը՝ աշխատանքին հակված, և հաճելի այն ամենը, որ կար շագրենի կաշվից նրա փափուկ կիսակոշիկների մեջ՝ սեղանի տակ, ուսերին գցած մորթե թիկնոցի մեջ, որի վրա նույնպես փայլին էր տալիս ձմռան մռայլ օրվա, ձմեռային պատուհանի անդրադարձը, որից դուրս երևում էր գորշ, ամպամած ձյունոտ երկինքը: Փոստից վերցրի մայրաքաղաքային ամսագրի նոր համար, շտապով թերթերը կտրատեցի, բացեցի... Չեխովի նոր պատմվածքը: Այդ անունը տեսնելն արդեն ինձ համար այնքան բան էր նշանակում, որ միայն մի հայացք գցեցի պատմվածքին, նույնիսկ սկիզբը չկարողացա կարդալ նախանձոտ ցավից այն վայելքի, որ կանխազգում էի: Այդ ընթացքում գնալով ավելի շատ մարդ էր մտնում-դուրս գալիս ընդունարան, գալիս էին հայտարարություններ պատվիրողներ, գալիս էին մեծ թվով ամենատարբեր տեսակի մարդիկ, որ նույնպես բռնված էին գրելացավով. այստեղ կարելի էր տեսնել և բարետես ծերուկի՝ մեծ չափի էժանագին թղթի մի կույտ ձեռքին, որի վրա վերնագիր էլ կար՝ «Երգեր և խոհեր», գրված սագի փետուրների ժամանակի գրության ողջ շուքով, կարելի էր տեսնել երիտասարդ, հուզմունքից շիկնած սպայի, որն իր ձեռագիրն էր հանձնում հակիրճ և քաղաքավարի-հստակ խնդրանքով՝ նայելու այն և տպագրելու պարագային ոչ մի դեպքում չհրապարակելու իր իսկական ազգանունը. «Դնել միայն անվան և ազգանվան սկզբնատառերը, եթե դա թույլատրելի է ըստ խմբագրության կանոնների», սպայից հետո՝ հուզմունքից և մուշտակից քրտնած հասակավոր քահանայի, որ ցանկանում է Spectator կեղծանվան տակ տպագրել իր «Գյուղական պատկերները», քահանայից հետո՝ նահանգական դատական գործիչը... Գործիչը չափազանց կարգասեր էր. նա տարօրինակության չափ անշտապ հանում էր նախասենյակում նոր կրկնակոշիկները, մորթիով նոր ձեռնոցը, նոր կզաքիսե վերարկուն, նոր բոյարական գլխարկը, և պարզվում էր, որ զարմանալի նիհար, բարձրահասակ մարդ էր, մեծատամ և մաքուր, ու գրեթե կես ժամ սրբում էր բեղերը ձյունասպիտակ թաշկինակով, մինչ ես կլանված հետևում էի նրա յուրաքանչյուր շարժումին, հրճվելով իմ գրողական խորաթափանցությամբ.

— Այո, այո, նա անպայման պետք է լինի այդպես մաքուր, կարգասեր, անշտապ, հոգատար իր հանդեպ, քանի որ նա նոսրատամ է և թավ բեղավոր... քանի որ արդեն ճաղատանում է այդ խնձորաուռուցիկ ճակատը, տենդոտ փայլում են աչքերը, թոքախտավորի բծիկներ են կարմրին

տալիս՝ այտոսկրերին, մեծ ու տափակ են ոտնաթաթերը, մեծ ու տափակ են ձեռները՝ խոշոր, կլոր եղունգներով:

Նախաճաշի ժամին՝ դայակը զբոսանքից տուն էր բերում տղային: Ավիլովան դուրս էր թռչում նախասենյակ, ճարպկորեն պպզում էր, հանում էր տղայի գառնամորթուց գլխարկը, բացում կապույտ անթև վերնազգեստը, որի տակ սպիտակ գառնամորթի էր, համբուրում էր տղայի թարմացած, կարմրած դեմքը, իսկ տղան ցրված նայում էր ուրիշ կողմ, ինքն իր մտքերի հետ, մեկուսի, անտարբեր թույլ տալով հանել շորերն ու համբուրել իրեն, և ես ինձ բռնում էի այն բանում, որ նախանձում էի այդ ամենին. տղայի երանելի անմտությանը, Ավիլովայի մայրական երջանկությանը, դայակի ծերունական լռությանը: Ես արդեն նախանձում էի բոլոր նրանց, ում կյանքը լցված էր պատրաստի գործերով և հոգսերով, այլ ոչ սպասումով, հորինումով ինչ-որ բանի մարդկային գործերից ամենատարօրինակ այն գործի համար, որ կոչվում էր գրել, նախանձում էի յուրաքանչյուրին, ով ունի կյանքում իր պարզ, հաստատ որոշակի գործը, որն այսօր կատարելով, կարող է միանգամայն հանգիստ և ազատ լինել մինչև վաղը:

Նախաճաշից հետո ես գնում էի: Քնատ փաթիլներով քաղաքի վրա էր տեղում հոյակապ այն ձյունը, որ միշտ խաբում էր քնքուշ, առանձնապես սպիտակ ճերմակությամբ, կարծես արդեն շատ, շատ մոտ է գարունը: Ձյան վրայով կողքովս անձայն սլանում էր անհոգ, հավանաբար հենց նոր մի տեղ շտապով կոնծած կառապանը, մի տեսակ ամբողջովին ասես պատրաստ ինչ-որ լավ, հաճելի բանի... Կարծես ոչ մի արտասովոր բան չկա։— Բայց հիմա ամեն ինչ կարող էր ինձ համար հարված լինել, գրեթե ամեն մի թռուցիկ տպավորություն, և, հարվածելով, անմիջապես մեջս ծնում էր պոռթկում թույլ չտալու այդ տպավորությանը զուր կորչել, վերանալ անհետ, մեջս առաջացնում էր շահախնդրական ձգտումի մի շանթ՝ տեղնուտեղը հափշտակելու այն, դարձնելու իմ սեփականությունը և ինչ-որ բան քաղելու դրանից: Ահա երևաց-անցավ կառապանը, և այն ամենը, ինչով նա երևաց-անցավ, սրությամբ երևաց-անցավ և իմ հոգու մեջ, ու հոգուս մեջ մնալով որպես տարօրինակ մի նմանակը այդ երևցածի, դեռ ինչքան երկար և զուր տառապեցնում է հոգիս: Հետո՝ հարուստ շքամուտք, առջևը՝ մայթին, ձյան սպիտակ փաթիլների միջից սևին է տալիս լաքապատ կառքը, երևում են ետևի մեծ անիվների ասես յուղոտ անվադողերը, խրված հին ձյան մեջ, որ վրայից փափուկ ծածկվել է նոր ձյունով. քայլում եմ, և նայելով նստիքին բազմած հաստաթիկունք, թևատակերից մանկավարի գոտևորված կառապանի մեջքին, բարձի նման հաստ թավշյա կոնֆեդերատկայով[3], հանկարծ տեսնում եմ կառքի ապակյա դռնից ներս, այդ ատլասե կոնֆետատուփի մեջ նստել, դողում է ու նայում այնպես սևեռուն, ասես ուր որ է բան պիտի ասի, մի սիրունիկ շնիկ, որի ականջները կարծես իսկական ժապավենակապ լինեն: Եվ նորից, ասես կայծակ, ուրախությունը՝ չմոռանամ՝ իսկական ժապավենակապ:

Հաճախ գնում էի գրադարան: Դա հին, հազվագյուտ հարուստ գրադարաններից էր: Բայց որքա՜ն մռայլ էր այն, որքա՜ն պետք չէր ոչ մեկին: Հին, բարձիթողի տուն, հսկայական մեծ միջանցքներ, երկրորդ հարկ տանող ցուրտ սանդուղք, թաղիքի վրայից պատռած մոմլաթով պատած դուռ: Վերից վար քրքրված, մաշված գրքերով լցված երեք սրահ: Երկար սեղան, ամբիոնասեղան, փոքրամարմին, տափակակուրծք, անբարեհամբույր-լռակյաց վարիչը սև, հասարակ ինչ-որ հագուստով, նիհար, գունատ ձեռներով՝ թանաքաբիծ միջին մատին, և փնթի տեսքով մի պատանի գորշ բլուզով, փափուկ, վաղուց չխուզված մոխրագույն գլխով, որ կատարում էր վարիչի կարգադրությունները... ես գնում էի «ընթերցասրահ», կլոր, ածխահոտով լցված սենյակ մեջտեղում կլոր սեղանով, որի վրա դրված էին «Եպարխիլնիյի վեդոմոստի», «Ռուսսկի պալոմնիկ»: Սեղանի մոտ նստած, կռացած, մի տեսակ թաքուն հաստ գրքի էջերն էր թերթում մի մշտական ընթերցող՝

[3] Լեհական քառակող գլխարկ *(ծթ.)*:

նիհար պատանի, կարճ մաշված շինելով մի գիմնազիստ, շարունակ զգուշորեն քիթը սրբելով թաշկինակի ծայրով... Ուրիշ ո՞վ պիտի նստեր այստեղ մեր երկուսից բացի, հավասարապես զարմանալի իրենց միայնությամբ այս ամբողջ քաղաքում և այն բանով, ինչ կարդում էինք երկուսս էլ: Գիմնազիստը կարդում է գիմնազիստի համար բոլորովին անհեթեթ մի բան: Եվ ինձ էլ բազմիցս տարակուսանքով նայել էր վարիչը. ես պահանջում էի «Սեվերնայա պչելա», «Մոսկովսկի վեստնիկ», «Պոլյարնայա զվեզդա», «Սեվերնիյե ցվետի», Պուշկինի «Սովրեմենիկը»... Վերցնում էի, ի դեպ, և նորը՝ զանազան «Նշանավոր մարդկանց կենսագրություններ» բոլորը այն պատճառով, որ դրանց մեջ ինձ համար ինչ-որ նեցուկ գտնեմ, նախանձով համեմատեմ ինձ նշանավոր մարդկանց հետ... «Նշանավոր մարդի՜կ»: Ինչ անթիվ-անհամար բանաստեղծներ, վիպագիրներ, գրողներ են եղել աշխարհում, բայց դրանցից քանիսն են պահպանվել: Նույն և նույն անունները առհավետ: Հոմերոս, Հորացիոս, Վերգիլիոս, Դանտե, Պետրարկա... Շեքսպիր, Բայրոն, Շիլլեր, Գյոթե, Ռասին, Մոլիեր... Միշտ նույն «Դոն Կիխոտը», միշտ նույն «Մանոն Լեսկոն»... Այդ սենյակում, հիշում եմ, առաջին անգամ կարդացի Ռադիշչն՝ մեծ հիացմունքով. «Նայեցի շուրջս՝ և հոգիս մարդկային տառապանքներից խոցվեց»:

Երեկոյան դեմ գրադարանից դուրս գալով, լուռ քայլում էի մթնող փողոցներով: Այս ու այնտեղ լսվում էր դանդաղ ղողանջ: Տառապելով թախծից և՜ ինձ համար, և՜ նրա համար, և՜ հեռավոր հարազատ տանս համար, մտնում էի եկեղեցի: Սա ևս թվում էր, ոչ մեկին պետք չէր: Դատարկ, կիսամութ, հատուկենտ մոմերի լույսեր, մի քանի պառավ, ծերունի: Մոմ վաճառելու արկղի ետև կանգնած երեցփոխը՝ անշարժ, պատկառելի, մոխրագույն մազերը գեղջկավարի ուղիղ մազաբաժանով սանրած, առևտրականի խստությամբ: Պահակը հազիվ է քարշ տալիս հոգնած ոտքերը՝ մի տեղ ուղղելով ծռված և շատ ուժեղ այրվող մոմը, մի այլ տեղ փչելով այրված-մարող մոմի վրա, շուրջը տարածելով այրուքի և մոմի հոտ, հետո այդ կիսաայրուքը բռի մեջ տրորելով մյուս մնացորդների հետ, դարձնում է մոմագունդ, և երևում է, թե որքան խորապես ձանձրացրել է նրան մեր այս երկրային անհասկանալի գոյությունը յուր բոլոր խորհուրդներով՝ կնունքները, հաղորդությունները, պսակները, հուղարկավորությունները և բոլոր տոները, բոլոր պասերը, որ տարեցտարի կրկնվում են հավերժական հերթականությամբ: Քահանան միայն փարաջայով, առանց շուրջառի անսովոր նիհար, տնավարի և կնկավարի գլխաբաց, կանգնած է դեմքը բեմի պատկերակալի միջին դռանը, ցածր գլուխ է խոնարհում, այնպես որ կրծքից հեռանում, կախ է ընկնում փորուրարը և հառաչելով բարձրացնում է ձայնը, որ արձագանքում է տխուր, ապաշխարանքի կիսամթում, մռայլ ամայության մեջ. «Տեր իմ...»: Լուռ դուրս գալով եկեղեցուց, նորից ներշնչում եմ նախագարնանային ձմռան օդը, տեսնում գորշ մթնշաղը: Խոնարհ, կեղծ հեզությամբ ճերմակ գլուխն է իջեցնում իմ առջև մի մուրացկան՝ բուռը պահած, իսկ երբ բռնում ու սեղմում է ափի մեջ հինգկոպեկանոցը, նայում է ու հանկարծ զարմացնում. հին հարբեցողի ջրիկ-փիրուզագույն աչքեր և հսկայական, ելականման քիթ՝ երեք հատվածից, երեք խոշոր ելունդավոր և ծակոտկեն ելակներ... Ախ, դարձյալ տառապալից ուրախություն՝ եռակի ելականման քիթ:

Իջնում էի ցած Բոլխովսկայայով, նայում մթնող երկնքին. երկնքում տանջում էին հին տների տանիքների ուրվագծերը, անընմբռնելի հանգստացնող գեղեցկությունն այդ ուրվագծերի: Վաղեմի մարդկային ապաստան. ո՞վ է այդ գրել: Վառվում էին լապտերները, տաքուկ լուսավորվում էին խանութների պատուհանները, սևավուն էին մայթերով քայլողների կերպարանքները, իրիկունը կապտում էր, ինչպես լեղակ, քաղաքը դառնում քաղցր, հաճելի... Խուզարկուի նման հետապնդում էի մերթ մեկ, մերթ մի այլ անցորդի նայելով նրա թիկունքին, կրկնակոշիկներին, ջանալով ինչ-որ բան հասկանալ, տեսնել նրա մեջ, մտնել նրա մեջ... Գրել: Ահա տանիքների, կրկնակոշիկների, թիկունքների մասին պետք է գրել, և բնավ ոչ նրա համար, որ պետք է «պայքարել կամայականության և բռնության դեմ, պաշտպանել ճնշվածներին և հարստահարվածներին, տալ

ցայտուն կերպարներ, նկարագրել հասարակայնության, արդիականության, նրա տրամադրությունների և հոսանքների ընդհանուր վիճակը»: Քայլերս արագացնում էի, իջնում դեպի Օռլիկ: Երեկոն արդեն փոխվում էր գիշերվա, կամուրջի գազե լապտերն արդեն վառվում էր պայծառ, լապտերի տակ կռացած, բոբիկ ոտնաթաթերով հենց ձյան վրա կանգնած թափառաշրջիկը, ձեռները թևատակերը մտցրած, շան նման նայելով ինձ և ամբողջապես շան նման դողդողալով ,փայտյա ձայնով մռթմռթում էր. «Ձերդ պայծառափայլություն», հազին միայն պատռված չթե շապիկ էր և կարճ վարդագույն վարտիք, դեմքն ուռած էր, բշտիկավոր, աչքերը պղտոր-սառցային: Ես շտապով, գողի նման, բռնում ու մեջս էի թաքցնում նրան, դրա համար նրա ձեռքը խոթելով ամբողջ տասը կոպեկանոց... Կյանքը սարսափելի է: Բայց իսկապե՞ս «սարսափելի է»: Գուցե դա բոլորովին այլ բան է, քան «սարսափը»: Ահա ես օրերս հինգ կոպեկանոց տվեցի դրա մնան մի թափառաշրջիկի և միամտորեն բացականչեցի. «Համենայն դեպս, սարսափելի է, որ դուք այդպես եք ապրում», և պետք էր տեսնել, թե ինչպիսի անսպասելի հանդգնությամբ, հաստատ ու չարությամբ նա խոպոտ պատասխան բղավեց իմ հիմարությանը. «Բնավ սարսափելի չէ, երիտասարդ»: Իսկ կամուրջի ետև, մեծ տան ցածի հարկում շլացուցիչ փայլում էր երշիկեղենի հայելի ցուցափեղկը ամբողջապես ծածկված երշիկների և ապխտած ազդրամսերի այնքան հարուստ բազմազանությամբ, որ գրեթե չէր երևում խանութի սպիտակ ու լուսավոր ներսը, նույնպես վերից վար երշիկեղենով բեռնված: «Սոցիալական հակադրություններ»,— մտածում էի ես ծաղրանքով, ինչ-որ մեկին ի հեճուկս, անցնելով ցուցափեղկի լույսի և փայլի մոտով... Մոսկովսկայայի վրա ես մտնում էի կառապանների թեյարան, նստում այնտեղի խոսակցությունների, նեղվածքի և գոլորշիով լցված տաքության մեջ, նայում մսուտ, կարմիր դեմքերին, շեկ մորուքներին, ժանգոտած պլոկվող մատուցարանին, որի վրա իմ առջև դրված էին երկու սպիտակ թեյամաններ՝ կափարիչներին և բռնակներին փաթաթած թաց պարանիկներով... Ժողովրդի կենցաղի՞ ուսումնասիրություն: Սխալվում եք՝ միայն այս մատուցարանի, այս թաց պարանիկի:

12

Երբեմն գնում էի կայարան: Հաղթադարպասից սկսվում էր մթություն, գավառի գիշերային ամայություն: Եվ ահա մտովի տեսնում էի մի գավառային փոքրիկ քաղաք, անհայտ, գոյություն չունեցող, որ իմ երևակայության մեջ էր միայն, սակայն այնպես, ասես իմ ողջ կյանքն անցել էր այդ քաղաքում: Տեսնում էի լայն, ձյունածածկ փողոցները, ձյան միջից սևին տվող հյուղակները՝ կարմիր լույս նրանցից մեկում... Եվ հիացմունքով ասում էի ինքս ինձ. այո՛, այո՛, հենց այդպես էլ կգրես, ընդամենը երեք բառ՝ ձյուն, հյուղակ, և ճրագ նրա մեջ... ուրիշ ոչինչ: Ձմռան դաշտային քամին արդեն բերում էր շոգեքարշերի ճչոցները, նրանց թշշոցը և այդ քաղցր, հեռուների, լայնարձակության զգացումով մինչև հոգու խորքը հուզող քարածխահոտը: Նրանց ընդառաջ, սևին տալով, սլանում էին կառքերը ուղևորներով. արդեն Մոսկովյան փոստատա՞րն է եկել: Եվ իսկապես, բուֆետի սրահը շոգել է բազմությունից, կրակներից, խոհանոցի հոտերից, ինքնաեռից, ֆրակների փեշերը ծածանելով վազվզում էին թաթար սպասավորները, բոլորը ծուռոտն, թխադեմ, լայն այտոսկրոտ, ձիու ակնախոռոչներով և գնդի պես կլոր, խուզած գորշակապույտ գլուխներով... Ընդհանուր սեղանի շուրջ մի ամբողջ վաճառականական ընկերություն է, աղանդավորներն ուտում են սառն թառափամիս ծովաբողկով. խոշոր և պինդ կնկա դեմքեր շաֆրանի գույնի, նեղ աչքեր, աղվեսամորթու մուշտակներ... Կայարանի գրքի կրպակը ինձ միշտ հրապուրում է: Եվ ահա ես քաղցած գայլի նման պտտվում եմ նրա շուրջը, ձգվում-նայում եմ գրքերի դեղին և գորշ կռնակների գրերին: Այդ ամենն այնպես է բորբոքում մեկնումի, վագոնների իմ մշտական փափագը և դառնում է այնպիսի մի կարոտ նրա հանդեպ, որի հետ կարող էի անասելի երջանիկ լինել որևէ տեղ ճամփորդելով, որ շտապում եմ դուրս վազել, ինձ գցում եմ մի կառք և սլանում քաղաք,

խմբագրություն: Որքա՜ն լավ է, այնուամենայնիվ, այս միախառնումը՝ սրտի ցավ և արագություն: Սահնակի մեջ նստած սուզվելով և զարկվելով դարուփոսերում, բարձրացնում եմ գլուխս՝ լուսնյակ գիշեր է, պղտոր շարժվող ձմռան ամպերի ետևից երևում, սպիտակին է տալիս, լուսավորում լուսնի գունատ դեմքը: Որքա՜ն բարձր է այն, որքա՜ն օտար ամեն ինչին: Ամպերն անցնում են, բացում նրան, հետո նորից ծածկում. լուսնի համար միևնույն է, ամպերը նրա պետքը չեն: Գլուխս ետ գցած պահում եմ ցավելու աստիճան, աչքս չեմ կտրում լուսնից և շարունակ փորձում եմ հասկանալ, թե ե՞րբ է այն փայլելով հանկարծ դուրս պրծնում ամպերի միջից. ինչպիսի՞ն է այն: Մեռելի սպիտակ դիմա՞կ: Ամբողջապես ներսից փայլող, բայց ինչպիսի՞: Ստեարինե՞: Այո, այո, ստեարինե: Այդպես կասեմ որևէ տեղ: Նախասենյակում հանդիպում եմ զարմացած Ավիլովային: «Ահ, որքան ժամանակին եկաք: Գնանք համերգի»: Նրա հագին ինչ-որ զգեստ է սև ժանյակավոր, շատ գեղեցիկ, որ նրան դարձնում է ավելի փոքր, ավելի բարեկազմ, բացում ուսերը, թևերը և կրծքի քնքուշ եզրերը, նա մազերը հարդարել է վարսավիրի մոտ, թեթևակի շպարված է, որից աչքերն ավելի պայծառ են, մուգ: Հագցնում եմ մուշտակը, դժվարությամբ զսպելով ինձ, որ հանկարծ չհամբուրեմ նրա այնքան մոտիկ մերկ մարմինը, գանգրացրած անուշաբույր մազերը... Ազնվականների ակումբի բազում ջահերով փայլփլող սրահի բեմում մայրաքաղաքի մեծանուններն են, գեղեցկուհի երգչուհին և թխահեր, հաղթամարմին երգիչը, որ, ինչպես բոլոր երգիչներն, ապշեցնում էր իր առողջությամբ, ջահել հովատակի բիրտ գեղեցիկ ուժով: Նա, մեծ ոտնաթաթերին լաքե կոշիկները փայլեցնելով, հոյակապ կարված ֆրակով, սպիտակ կրծքով և սպիտակ փողկապով, հանդուգն և հերոսական թնդացնում է քաջություն, առնականություն, սպառնալից պահանջ: Երգչուհին մեկ անջատվելով, մեկ միախառնվելով շտապով պատասխանում է նրան, ընդհատում քնքուշ կշտամբանքներով, գանգատներով, սիրատենչ թախծով և հիացական ուրախությամբ, շտապկոտ-երանելի, քրքջուն գեղգեղանքներով...

13

Հաճախ վեր էի թռչում լույսը բացվելուն պես: Ժամացույցին նայելով, տեսնում էի, որ դեռ յոթը չկա: Սարսափելի ուզում էի նորից փաթաթվել վերմակի մեջ և դեռ պառկել այդպես տաքուկ. սենյակում ցուրտ աղջամուղջ էր, դեռևս քնած հյուրանոցի լռության մեջ լսվում էր միայն շատ վաղ ժամի մի բան՝ ինչպես միջանցքի ծայրին հագուստի խոզանակն է բանեցնում սպասավորը, թխկոցով դիպչում կոճակներին: Բայց ինձ համակում էր այնպիսի մի սարսափ նորից օրը զուր անցկացնելու, այնպիսի անհամբերություն, որքան կարելի է շուտ,— և այսօր արդեն ինչպես հարկն է,— նստել սեղանի առջև, որ նետվում էի դեպի զանգը, համառորեն միջանցքով քշում նրա կանչող ղողանջը: Որքան ամեն ինչ օտար է, զզվելի՝ այս հյուրանոցը, այս կեղտոտ սպասավորը, որ խոզանակն է քստքստացնում ինչ-որ տեղ, խղճուկ թիթեղյա լվացարանը, որից շեղակի երեսիդ է զարկվում սառցասառն ջրաշիթը: Որքան ողորմելի է իմ ջահել նիհարությունը բարալիկ գիշերանոցի մեջ, ինչպես է քարացել աղավնին, գունդ դարձած կծկվել ապակիների ետև լուսամուտագոգի հատիկավոր ձյան վրա: Սիրտս հանկարծ բռնկվում էր բերկրալի, հանդուգն վճռականությամբ, ոչ, այսօր իսկ հեռացիր, վերադարձիր Բատուրինո, հարազատ, հրաշալի տունդ: Սակայն շտապով թեյը խմելով, մի կերպ հավաքելով մի քանի գրքիկները, որ ընկած էին լվացարանի կողքի ցածր սեղանին, մյուս համարը տանող դռան մոտ, ուր ապրում էր մի թառամած տեսքով, թախծոտ-գեղեցիկ կին ութ տարեկան երեխայի հետ, ես ամբողջապես խորասուզվում էի իմ սովորական առավոտյան զբաղմունքի մեջ. ինձ պատրաստում էի գրելու՝ լարված վերլուծում այն, ինչ կար իմ մեջ, որոնում իմ մեջ այնպիսի մի բան, որ թվում է ահա ուր որ է կգոյանա, կձևակերպվի... սպասում էի այդ պահին և արդեն վախ էի զգում, որ դարձյալ, դարձյալ բանը կավարտվի սպասումով, շարունակ սաստկացող հուզումով, սառչող ձեռներով, և այնուհետև կատարյալ հուսահատությամբ և փախուստով քաղաք, որևէ տեղ, խմբագրություն: Գլխումս նորից

խառնաշփոթ է, կատարվում էր տառապալից մի բան իր ինքնակամությամբ, շփոթությամբ, բազում ամենատարբեր զգացումներով, մտքերով, պատկերացումներով... Հիմնականը միշտ սեփականն էր, անձնականը և մի՞թե այն ժամանակ իսկապես էլ ինձ հետաքրքրում էին ուրիշները, որքան էլ լարված հետևեի նրանց: Էհ, մտածում էի, միգուցե պարզապես սկսեմ պատմություն հենց իմ մասին: Սակայն ինչպե՞ս: Նման «Մանկություն, պատանեկությա՞նը»: Թե՞ ավելի պարզ. «Ծնվել եմ այսինչ տեղում, այսինչ ժամանակ...»: Սակայն, աստված իմ, որքան չոր է, չնչին և ոչ ճիշտ: Չէ՞ որ ես բնավ այդ չեմ զգում: Ամոթ է, անհարմար է ասել, սակայն դա այդպես է. ծնվել եմ տիեզերքում, ժամանակի և տարածության անսահմանության մեջ, ուր իբր մի ժամանակ գոյացել է արեգակնային համակարգությունը, հետո՝ ինչ-որ բան, որ կոչվում է արեգակ, հետո՝ երկիր... Սակայն դա ի՞նչ բան է: Ի՞նչ գիտեմ ես այդ ամենի մասին, դատարկ խոսքերից զատ: Երկիրը եղել է սկզբում գազանման, լուսատու զանգված... Հետո, միլիոնավոր տարիներ անց, այդ գազը դարձել է հեղուկ, հետո հեղուկը պնդացել է, և այդ ժամանակից անցել է իբր ևս երկու միլիոն տարի, երկրի վրա առաջացել են միաբջիջներ, ջրիմուռները, ինֆուզորիաները... Իսկ հետո՝ անողնաշարավորները՝ ճիճուները, կակղամորթները... Այնուհետև՝ երկկենցաղները, Իսկ երկկենցաղներից հետո՝ վիթխարի սողունները: Եվ հետո՝ ինչ-որ քարանձավի մարդ և կրակի հայտնագործումը նրա կողմից... Հետո ինչ-որ Քաղդեա, Ասորեստան, ինչ-որ Եգիպտոս, որ իբր հենց միայն բուրգեր է շինել և մումիաներ զմռսել... Ինչ-որ Արտաքսես, որ հրամայել է ճիպոտահարել Հելլեսպոնտոսին... Պերիկլես և Ասպազիա, ճակատամարտ Թերմոպիլեի մոտ, Մարաթոնյան ճակատամարտ... Ի դեպ, այդ ամենից առաջ եղել են այն առասպելական օրերը, երբ Աբրահամը իր հոտերն առած ելել է և գնացել ավետյաց երկիր... «Հավատով Աբրահամը հպատակվեց կոչմանը երթալու երկիր, որ իրեն ժառանգություն էր խոստացված, և գնաց, չիմանալով, թե ուր է գնում...»: Այո, չիմանալով: Այնպես, ինչպես և ես: «Հավատով հպատակվեց կոչմանը... Հավատով ինչի՞ն: Աստուծո պատվիրանի սրտագին ողորմածությա՞նը: «Եվ գնաց, չիմանալով, թե ուր...»: Ոչ, իմանալով, ինչ-որ երջանկության, այսինքն այն բանին, որ սիրելի է, լավ, որ կա ուրախություն, այսինքն սիրո զգացում՝ կյանք... Չէ՞ որ այդպես եմ ապրել և ես՝ միշտ, միայն այն բանով, ինչ տալիս է սեր, ուրախություն…

Սեղանի կողքին դռան ետև արդեն լսվում էին ձայներ՝ կանացի, մանկան, չխկում էր լվացարանի ոտնակը, ջուրը թափթփվում, թեյ էր եփվում, սկսվում էին հորդորները. «Կոստենկա, դե կեր բուլկին»: Վեր էի կենում և սկսում քայլել սենյակում: Հիմա էլ այս Կոստենկան... Մայրը նրան թեյ խմացնելով գնում էր ինչ-որ տեղ մինչև կեսօր: Վերադառնալով, նավթավառի վրա մի բան էր պատրաստում, կերակրում էր նրան և նորից գնում: Եվ ի՜նչ տառապանք էր տեսել, թե այդ Կոստենկան, որ դարձել էր համարների ընդհանուր երեխա, ինչպես է ամբողջ օրը քարշ գալիս համարից համար, մտնում մեկ մի, մեկ մյուս կենվորի մոտ, ով տանն է, անհամարձակ ինչ-որ բան է ասում, երբեմն ջանում է շողոքորթել, որևէ հաճելի բան ասել, իսկ նրան ոչ ոք չի լսում, ոմանք նույնիսկ ասում են արագ-արագ. «Դեհ գնա, գնա, տղա, մի խանգարիր, խնդրեմ»: Համարներից մեկում ապրում էր փոքրամարմին և տարեց մի տիկին, չափազանց լուրջ, չափազանց կանոնավոր, համարում էր իրեն մյուս բոլոր կենվորներից բարձր, միշտ անցնում էր միջանցքով հանդիպողներից ոչ մեկի երեսին չնայելով, հաճախ, նույնիսկ չափազանց հաճախ փակվում էր զուգարանում և հետո աղմուկով ջուր թողնում այնտեղ: Այդ տիկինն ուներ խոշոր, լայնամեջք մոպս, բտված այնքան, որ ճարպի ծալքեր էին գոյացել մինչև վզատակը, դուրս թռած ապակյա-հաղարջանման աչքերով, այլանդակ ջարդված քթով, գոռոզ, արհամարհական դուրս ցցված ստորին ծնոտով և երկու ժանիքների միջև սեղմված գորտի լեզվով: Սովորաբար շան դեմքին միշտ միևնույն արտահայտությունն էր,— ոչինչ չարտահայտող, ուշադիր անպատկառությունից բացի, սակայն նա չափազանց նյարդային էր: Եվ ահա, եթե Կոստենկան, որևէ մեկի կողմից համարից վռնդված, միջանցքում հանդիպում էր այդ մոպսին, անմիջապես լսվում էր, ինչպես մոպսի կոկորդը

բռնվում էր չար շնչահեղձությամբ, լսվում էր կլկլոց, խռխռոց, որ արագ վերածվում էր զայրալից կատաղության և պայթում բարձր, զարհուրելի հաչոցով, որից Կոստենկան սկսում էր հիստերիկ ճչալ…

Նորից նստելով սեղանի մոտ, սկսում էի տանջվել կյանքի խղճուկությունից, և, իր առօրեականությամբ հանդերձ, նրա խիստ բարդությունից: Հիմա արդեն ուզում էի մի բան ասել Կոստենկայի մասին և էլի այդ կարգի ուրիշ բաների մասին: Ահա, օրինակ, Նիկուլինայի պանդոկում, հիշում եմ, մոտ մի շաբաթ ապրեց և աշխատում էր մի կարուհի, շարունակ ինչ-որ բան էր ձևում սեղանին, որ ամբողջապես ծածկված էր կտորտանքով, հետո թելակարածը դնում էր կարի մեքենայի տակ և սկսում չխկչխկացնել, կարել… Ինչ ասես արժեր միայն այն, թե ձևելիս նա ինչպես ծռմռում էր իր խոշոր չոր բերանը՝ հետևելով մկրատի պտույտներին, ինչպես էր ինքնաեռի շուրջ վայելում թեյը, շարունակ ջանալով որևէ հաճելի բան ասել Նիկուլինային, ինչպես նա շինծու-աշխույժ խոսելով հետը, մեկնում էր իր,— իբր բնազդաբար,— խոշոր աշխատավորի ձեռքը սպիտակ հացի կտորներով զամբյուղին և աչքի պոչով նայում մուրաբայի ամանին: Հապա հենակներով կաղ աղջիկը, որին օրերս հանդիպեցի Կարաչևսկայայի վրա: Բոլոր կաղերը, սապատավորները քայլում են հանդուգն, գոռոզ: Սա համեստ սուզվում էր ինձ ընդառաջ հենակների սև փայտերը երկու ձեռներում պահած, սուզվելիս հավասարաչափ հենվելով նրանց և վեր տնկելով ուսերը, որոնց տակ հենակների սև եղջյուրիկներն էին, և սևեռուն նայում էր ինձ… Մուշտակը կարճ էր, ինչպես աղջնակի, աչքերը խելացի, պայծառ, մաքուր, մուգ շագանակագույն՝ նույնպես աղջնակի, սակայն կյանքում ամեն ինչ տեսած, նրա դառնություններն ու գաղտնիքները ճաշակած… Որքա՜ն գեղեցիկ են որոշ դժբախտ մարդիկ, նրանց դեմքերը, աչքերը, որոնց մեջ ուղղակի երևում է նրանց հոգին:

Հետո ես կրկին փորձում էի խորասուզվել և մտածել այն, ինչից պետք է սկսեի գրել իմ կյանքը: Այո, ինչից: Համենայն դեպս, չէ որ պետք է նախ և առաջ ասել, եթե արդեն ոչ տիեզերքի, որում ես աշխարհ եմ եկել որոշակի մի պահին, ապա գոնե Ռուսաստանի մասին. հասկացնել տալ ընթերցողին, թե որ երկրին եմ ես պատկանում, ինչ կյանքի արդյունք է իմ աշխարհ գալը: Սակայն ի՞նչ գիտեմ ես այդ մասին: Սլավոնների ցեղական կենցաղը, սլավոնական ցեղերի գիտությունները… Սլավոններն աչքի էին ընկնում բարձր հասակով, բաց շիկավուն մազերով, քաջությամբ, հյուրընկալությամբ, պաշտում էին արևը, որոտն ու կայծակը, երկրպագում էին անտառի ոգիներին, ջրահարսերին, ջրոգիներին, «բնության ուժերն ու երևույթներն ընդհանրապես»… Ուրիշ ի՞նչ: Իշխանների դերը, ցարգրադյան պատվիրակները իշխան Վլադիմիրի մոտ, Պերունի Դնեպր տապալումը համընդհանուր ժողովրդական ողբ ու կոծով… Յարոսլավ Իմաստունը, նրա որդիների և թոռների երկպառակությունները… Ինչ-որ Վսեվոլոդ Բոլշոյե Գնեզդո… Բայց դա դեռ ոչինչ, ես բացարձակապես ոչինչ չգիտեմ նույնիսկ ներկայիս Ռուսաստանի մասին: Լավ, ասենք, սնանկացող կալվածատերեր, քաղցի մատնված գյուղացիներ, զեմստվոյական պետեր, ժանդարմներ, ոստիկաններ, գյուղական քահանաներ, ըստ գրողների, անպայման ծանրաբեռնված բազմանդամ ընտանիքով… Հետո ի՞նչ: Ահա Օրյոլը, ռուսական ամենահիմնական քաղաքներից մեկը, գոնե նրա կյանքը, նրա մարդկանց կյանքը ճանաչեի, իսկ ի՞նչ էի ես տեսել: Փողոցներ, կառապաններ, անիվների տակ տրորված ձյուն, խանութներ, ցուցափեղկեր՝ շարունակ ցուցափեղկեր, ցուցափեղկեր… Արքերեց, նահանգապետ… հսկա, գեղեցիկ և գազան պրիստավ Ռաշևսկի… Մեկ էլ Պալիցինը՝ Օրյոլի պարծանքը, նրա սյուներից մեկը, մեկն այն կատաղի պահպանողականներից, որոնցով ի սկզբանե հայտնի էր Ռուսաստանը. ծեր, տոհմիկ, Ակսակովի, Լեսկովի բարեկամը, ապրում է հին ռուսական պալատների նման մի տեղ, որի գերանե պատերը ծածկված են հազվագյուտ հնագույն սրբապատկերներով, ման է գալիս գույնզգույն սեկով ասեղնագործված լայն կապա հագած, գլուխը կլորաձև սուզված, բթադեմ է, նեղաչք, շատ սուր

միտք ունի, ըստ պտտվող լուրերի, զարմանալի կարդացած է... Ուրիշ էլ ի՞նչ գիտեմ այդ Պալիցինի մասին: Բացարձակապես ոչինչ:

Բայց այդտեղ արդեն վրդովվում էի. և ինչո՞ւ եմ ես պարտավոր որևէ բան կամ որևէ մեկին իմանալու կատարելապես, այլ ոչ գրելու այնպես, ինչպես գիտեմ և ինչպես զգում եմ: Նորից վեր էի թռչում և սկսում ետ ու առաջ քայլել, ուրախանալով իմ վրդովմունքի համար, կառչելով դրանից որպես փրկություն... Եվ հանկարծ տեսնում էի Սվյատոգորյան վանքը, որտեղ եղել էի անցյալ գարնանը, այլացեղ ուխտավորների բանակատեղին նրա պատերի տակ, մոնթին, որի ետևից էի ընկել վանքում, զուր փորձելով, որ նա ինձ գիշերելու մի տեղ տա, ինչպես նա ուսերը թոթվելով փախչում էր ինձնից և վազելով ամբողջապես ծածանվում՝ ձեռները, ոտքերը, մազերը, կապայի փեշերը, և ինչ բարակ, ճկուն իրան ուներ, պատանեկան, պեպեններով ծածկված դեմք, վախեցած կանաչ աչքեր և ուղղակի զարմանալի փարթամ, թեթև, ամեն մազը գեղեցիկ գանգրացող բաց ոսկեգույն մազեր… Հետո տեսնում էի այդ գարնանային օրերը, երբ թվում էր անվերջ նավարկում էի Դնեպրում... Հետո լուսաբաց ինչ-որ տեղ տափաստանում... այն, ինչպես արթնացա վագոնի չոր մահճակին, ամբողջովին սառած այդ չորությունից և առավոտյան ցրտից, տեսա, որ քրտնելուց սպիտակած ապակիների ետև ոչինչ չի երևում,— բացարձակապես անհայտ է, թե ուր է գնում գնացքը,— և զգացի, որ հրաշալին հենց այդ է, անհայտությունը... զգացումների առավոտյան սրացումով վեր թռա, բացեցի պատուհանը, հենվեցի պատուհանին, սպիտակ առավոտը, սպիտակ հոծ մշուշը, գարնանային առավոտի և մշուշի բույրով, վագոնի արագ սլացքից խփում է ձեռներիդ, դեմքիդ՝ թաց սպիտակեղենի նման…

14

Եվ ահա մի անգամ պատահեց այնպես, որ չգիտես ինչու քնեցի սահմանված ժամից ավելի: Եվ արթնանալով, ինչպես որ պառկած էի, մնացի պառկած՝ նայելով դեմս, պատուհանից դուրս, ձմեռային օրվա հավասարաչափ լույսին և զգալով բացառիկ հանգստություն, մտքի և հոգու բացառիկ սթափություն և շրջապատի ամեն ինչի ինչ-որ փոքրություն, պարզություն: Երկար պառկած էի այդպես, զգալով, թե որքան թեթև է սենյակը, որքան փոքր է այն ինձնից, ոչնչով և ոչ մի կերպ կապված չէ ինձ: Հետո վեր կացա և լվացվեցի, ըստ սովորության խաչակնքեցի սրբապատկերի առջև, որ կախված էր իմ էժանագին երկաթե մահճակալի սնարին,— այն նույնը, որ, ինչքան էլ զարմանալի լինի, հիմա էլ կախված է իմ ննջարանում. մուգ դեղնականաչ, ողորկ, ժամանակից քարացած փայտ՝ արծաթյա կոպիտ դրվագով, վրայի ուռուցիկությունները պատկերում են Աբրահամի ընթրիքին նստած երեք հրեշտակների, որոնց արևելյան վայրի արևայրված դեմքերը դարչնագույն նայում են նրա կլոր ծակերից,— մորս տոհմի ժառանգությունը, նրա օրհնությունն ինձ կյանք մտնելու, աշխարհ դուրս գալու այն գրեթե միանձնության վիճակից, որպիսին էին իմ մանկությունը, պատանեկությունը, առաջին երիտասարդ տարիները, իմ երկրային գոյության ողջ այն խուլ, թաքուն շրջանը, որ հիմա թվում է ինձ գոյությանս մի բոլորովին բացառիկ շրջան՝ նվիրական, հեքիաթային ժամանակի հնությամբ վերածված մի այլ, նույնիսկ ինձ համար օտար կեցության... Խաչակնքելով սրբապատկերի առջև, գնացի կատարելու գնում, որ գլուխս էր եկել պառկած ժամանակ: Ճանապարհին հիշեցի այդ գիշեր տեսածս երազը. Բարեկենդան էր, նորից ապրում էի Ռոստովցևների մոտ, նստած էի հորս հետ կրկեսում, նայում էի կրկեսի հրապարակին, որտեղ վազում էր սև պոնիների մի փոքրիկ երամակ, վեց հատ... նրանք շքեղորեն թամբված էին զանգուլակներով փոքրիկ պղնձյա լծաթամբիկներով և շատ պինդ սանձված էին,— սանձիկների կարմիր թավշյա փոկերը այնքան պինդ էին ձգված լծաթամբիկներին, որ աղեղնաձև ծռում էին հաստ կարճ վզերը, որոնց վրա սև ցցված էին կարճ

խուզած բաշերը,— իսկ ձարափնջերից դուրս էին ցցվել կարմիր փետրափնջերը... Նրանք վազում էին համերաշխ, հավասար շարքով, մանրավարգ, զանգուլակները զնգզնգացնելով և չարացած, համառորեն կռացրած սև գլուխները,— բոլորը նույն գույնի, նույն բոյի, միանման հաստակող, կարճոտն,— և դուրս վազելով հանկարծ հակառակվեցին, լկամները կրծելով և փետրափնջերը թափահարելով... ֆրակավոր դիրեկտորը երկար գոռում-գոչում, երկար շչացնում էր մտրակը, մինչև վերջապես ստիպեց նրանց ծնկի գալ և սկսեց գլուխ տալ ժողովրդին, որից հետո հանկարծ ուրախ քառարշավով թռչկոտող երաժշտությունը նրանց արագ տարավ, քշեց նրանց շարքը կրկեսի հրապարակի շուրջ, ասես հետապնդելով... գնացի գրենական պիտույքների խանութ, սև մոմլաթապատ հաստ տետր գնեցի: Վերադառնալով, սկսեցի թեյ խմել, մտածել. «Այո, բավական է: Միայն պետք է կարդամ, մեկ էլ երբեմն, առանց որևէ հավակնության, որոշ բաներ համառոտակի գրառեմ՝ զանազան մտքեր, զգացումներ, դիտողություններ...»: Եվ գրիչս թանաքի մեջ թաթախելով, խնամքով և հստակ գրեցի.

— Ալեքսեյ Արսենև: Գրառումներ:

Հետո երկար նստել էի, մտածելով, թե ինչ գրեմ, սենյակը ծխով լցրի, բայց չէի տառապում, միայն տխուր էի և խաղաղ: Վերջապես սկսեցի գրել.

— Խմբագրություն եկավ հայտնի տոլստոյական, իշխան Ն., խնդրում էր տպագրել Տուլայի սովյալների համար հանգանակության և ծախսերի իր հաշվետվությունը: Ոչ բարձրահասակ, բավական գիրուկ: Մի տեսակ փափուկ, կովկասյան սապոգների նման սապոգներ, ոչխարենուց փափախ, ոչխարենուց օձիքով վերարկու,— բոլորը հին, մաշված, սակայն թանկարժեք և մաքուր,— փափուկ մոխրագույն բլուզ գոտիով կապված, որի տակից կլոր երևում է փորը, և ոսկե քթակնոց: Իրեն պահում էր շատ համեստ, սակայն ինձ համար տհաճ էին նրա բարետես, խնամված կաթնագույն դեմքը և սառն աչքերը: Ես անմիջապես ատեցի նրան: Ես, իհարկե, տոլստոյական չեմ: Բայց և բնավ այն չեմ, ինչ մտածում են բոլորը: Ես ուզում եմ, որ կյանքը, մարդիկ լինեն գեղեցիկ, սեր, ուրախություն առաջացնեն, և ատում եմ միայն այն, ինչ խանգարում է դրան:

— Օրերս Բոլխովսկայայով բարձրանում էի դեպի վեր և այսպիսի պատկեր էր. մայրամուտ, սառնամանիք, բացվում է արևմուտքի երկինքը և այնտեղից, այդ կանաչ, վճիտ և սառը երկնքից ողողում է ամբողջ քաղաքը իրիկնային պայծառ լույսը, որի անհասկանալի թախիծը անհնարին է արտահայտել, իսկ մայթին կանգնած է ցնցոտիավոր, ցրտից կապտած ծերուկ երգեհոնահարը և լցնում է այդ սառնամանիք իրիկունն իր հալից ընկած երգեհոնի ձայներով, նրա սրինգային սուլոցներով, գլգլոցներով, խռխռոցներով և այդ սուլոցներից ու խռխռոցներից պոկվող ռոմանտիկական մեղեդիով, ինչ-որ հեռավոր, տարաշխարհիկ, հինավուրց, որը նույնպես քրքրում է հոգիդ՝ երազներով և ափսոսանքներով չգիտես ինչի…

— Ես ամեն տեղ թախիծ և վախ եմ զգում: Մինչև հիմա էլ աչքիս առաջ է այն, ինչ տեսա մի երկու շաբաթ առաջ: Դա նույնպես երեկոյան էր, միայն մութ, ամպամած: Պատահմամբ մտա մի փոքրիկ եկեղեցի, տեսա ճրագներ, որ մթության մեջ վառվում էին ամբիոնի մոտ հատակից քիչ բարձր, մոտեցա՝ և քարացա. երեք փոքրիկ մոմեր մանկական դագաղի գլխավերևում տխուր և թույլ լուսավորում էին այդ վարդագույն, թղթե ժանյակավոր եզրերով դագաղիկը և մեջը պառկած թխադեմ, ուռուցիկ ճակատով մանկանը: Պիտի թվար, թե նա քնած է, եթե չլիներ ինչ-որ հաճխապակյա մի բան նրա դեմքին, ինչ-որ մանիշակագույն՝ կլորիկ փակ կոպերին և բերանի եռանկյունուն, եթե չլիներ այն անսահմանորեն խաղաղ, հավերժական օտարացածությունը ամբողջ աշխարհից, որ կար նրա տեսքում:

—Գրել եմ և տպագրել երկու պատմվածք, սակայն դրանք ամբողջովին կեղծ են և տհաճ. մեկը քաղցի մատնված գյուղացիների մասին, որոնց չեմ տեսել և, ըստ էության, չեմ խղճում, մյուսը տափակ մի թեմայով՝ կալվածատիրության սնանկացման մասին, որ նույնպես մտացածին էր, այն դեպքում, երբ ուզում էի գրել միայն վիթխարի արծաթագույն ուռենու մասին, որ վեր էր խոյանում աղքատացած կալվածատեր Ռ-ի տան առջև, և մեկ էլ բազեի անշարժ խրտվիլակի մասին, որ դրված էր նրա առանձնասենյակում պահարանի գլխին և հավերժորեն, հավերժորեն ցած էր նայում իր դեղին ապակուց փայլուն աչքերով, խայտաբղետ-դարչնագույն թևերը տարածած: Եթե գրելու լինեմ սնանկացման մասին, ապա ես կուզեի արտահայտել նրա բանաստեղծականությունը միայն: Աղքատացած դաշտեր, աղքատացած մնացորդներ ինչ-որ կալվածքի, այգու, սպասավորների, ձիերի, որսորդական շների, ծերունիներ և ծեր կանայք, այսինքն «ծեր տերերը», որ ծվարել են ետնասենյակներում, առջևի սենյակները զիջելով ջահելներին՝ տխուր է այդ ամենը, հուզիչ: Ու մեկ էլ ասել, թե ինչպիսին են «ջահել տերերը». նրանք տգետ են, անբան, աղքատ, ու դեռ շարունակում են մտածել, որ իրենք ազնվական են, միակ բարձրագույն, ազնիվ դասը: Ազնվականական հովարավոր գլխարկներ, շեղօձիք վերնաշապիկներ, շալվարներ, սապոգներ... Հավաքվում են, թե չէ՝ անմիջապես խմիչք, ծիախոտ, պարծենկոտություն: Օղին խմում են շամպայնի հինավուրց բաժակներով, հոհոալով հրացանները լցնում են փուչ փամփուշտներով և կրակում վառված մոմերին, հանգցնում կրակոցներով: Այդպիսի «ջահել տերերից» մեկը, ոմն Պ. սնանկացած կալվածքից տեղափոխվել էր իր ջրաղացը, որն, իհարկե, վաղուց չէր աշխատում, և ապրում էր այնտեղ խրճիթում սիրուհու հետ, մի կնկա, որ հազիվ նշմարելի քիթ ուներ: Քնում էր նրա հետ թախտերին, ծղոտի վրա, կամ «այգում», այսինքն խրճիթի մոտի խնձորենու տակ: Խնձորենու ճյուղից կախված է կոտրված հայելու մի կտոր, որի մեջ արտացոլվում են սպիտակ ամպերը: Ձանձրույթից նստում ու շարունակ քարեր է նետում գյուղացիների բադերի վրա, որ լողում են ջրաղացի մոտի գետախորշում, և ամեն քարից բադերը բոլորը միանգամից, ամբողջ երամով, ճղճղոցով և սարսափելի աղմուկով այս ու այն կողմ են նետվում ջրի մեջ:

— Մեր նախկին ծառա կույր ծերուկ Գերասիմը քայլում էր, ինչպես բոլոր կույրերը՝ դեմքը վեր տնկած, ասես ականջ դնելով, բնազդային մղումով փայտով շոշափելով ճանապարհը: Նա ապրում էր գյուղի ծայրին գտնվող խրճիթում, մեն-մենակ, միայն լորի հետ, որ կեղևից շինած վանդակի մեջ նստած շարունակ այս ու այն կողմ էր նետվում, վեր թռչում, զարկվում քաթանե տանիքին, ճաղատացել էր օրեցօր շարունակ այդպես զարկվելով: Ամռանը ամեն լուսաբացին Գերասիմը, չնայած կուրությանը, գնում էր դաշտ լոր բռնելու, հրճվում նրանց ձայնածումով, որ տարածում էր դաշտերով մեկ կույր դեմքին փչող տաք քամին: Նա ասում էր՝ չկա աշխարհում ավելի հաճելի բան, քան սրտի նվաղման այն պահերը, երբ լորը շարունակ ավելի մոտենալով ցանցին, սկսում է որոշակի ընդմիջումներով խփել ավելի ու ավելի ուժգին, ավելի բարձր և ավելի սարսափելի որսկանի համար: Ահա իսկական, անշահախնդիր բանաստեղծ էր նա:

15

Գնալ խմբագրություն նախաճաշելու չէի ուզում: Գնացի Մոսկովսկայայի վրա գտնվող պանդոկ: Այնտեղ խմեցի մի քանի ըմպանակ օղի, վրայից ուտելով ծովատառեխ. ծովատառեխի տափակած գլուխը փռված էր ափսեին, նայում էի ու մտածում՝ «Սա նույնպես պետք է գրառել՝ ծովատառեխը սաղափյա այտեր ունի»: Հետո կերա տապակի մեջ սարքած սելյանկա[4]: Բավական շատ մարդ կար, բլինների և տապակած մանիշաձկան հոտ էր փչում, ցածր սրահը ծխով լի էր, սպիտակ ծառաները

[4] Թունդ կամ կծու համեմունքներով ձկնապուր *(ծթ.)*:

վազվզում էին, թռչկոտում մեջքները ծռած և ծոծրակները ետ գցած, տերը, որ իր ամեն ինչով նույնպես ռուսական ոգի ներկայացնող տիպար էր, աչքի պոչով ուշադիր հետևում էր նրանցից յուրաքանչյուրին՝ վաճառասեղանի ետև ցուցադրական կանգնած, խաղալով խստության և բարեպաշտության վաղուց յուրացրած դերը. քաղքենիներով զբաղեցված սեղանների միջև լուռ շարժվում էին և լուռ գլուխ տալիս բռնահանգույցներով կոպիտ կոշիկներ հագած ցածրահասակ, սև կույսերը, նման արջնագռավների, մեկնում սև գրքիկները՝ կազմին տրեզավոր արծաթյա խաչով, և քաղքենիները, խոժոռվելով, պրպտում էին դրամապանակներում եղածից ամենափոքրարժեք կոպեկները... Այդ ամենը ասես երազիս շարունակությունը լիներ, ես, մի քիչ հարբելով օդուց, սեյլանկայից և մանկությանս հիշողություններից, զգում էի, որ ուր որ է կարտասվեմ... Տուն վերադառնալով, պառկեցի և քնեցի: Մթնշաղին արթնանալով տխուր և ինչ-որ բանի զղջումով, մազերս սանրելիս նայեցի հայելուն, տհաճությամբ նկատեցի երկար մազերիս ավելորդ արտիստիկությունը և գնացի վարսավիրանոց: Վարսավիրանոցում սպիտակ բալախոնի տակ նստած էր ցածրահասակ, մերկ գանգով, ցցված ականջներով մեկը՝ մի մեծաչղջիկ, որի վերին շրթունքն ու այտերը վարսավիրը ծածկել էր օճառափրփուրի զարմանալի թանձր և առատ շերտով: Ողջ այդ կաթնայնությունը ածելիով հանելով, վարսավիրը նորից մի քիչ օճառեց և նորից հանեց՝ այս անգամ վարից վեր, վարժ, մանրիկ շարժումներով, և մեծաչղջիկը անշնորհք տեղից բարձրացավ, հետը քաշելով բալախոնը, կռացավ, կապտա-կարմրեց և մի ձեռքով այն կրծքի վրա պահելով, մյուսով սկսեց լվացվել:

— Օծանելիք ցողել կհրամայեի՞ք,— հարցրեց վարսավիրը:

—Փչի,— ասաց մեծաչղջիկը:

Եվ վարսավիրը ֆշշացրեց բուրումնալից հեղուկացիրը, անձեռոցիկով թեթևակի թփթփացրեց մեծաչղջիկի թաց այտերին:

— Համեցեք,— ասաց նա, արագ մի շարժումով հանելով բալախոնը: Եվ մեծաչղջիկը վեր կացավ ու երևաց բավական սարսափելի իր տեսքով. գանգը ականջավոր, մեծ, դեմքը նիհար ու լայն, կարմրասեկե, աչքերը սափրվելուց հետո մանկափայլ, բերանի ծակը՝ սև, իսկ ինքը կարճահասակ, թիկնեղ, իրանը կարճ, սարդանման, ոտները բարակ և թաթարավարի ծուռ: Վարսավիրի ձեռքը խոթելով թեյանվեր, նա հագավ իր հիանալի սև վերարկուն և գլխարկը, սիգար կպցրեց և դուրս եկավ: Վարսավիրը դարձավ ինձ.
— Գիտե՞ք սա ով է: Առաջին հարուստը, վաճառական Երմակովը: Գիտե՞ք նա ինչքան է տալիս թեյանվեր: Ահա՛:

Նա բացեց ափը և, ուրախ ծիծաղելով, ցույց տվեց.

— Ուղիղ երկու կոպեկ:

Հետո ես, ըստ սովորության, գնացի թափառելու փողոցներում: Եկեղեցու բակը տեսնելով, ներս մտա եկեղեցի. միայնությունից, տկարությունից արդեն սովորություն էր առաջացել եկեղեցի գնալու: Այնտեղ տաք էր և տխուր-տոնական մոմերի փայլից, որ մեծ փնջերով տաք այրվում էին բարձր մոմակալների մեջ գրակալի շուրջ, գրակալի վրա դրված էր պղնձյա խաչ կեղծ սուտակներով, որի առջև կանգնած էին պատարագիչները և գորովագին-տխուր երգում էին «Խաչին ենք քո խոնարհվում, տեր...»: Մուտքի մոտի կիսամթում կանգնած էր երկար չույկա, ռետինե կրկնակոշիկներ հագած մի մեծամարմին ծերուկ, ծերացած ձիու նման պինդ ու կոպիտ և խստաձայն (որպես խրատ ինչ-որ մեկին) գվվում էր ձայնակցելով: Իսկ բազմության մեջ գրակալի կողքին կանգնած էր ուխտավորը առջևից տաք լուսավորված մոմի ոսկեգույն լույսով: Նա

անձավային նիհար էր, նրա կախ գցած դեմքը, սրբապատկերային-նուրբ և մուգ, գրեթե չէր երևում երկար սև մազափնջերի տակից, որ կուսականորեն, աբեղայավարի և կանացի կախ էին ընկած այտերի երկայնությամբ. ձախ ձեռքին նա պինդ պահել էր բարձր փայտե ցուպը, որ երկար տարիների ընթացքում տրորվել էր փայլելու աստիճան, ուսին սև կաշվե տոպրակ էր, նա կանգնած մի միայնակ, անշարժ, բոլորից օտարացած: Նայում էի, և նորից արցունք էր գալիս աչքերիս՝ կրծքումս անզուսպ կերպով բարձրացող քաղցր և դառնագին զգացմունքից՝ հայրենիքի, Ռուսաստանի, նրա ողջ հետամնաց հնությամբ: Մեկը ետևիցս, ցածից կամացուկ խփեց ուսիս մոմով. շրջվեցի՝ ետևս կորացած ծեր կին էր լայն վերարկուով և մեծ շալի մեջ փաթաթված, մեն-մի ցցված ատամով. «Խաչին, տե՛ր»: Ուրախ հնազանդությամբ վերցրի մոմը նրա սառը, կապտավուն եղունգներով մեռած ձեռքից, քայլ արեցի դեպի կուրացնող մոմակալը, անշնորհք կերպով, և ամաչելով իմ անշնորհքությունից, մի կերպ մոմը կանգնեցրի մյուս մոմերի կողքին ու հանկարծ մտածեցի. «Կմեկնե՛մ»: Եվ, ետ քաշվելով ու գլուխ տալով, արագ, զգուշորեն դուրս եկա մուտքի կիսամութը, ետևումս թողնելով եկեղեցու հաճելի և հանգստավետ լույսն ու ջերմությունը: Եկեղեցու գավիթում դեմս ելավ անբարեհամբույր մթություն, քամի, որ սուլում էր չգիտես որտեղ վերևում... «Մեկնում եմ»,— ասացի ինձ, գլխարկս դնելով, վճռելով մեկնել Սմոլենսկ:

Ինչո՞ւ Սմոլենսկ: Երազանքներիս մեջ Բրյանսկի «Բրինսկի» անտառներն էին, «բրինսկի» ավազակները... Ինչ-որ նրբանցքում մտա պանդոկ: Պանդոկում մի սեղանի առջև բղավում էր, գլուխը ցած գցած, հարբած ձևանում գարշելի մեկը, խաղալով ռուսական սիրված՝ կարեկցանք սեփական կործանմանը. «Կորստաբեր մի սխալով տաժանավայր ընկա ես»: Զզվանքով նրան էր նայում հարևան սեղանից մեկը՝ սև նոսր բեղերով, գլուխը ետ գցած՝ դատելով երկար վզից և բարակ մաշկի տակից ետ ու առաջ շարժվող սուր, խոշոր և շարժուն ադամախնձորից, գողի մեկը: Վաճառասեղանի մոտ ճոճվում էր երկայնահասակ, հարբած մի կին, նիհար ոտներին կպած բարակ զգեստով, երևում է, լվացարարուհի. նա, բուֆետապանին ինչ-որ մեկի ստորությունն ապացուցելով, խփում էր վաճառասեղանին ապակենման-փայլուն, բարալիկ, լվացքից մաշված մատներով. թրաշավոր փոքրիկ բաժակը օղիով դրված էր նրա առջև, նա մեկ ձեռքն էր առնում այն, պահում, դարձյալ չխմելով, մեկ նորից դնում էր սեղանին և նորից սկսում խոսել մատները սեղանին խփելով: Ուզում էի գարեջուր խմել, սակայն պանդոկի ծանր օդը չափազանց էր գարշահոտ, լամպը չափազանց խղճուկ էր վառվում, սառած փոքրիկ լուսամուտագոգերից, նրանց վրայի փտած լաթերից կաթկթում էր…

Ավիլովայի մոտ, դժբախտաբար, ճաշասենյակում հյուրեր կային... «Ա-ա՜,— ասաց նա:— Մեր սիրելի բանաստեղծը: Դուք ծանո՞թ եք»: Ես բարևեցի նրան, գլուխ տվեցի հյուրերին: Ավիլովայի կողքին նստած էր ծեր, կնճռոտ մի պարոն խուզած բեղերով, դարչնագույն ներկած, դարչնագույն կեղծամը գագաթին, սպիտակ մետաքսե ժիլետով, սև այցեզգեստով. արագ տեղից վեր կենալով, նա իր հասակի համար զարմանալի ճկունությամբ պատասխանեց ինձ չափազանց քաղաքավարի գլխի խոնարհումով, նրա այցեզգեստի լանջափեշերը երիզված էին սև տրեզահանգույցով, որ ինձ միշտ շատ դուր էր գալիս, հարուցում նախանձս և երազանք այդպիսի այցեզգեստ ունենալու: Սեղանի մեջտեղը զբաղեցրել էր անդադար և շատ ճարտար խոսող մի տիկին, որ ինձ մեկնեց ծովաշան մաշկաթաթի նման լիքը ձեռքը, որի ողորկ ուռուցիկության վրա երևում էին ձեռնոցների կարերից մնացած ատամնավոր գծերը: Նա խոսում էր շտապով, մի քիչ շունչը կտրվելով. կինը բոլորովին վիզ չուներ, բավական հաստ էր, հատկապես ետևից, թևատակերի մոտ, իրանը, սեղմիրանով ձգված, քարացած կլոր ու պինդ. ուսերին մոխրագույն մորթի էր, որի հոտը, քաղցրավուն օծանելիքների, բրդյա զգեստի և տաք մարմնի հոտին խառնված, չափազանց հեղձուցիչ էր:

Ժամը տասին հյուրերը վեր կացան, սիրալիրություններ շռայլեցին և գնացին:

Ավիլովան ծիծաղեց:

—Օ՜հ, վերջապես,— ասաց նա:.— Գնանք, նստենք իմ սենյակում: Այստեղ պետք է օդանցքը բացել... Սակայն, սիրելիս, ինչո՞ւ եք այդպես մի տեսակ,— քնքուշ կշտամբանքով ասաց նա, երկու ձեռներն ինձ մեկնելով:

Սեղմեցի նրա ձեռքերն ու պատասխանեցի.

— Վաղը մեկնում եմ…

Նա նայեց ինձ վախեցած.

— Ո՞ւր:

—Սմոլենսկ:

— Ինչո՞ւ:

— Չի ստացվում, չեմ կարողանում այլևս այսպես ապրել…

— Իսկ Սմոլենսկո՞ւմ ինչ կա: Լավ, արի նստենք... Ես ոչինչ չեմ հասկանում…

Նստեցինք բազմոցին, որ ծածկված էր զոլավոր խտակտավից ամառային ծածկոցով:

— Ահա, տեսնո՞ւմ եք այս խտակտավը,— ասացի ես:— Վագոնային է: Ես նույնիսկ այս կտավին հանգիստ նայել չեմ կարողանում, մեկնելու ցանկություն եմ ունենում:

Նա նստեց ավելի խոր, ոտքերը դեմս պարզվեցին:

— Բայց ինչո՞ւ Սմոլենսկ,— հարցրեց, նայելով ինձ տարակուսած աչքերով:

— Հետո Վիտեբսկ... Պոլոցկ…

— Ինչո՞ւ:

— Չգիտեմ: Նախ և առաջ ինձ շատ դուր են գալիս բառերը՝ Սմոլենսկ, Վիտեբսկ, Պոլոցկ…

— Ինչպե՞ս, չե՞ք կատակում:

— Ոչ, կատակ չի: Մի՞թե չգիտեք, թե որքան գեղեցիկ են որոշ բառեր: Սմոլենսկը միշտ վառվել է հնում, միշտ պաշարել են այն... Ես ինչ-որ տոհմական-հարազատ բան եմ զգում այդ քաղաքի հանդեպ. այնտեղ մի ժամանակ, մի ինչ-որ սարսափելի հրդեհի ժամանակ այրվել են մեր տոհմի ինչ-որ հին արտոնագրեր, որի պատճառով մենք, կարծեմ, զրկվել ենք մեծ ժառանգական իրավունքներից և տոհմական արտոնություններից…

— Գնալով ավելի եք դժվարանում: Շա՞տ եք տխրում: Նա ձեզ չի՞ գրում:

— Ոչ: Բայց բանն այդ չէ: Օրյոլյան այս կյանքն ինձ համար չէ: «Գիտի եղջերուն քոչվոր արոտավայրերը յուր...»: Եվ գրական գործունեությունս էլ բանի պետք չէ: Նստում եմ ամբողջ առավոտ, իսկ գլխումս այնպիսի անմտություններ են, ասես խելագար լինեմ: Եվ ինչո՞վ եմ ապրում: Մեր Բատուրինոյում կա մի խանութպանի աղջիկ, որ հույսը կորցրել է ամուսնանալու և ապրում է միայն սուր և չար դիտողականությամբ: Ես էլ եմ այդպես ապրում:

— Որքան երեխա ես դեռ,— ասաց նա քնքշորեն, մազերս շոյելով:

— Արագ են զարգանում միայն պարզագույն օրգանիզմները,— պատասխանեցի:— Եվ հետո ո՞վ է երեխա: Մի անգամ, ահա, գալիս էի Օրյոլ, ինձ հետ գնացքում նստած էր Ելեցկի շրջանային դատարանի անդամ, պատվավոր, լուրջ մի մարդ, տեսքով նման ագռավի թագավորի... Երկար ժամանակ նստել, կարդում էր «Նովոյե վրեմյա», հետո վեր կացավ, դուրս եկավ և կորավ: Ես նույնիսկ անհանգստացա, նույնպես դուրս եկա ու բացեցի միջանցքի դուռը: Գնացքի դղրդոցի մեջ նա ոչինչ չէր լսել և չէր տեսել ինձ, և, ի՞նչ եք կարծում, ի՞նչ տեսա: Նա լոթիավարի պարում էր, ոտքերով խելքից-մտքից դուրս շարժումներ էր անում անիվների շարժմանը ներդաշնակ:

Ավիլովան աչքերը բարձրացրեց, նայեց ինձ և հանկարծ հարցրեց կամացուկ, բազմանշանակ.

— Կուզե՞ք գնանք Մոսկվա:

Ինչ-որ բան զարհուրելիորեն ցնցվեց մեջս... Կարմրեցի, հրաժարվելով՝ շնորհակալության խոսքեր էի քրթմնջում... Մինչեւ օրս էլ հիշում եմ այդ պահը մեծ կորստի ցավով:

16

Հաջորդ գիշերն արդեն անցկացրի վագոնում, երրորդ կարգի դատարկ կուպեում: Բոլորովին մենակ էի, նույնիսկ մի քիչ վախենալի էր: Լապտերի թույլ լույսը տխուր դողդողում էր, երերում փայտե նստարաններին: Կանգնել էի սև պատուհանի մոտ, որի անտեսանելի ճեղքերից փչում էր սարսռացնող ցուրտ, և դեմքս լույսից ծածկած, լարված նայում էի գիշերին, անտառներին: Հազարավոր կարմիր մեղուներ էին սլանում, ծածանվում այնտեղ, երբեմն ձմռան ցրտի հետ խունկի, շոգեքարշի մեջ այրվող փայտերի հոտ էր փչում... Օ՜, որքան հեքիաթային մռայլ, խստատես, վեհաշուք էր այդ անտառային գիշերը: Անվերջանալի, նեղ, խոր արահետ անտառի ճամփի, վիթխարի, մութ ստվերներ դարավոր սոճիների, որ խիտ, թավ շարքով շարժվում էին ճամփի երկայնությամբ: Պատուհանների լուսավոր քառանկյունիները շեղ վազում էին անտառափեշի ձյունաթմբերի վրայով, երբեմն երևում էր հեռագրասյուն՝ ավելի վերև և հեռվում ամեն ինչ թաղված էր մթության, գաղտնիքի մեջ:

Առավոտյան՝ հանկարծակի, կայտառ արթնացում. ամեն ինչ լուսավոր էր, խաղաղ, գնացքը կանգնած էր՝ արդեն Սմոլենսկն էր, մեծ կայարան: Դուրս թռա վագոնից, ագահորեն թարմ օդ կուլ տվեցի... կայարանի դռան մոտ ինչ-որ բանի շուրջ մարդիկ էին խմբված. մոտ վազեցի՝ գետնին ընկած էր որսի ժամանակ խփված վարազ, հսկայական, կոպիտ, հզոր, սառնամանիքից փայտացած ու սառած, սոսկալի կոշտ նույնիսկ տեսքից, ամբողջապես ծածկված խիտ խոզանի գորշ, երկար, ցցված ասեղներով՝ չոր ձյունը վրան, խոզի աչքերով և երկու սպիտակ, պինդ-իրար սեղմված ժանիքներով: Մնա՞մ,— մտածեցի:— Ոչ, շարունակեմ, գնամ Վիտեբսկ:

Վիտեբսկ հասա երեկոյան: Սառնամանիք, պայծառ երեկո էր: Ամենուրեք շատ ցուրտ էր, խուլ և մաքուր, կուսական, քաղաքը թվաց ինձ հինավուրց և ոչ ռուսական. բարձր, իրար միաձուլված տներ թեք տանիքներով, ոչ մեծ պատուհաններով, խոր և կոպիտ կիսաշրջանաձև դռներով ներքևի հարկերում: Շարունակ հանդիպում էին ծեր հրեաներ լոպսերդակներով[5], սպիտակ գուլպաներով, կոշիկներ հագած, պեյսերով[6], նման խողովակաձև, գանգուր ոչխարի եղջյուրների, անարյուն, ամբողջապես թախծոտ-հարցական մուգ աչքերով: Գլխավոր փողոցում զբոսանք էր՝ մայթերով

[5] Հրեական ազգային տարազ *(ծթ.)*:
[6] Քունքագանգուրներ (նահապետական հրեաների մոտ) *(ծթ).*:

դանդաղ շարժվում էր գիրուկ աղջիկների խիտ բազմություն գավառային հրեական շքեղությամբ զուգված թավշյա հաստ մուշտակներով՝ բաց մանիշակագույն, երկնագույն և նռնագույն: Նրանց ետևից, սակայն, համեստորեն, առանձին քայլում էին երիտասարդները, բոլորը կոտելոկներ դրած, բայց նույնպես պեյսերով, արևելյան-կոնֆետային դեմքերը աղջկական քնքուշ և կլորիկ, այտերի երկայնությամբ մետաքսե պատանեկան աղվամազ, այծեղջերվի, քնքշանվաղ հայացք... Քայլում էի հմայվածի նման այդ բազմության մեջ, այդքան հինավուրց, ինչպես թվում էր ինձ, քաղաքում, որ այդքան զարմանալիորեն նոր էր ինձ համար:

Մթնում էր, դուրս եկա ինչ-որ հրապարակ, որի վրա վեր էր խոյանում դեղին եկեղեցին երկու զանգակատներով: Ներս մտնելով՝ տեսա կիսախավար, նստարանների շարքեր, առջևում, բեմի վրա փոքրիկ սեղանին մոմի կրակների կիսաշրջանը: Եվ իսկույն դանդաղ, մտախոհ, գլխավերևումս ինչ-որ տեղ սկսեց երգել երգեհոնը, տարածվեց խուլ և սահուն, հետո սկսեց բարձրանալ, սաստկանալ՝ սուր, մետաղաձայն... սկսեց կլորիկ դողդողալ, կրճտացնել, ասես դուրս էր պրծնում իրեն խլացնող մի բանի տակից, հետո հանկարծ դուրս պրծավ և հնչեղ հեղեղեց երկնային ժամերգությամբ... Առջևում, մոմի կրակների մեջ մերթ լսվում, մերթ անհետանում էր մոթմոթոցը, ռնգախոս լսվում էին լատիներեն բացականչություններ: Կիսամութում, հաստ քարե սյուների երկու կողմերում, որ վերևում կորչում էին մթության մեջ, գետնապատվանդանին սև ստվերների նման կանգնած էին ինչ-որ երկաթե զրահավորներ: Բեմի վերևը, բարձունքում կիսախավարում հանգչում էր մեծ բազմագույն պատուհանը…

17

Նույն գիշեր մեկնեցի Պետերբուրգ: Եկեղեցուց դուրս գալով, ետ գնացի կայարան, հասա Պոլոցկ մեկնող գնացքին. ուզում էի այնտեղ բնակություն հաստատել, ապրել որևէ հին հյուրանոցում, մի քիչ ժամանակ անցկացնել կատարյալ միայնության մեջ: Պոլոցկ մեկնող գնացքն ուշ էր շարժվում: Կայարանում ամայություն էր, մութ: Բուֆետը լուսավորում էր միայն վաճառասեղանի վրայի քնատ լապտերը, պատի ժամացույցն այնքան դժվարությամբ էր շարժվում, ասես ժամանակն ինքն էր վերջանալու: Ամբողջ մի հավերժություն նստած էի մենակ, մեռելային լռության մեջ: Երբ վերջապես ինչ-որ տեղից ինքնաեռի հոտ փչեց, և կայարանն սկսեց կենդանանալ, լուսավորվել, ես շտապով, ինքս էլ չհասկանալով, թե ինչ եմ անում, տոմս վերցրի Պետերբուրգ մեկնելու:

Այնտեղ, Վիտեբսկի կայարանում, Պոլոցկ մեկնող գնացքի այդ անվերջանալի սպասումի մեջ, ես զգացի իմ սարսափելի անջատվածությունը շրջապատի ամեն ինչից, ունեցա զարմանքի, չհասկանալու զգացում՝ ինչ է այս ամենը, որ իմ շուրջն է, և ինչո՞ւ, ինչի՞ համար եմ ես այս ամենի մեջ: Լուռ, կիսամութ, բուֆետն իր վաճառասեղանով, որի վրա վհատ վառվում էր լամպը, կայարանասրահի կիսախավար տարածությունը, նրա երկարությունն ու բարձրությունը, սեղանը որ գրավում էր սրահի ամբողջ մեջտեղը, սրահի կահավորությունը, որ անհետաքրքիր ու տափակ էր, ինչպես բոլոր կայարանների սրահները, քունը գլխին ծեր սպասավորը, կորամեջք, կախ ընկած, ետևից քարշ եկող հետնափեշերով, որը, հենց որ բուֆետում տարածվեց այդ գիշերային ինքնաեռի հոտը, պպզելով, մի կերպ իրեն դուրս քաշեց վաճառասեղանի ետևում ինչ-որ տեղից և սկսեց ծերունական դժգոհ ծանրաշարժությամբ բարձրանալ պատերի տակ դրված աթոռներին և դողդոջուն ձեռքով վառել փայլատ գնդերի մեջ առնված պատի լապտերները... Հետո հաղթանդամ ժանդարմը խթաններն արհամարհական դղրդացնելով բուֆետով անցավ կառամատույց, մինչև կրունկները հասնող երկար շինելով, որի ետևի բացվածքը թանկարժեք հովատակի պոչ էր հիշեցնում. սա ի՞նչ է, ինչո՞ւ, ինչի՞ համար: Եվ որքան նման չէր ոչ մի բանի ձմեռային գիշերվա,

ձյունների այն ցուրտը, որ կառամատույց ելնելով ներս թողեց ժանդարմը դրսից: Ահա հենց այդ ժամանակ սթափվեցի ընդարմացումից և հանկարծ, չգիտես ինչու վճռեցի մեկնել Պետերբուրգ:

Պոլոցկում ձմեռային անձրև էր, փողոցները թաց էին, խղճուկ: Գնացքների միջև ընկած ժամանակամիջոցին ես միայն հայացք նետեցի այդ քաղաքին և ուրախ էի հիասթափությանս համար: Հետագա ճամփիս գրի առա. «Անվերջանալի օր: Անվերջանալի ձյունե և անտառածածկ տարածություններ: Պատուհանից դուրս շարունակ երկնքի և ձյան խամրած գունատություն: Գնացքը մեկ մտնում է անտառ, որ մթին էր տալիս իր թավուտներով, մեկ նորից դուրս գալիս ձյունե հարթությունների մռայլ լայնարձակությունը, որի հեռավոր հորիզոնում, ծառերի սևի գլխին ցածր երկնքում ամպաշղթայի պես կախված է խավար արճճային ինչ-որ բան: Կայարանները բոլորը փայտյա են... Հյուսիս, հյուսիս»:

Պետերբուրգն արդեն ինձ թվաց ծայր հյուսիս: Կառքը խավար բքի միջով սլացնում էր ինձ դեպի Լիգովկա, դեպի Նիկոլաևսկի կայարան տանող փողոցներով, որ ինձ համար, արտասովոր էին իրենց կանոնավորությամբ, բարձրությամբ և միանմանությամբ: Դեռ ժամը երեքն էր, սակայն կայարանի պետական հսկա շենքի վրայի կլոր ժամացույցն արդեն լուսավորված երևում էր բքի միջից: Կանգ առա ժամացույցից երկու քայլի վրա, Լիգովկայի այն կողմում, որ անցնում է ջրանցքի երկայնությամբ: Այստեղ սարսափելի էր՝ փայտի պահեստներ, կառքերի օթևանատներ, թեյարաններ, պանդոկներ, գարեջրատներ: Հյուրանոցում, որ ինձ խորհուրդ տվեց կառապանը, երկար նստել էի առանց հանվելու, վեցերորդ հարկի բարձրությունից նայելով պատուհանից անսահմանորեն տխուր նախահիրիկնային ձյունախավարին, սարսափելի հոգնած, տանջահար վագոնի թափ տալուց... Պետերբուրգ: Ես այդ զգում էի ուժգնորեն. ես այնտեղ եմ, ամբողջապես շրջապատված նրա մութ և բարդ, չարագուշակ մեծությամբ: Սենյակը տաքացված էր և օդը հեղձուկ հին բրդյա ծածկոցների և նույնպիսի թախտի հոտից, կարմրավուն ինչ-որ բանի թունդ գարշահոտությունից, որով փայլեցնում են հատակները վատ հյուրանոցներում: Դուրս եկա, ցած վազեցի դիք սանդուղքով: Փողոցում ձյունե սառնությամբ երեսիս խփեց անթափանց բուքը, կանգնեցրի մթի մեջ հազիվ տեսանելի կառքն ու սլացա ֆինլանդական կայարան՝ արտասահմանի զգացողություն ունենալու: Այնտեղ շտապով խմեցի հարբելու աստիճան և հանկարծ՝ հեռագրեցի նրան.

«Կլինեմ վաղը չէ մյուս օրը»:

Վիթխարի, մարդաշատ, հին Մոսկվան դիմավորեց ինձ արևային ձնհալի փայլով, հալվող ձյունաթմբերով, առվակներով և ջրափոսերով, ձիաքարշերի դղրդոցով և զնգոցով, անցորդների և կառքով գնացողների աղմկոտ անկարգությամբ, ապրանքներով ծանր բեռնված բեռնատար լայնասահնակների զարմանալի շատությամբ, փողոցների կեղտոտ նեղվածքով, Կրեմլի պատերի, պալատների, ապարանքների պարզաճաշակ գեղեցկությամբ, նրանց միջև խիտ-խիտ փայլփլող եկեղեցիների ոսկե գմբեթներով: Ես հիանում էի Վասիլի Բլաժեննիով, ման էի գալիս Կրեմլի տաճարներում, նախաճաշում Օխոտնի ռյադում Եգորովի հայտնի պանդոկում: Այնտեղ հիանալի էր. ներքևում բավական գորշ աղմկոտ առևտրական հասարակ ժողովրդից, իսկ վերևում՝ երկու ոչ բարձր սրահներում, մաքուր էր, խաղաղ, պատշաճ. նույնիսկ ծխել չէր թույլատրվում, և շատ հաճելի ու հարմարավետ էր արևից, որ ընկնում էր փոքրիկ տաքուկ պատուհաններին՝ բակի ինչ-որ տեղից, վանդակում ձայնը զլած թութակից. անկյունում սպիտակ լույս էր առկայծում լամպը, մի պատին՝ պատի ամբողջ վերին կեսը գրաված, գորշ լաքափայլ էր արձակում մուգ մի նկար. թեփուկավոր, դեպի վեր թեքված տանիք, երկար պատշգամբ և նրա վրա թեյ խմող չինացիների անհամապատասխանորեն մեծ կերպարանքները՝ դեղնադեմ, ոսկեգույն խալաթներով, կանաչ

թասակները գլխներին, ինչպես էժանագին լամպերի վրա... Նույն օրը երեկոյան մեկնեցի Մոսկվայից…

Մեր քաղաքում կառքերն արդեն անիվներով էին շարժվում, կայարանում մոլեգնում էր ազովյան անզուսպ քամին: Նա ինձ սպասում էր կառամատույցում, որ արդեն չոր էր, ձյունից մաքրված: Քամին զզզզում էր նրա գարնանային գլխարկը և թույլ չէր տալիս նայել: Ես նրան դեռ հեռվից տեսա՝ շփոթված, քամուց դեմքը կնճռոտելով, աչքերով որոնում էր ինձ շարժվող վագոններում: Նրա մեջ կար հուզիչ, խղճալի մի բան, որ միշտ այնպես զարմացնում է մեզ մտերիմ մարդու մեջ՝ բաժանումից հետո կրկին հանդիպելիս: Նա նիհարել էր, հագնված էր համեստ: Երբ դուրս թռա վագոնից, ուզում էր շրթունքների վրայից ետ քաշել շղարշը, բայց չկարողացավ, համբուրեց ինձ շղարշի վրայով, սարսափելի գունատված:

Կառքում նա լուռ գլուխը թեքել էր քամու դեմ. միայն մի քանի անգամ կրկնեց դառնորեն և չար.

— Ի՜նչ արեցիր դու ինձ հետ, ի՜նչ արեցիր ինձ հետ:

Հետո ասաց, նորից նույն լրջությամբ.

— Գնում ես Դվորյանսկա՞յա: Ես կգամ քեզ հետ:

Համար մտնելով,— դա երկրորդ հարկում էր, մեծ, նախասենյակով,— նա նստեց բազմոցին, նայելով, ինչպես սպասավորը հիմարաբար սենյակի մեջտեղ գորգին է դնում իմ ճամպրուկը: Ճամպրուկը դնելով, նա հարցրեց մեզ, թե ուրիշ որևէ կարգադրություն ունե՞նք:

— Ոչինչ պետք չէ,— պատասխանեց Լիկան իմ փոխարեն:— Գնացեք…

Եվ սկսեց հանել գլխարկը:

— Ինչո՞ւ ես շարունակ լռում, ոչինչ չունե՞ս ինձ ասելու,— անտարբեր հարցրեց, զսպելով շրթունքների դողը:

Ես ծունկի իջա, գրկեցի նրա ոտքերը, համբուրում էի փեշի վրայից ու լալիս: Նա բարձրացրեց գլուխս, և ես կրկին զգացի նրա ծանոթ, անասելի-քաղցր շուրթերը և տառապալից-երանելի նվաղումը մեր սրտերի: Վեր թռա պտտեցի դռան բանալին, սառած ձեռներով իջեցրի պատուհանների սպիտակ պղպջավոր վարագույրները. պատուհանից դուրս քամին օրորում էր սև գարնանային ծառը, որի վրա հարբածի նման դես ու դեն էր նետվում և տագնապով բղավում սերմնագռավը…

— Հայրս մի բան է խնդրում,— կամացուկ ասաց նա հետո, հանգստի ընդարմացման մեջ պառկած,— մինչև պսակվելը սպասենք գոնե կես տարի: Սպասիր, միևնույն է, իմ կյանքը հիմա միայն քո մեջ է, արա ինձ հետ ինչ ուզում ես:

Չվառված մոմերը մնացել էին հայելու սեղանին, անփայլ սպիտակին էին տալիս անշարժ կախված վարագույրները, գաջած առաստաղից զանազան տարօրինակ ձևեր առած նայում էր ինչ-որ ծեփածո զարդարանք:

18

Մենք մեկնեցինք մալոռուսյան այն քաղաքը, ուր Խարկովից տեղափոխվել էր Գեորգի եղբայրս, երկուսս էլ՝ աշխատելու, զեմստվոյական վիճակագրության գծով, որ այնտեղ ղեկավարում էր

եղբայրս: Ավագ՝ չարչարանացն ու զատիկը անցկացրինք Բատուրինոյում: Մայրս և քույրս արդեն հոգի էին տալիս նրա համար, հայրս սիրելով դու էր ասում նրան, ինքն էր առավոտները ձեռքը մեկնում նրան համբույրի, միայն Նիկոլայ եղբայրս էր զուսպ, քաղաքավարի սիրալիր: Նա մեղմ ու մոլոր երջանիկ էր, իմ ընտանիքին, տանը, կալվածքին մասնակից լինելու նորությամբ, իմ սենյակին, որտեղ անցել էր պատանեկությունս, և որը հիմա նրան թվում էր սքանչելի, հուզիչ, իմ գրքերին, որ նա թերթում էր երկչոտ ուրախությամբ... Հետո մեկնեցինք:

Մի գիշեր մինչև Օրյոլ: Լուսաբացին տեղափոխություն Խարկովի գնացք:

Արևոտ առավոտյան կանգնած ենք վագոնի միջանցքում, շոգ պատուհանի մոտ:

— Ինչ տարօրինակ է, Օրյոլից և Լիպեցկից բացի, երբեք ոչ մի տեղ չեմ եղել,— ասում է նա:— Հիմա Կո՞ւրսկն է: Ինձ համար սա արդեն հարավ է:

— Այո: Ինձ համար էլ:

— Կուրսկում պիտի նախաճաշե՞նք: Գիտես, կյանքումս դեռ երբեք կայարանում չեմ նախաճաշել…

Կուրսկից հետո, որքան հեռանում ենք, այնքան ավելի տաք է, բերկրալի: Զառիվայրին, երկաթգծի երկայնությամբ, արդեն առատ խոտ էր, ծաղիկներ, սպիտակ թիթեռներ, թիթեռներն արդեն ամառ են:

— Շոգ է լինելու այնտեղ ամռանը,— ժպտալով ասում է նա:

— Եղբայրս գրում է, որ քաղաքն ամբողջ այգիների մեջ է:

— Այո, Մալոռուսիա: Այ երբեք չէի մտածի... Տես, տես, ինչ հսկա բարդիներ են: Եվ արդեն ամբողջապես կանաչած: Այսքան ջրաղացներն ինչի՞ համար են:

— Հողմաղացներ, ոչ թե ջրաղացներ: Հիմա կերևան և կավճասարերը, հետո Բելգորոդը:

— Հիմա հասկանում եմ քեզ, ես էլ երբեք չէի կարող ապրել հյուսիսում, առանց այս լույսի առատության:

Իջեցնում եմ պատուհանը: Տաք փչում է արևոտ քամին, շոգեքարշի ծուխը հարավային բուրում է քարածխահոտ: Նա փակում է աչքերը, արևը տաք շերտիկներով թռչկոտում է նրա դեմքի վրայով, ճակատի մոտ խաղացող մուգ ջահել մազերի վրայով, պարզ չթե զգեստի վրայով, կուրացուցիչ լուսավորելով և տաքացնելով այն:

Բելգորոդի մոտերքը հովիտներում հաճելի համեստություն է շքեղ ծաղկող բալենու այգիների, գաջի սպիտակին տվող խրճիթների: Բելգորոդի կայարանում լսվում է բուբլիկ վաճառող խոխոլ աղջիկների հաճելի արագախոսությունը:

Նա գնումներ է անում և սակարկում, գոհ իր տնտեսվարությունից, մալոռուսական բառեր օգտագործելուց:

Երեկոյան, Խարկովում, նորից փոխում ենք մեր ճանապարհը:

Լուսաբացին մոտենում ենք:

Նա քնած է: Վագոնում մոմերը այրվում-վերջանում են, տափաստանում դեռ գիշեր է, մութ կիսախավար, բայց նրա ետևում է հեռավոր, ցած և թաքուն կանաչող արևելքը: Որքան նման չէ այստեղ հողը մերին՝ այս մերկ, անծայրածիր հարթությունը պինդ գորշ-կանաչավուն բլուրներով: Երևաց քնած կիսակայարանը՝ ոչ թուփ, ոչ ծառ կար շուրջը, և ինքն էլ քարե, մերկ, սպիտակ-կապտավուն՝ արշալույսի այս թաքուն ծնունդին... Որքան միայնակ են այստեղ կայարանները:

Ահա վագոնում բացվում է օրը: Ներքևում, հատակին դեռ կիսախավար է, իսկ քիչ վերև արդեն կիսալույս: Նա քնած է, գլուխը թաքցրել է բարձի մեջ, ոտքերը կուչ բերել: Զգուշորեն ծածկում եմ նրան հինավուրց մետաքսե շալով, որ նվիրել էր մայրս:

19

Կայարանը քաղաքից հեռու էր, լայն հովիտներում: Ոչ մեծ, հաճելի կայարան: Կայարանում սիրալիր սպասավորներ էին, սիրալիր բեռնակիրներ, բարեհաճ կառապաններ՝ առեղով լծած զույգ ձիերով սայլակառքերի նստիքին բազմած:

Քաղաքը, ամբողջովին այգիների մեջ, հետմանական տաճարով սարի գառիթափին, նայում էր այնտեղից դեպի արևելք և հարավ: Արևելյան հովտում առանձին վեր էր բարձրանում մի զառիկող բլուր՝ բարձունքին հին վանքը, ավելի հեռու կանաչ էր և դատարկություն, հովիտը փոխվում էր տափաստանային լանջերի: Հարավային հովտում, գետից այն կողմ, նրա ուրախ մարգագետիններից այն կողմ, հայացքդ կորչում էր արևափայլի մեջ:

Քաղաքում շատ փողոցներ թվում էին նեղլիկ այգիներից և բարդիներից, որ շարքով ձգվում էին տախտակյա «մայթերի» երկայնությամբ, որոնց վրա հաճախ կարելի էր հանդիպել հպարտ, մեծկրծքանի աղջկա՝ պլախտան[7] ազդրերին կիպ ձգած, ծանր ջուր կրելու լծակը ուժեղ ուսին: Բարդիները, արտասովոր իրենց բարձրությամբ և հզորությամբ, հիացմունք էին պատճառում մեզ. մայիս ամիսն էր, ամպրոպներ էին և հորդ անձրևներ, և որքա՜ն գեղեցիկ էին բարդիները կանաչում իրենց ամուր տերևներով, որքա՜ն թարմ և խեժահոտ էին բուրում: Գարունն այստեղ միշտ վառվռուն էր, ուրախ, ամառը շոգ, աշունը պայծառ, երկար, ձմեռը մեղմ, խոնավ քամիներով, սահնակակառքերը սլանում էին զանգուլակներրով, նրանց սքանչելի խուլ մռթմռթոցով:

Հաղթամարմին, արևից թխացած, ճերմակած մազերը լրիվ խուզած գլխով ծերուկ Կովանկոն, որի մոտ մենք տեղավորվեցինք այդպիսի փողոցներից մեկում, ամբողջ մի կալվածք ուներ. բակ, կցաշենք, տուն և այգի տան ետևում: Ինքը զբաղեցնում էր կցաշենքը, իսկ տունը, կավճով սպիտակեցրած և ստվերոտ այգուց, և տան ճակատամասի մեծ ապակեպատ պատշգամբը վարձով էր տալիս մեզ: Ինքն ինչ-որ տեղ ծառայում էր, ծառայությունից տուն գալով կուշտ ճաշում էր, հանգստանում, ապա, կիսահանված, նստում էր բաց պատուհանի առջև և շարունակ երգում, չիբուխը քաշելով. «О, на горі та женці жнуть...»

Տան սենյակները ցածրիկ էին, պարզ. միջանցքում դրված էր մի հին սնդուկ՝ գունավոր օղացանցերով նախշված հաստ քաթանով ծածկված: Մեզ ծառայում էր ջահել կազակուհի, որի գեղեցկության մեջ նոգայական ինչ-որ բան կար: Եղբայրս ավելի սիրալիր և բարի էր դարձել: Հույսերս արդարացան՝ նրանց միջև շուտով ազգակցական և բարեկամական մտերմություն

[7] Շրջազգեստի տեսակ *(ծթ.)*:

ստեղծվեց. մեկնումեկի հետ իր որևէ գժտության դեպքում, նրանք միշտ միմյանց էին պաշտպանում:

Մեր ծառայակիցների և ծանոթների շրջանակը (բժիշկների, փաստաբանների, զեմստվոյականների) նման էր եղբորս խարկովյան շրջանակին՝ ես այդ շրջանակը մտա հեշտությամբ, հաճույքով հանդիպեցի այնտեղ Լեոնտովիչին և Վագինին, նույնպես Խարկովից տեղափոխված: Այս շրջանակը խարկովյանից տարբերվում էր միայն նրանով, որ կազմված էր ավելի չափավոր մարդկանցից, որոնք ապրում էին գրեթե համապատասխան քաղաքին, նրա միրգորոդյան բարեկեցությանը, որ բարեկամաբար էր ընդունում ոչ միայն ուրիշ որևէ քաղաքի հասարակության պատկանող մարդկանց, այլ նույնիսկ ոստիկանապետին:

Ամենից հաճախ մենք հանդիպում էինք վարչության մի անդամի տանը. նա հինգ հազար դեսյատին հողի և հազար գլուխ ոչխարի տեր էր, տունը պահում էր,— ընտանիքի համար,— հարուստ, բարձրահարկ, իսկ ինքը՝ փոքրիկ, համեստ, վատ հագնված, ժամանակին Յակուտսկ ուղարկված, այդ տանը կարծես խղճուկ մի հյուր լիներ:

20

Բակում հին քարե ջրհոր էր, կցաշենքի առջև երկու սպիտակ ակացիաներ, տան առմուտքի մոտ, ապակեպատ պատշգամբի աջ կողմը ստվերելով, վեր էր խոյանում շագանակենու մութ կատարը: Այդ ամենը ամռան առավոտյան, ժամը յոթի մոտերքը լինում էր արդեն տաք, պայծառ, արևով ողողված, միապաղաղ լցվում հավանոցից հավերի հարցական-շփոթված կչկչոցով, սակայն տանը, հատկապես դեպի այգին նայող պատուհաններով ներքին սենյակներում, դեռևս զով էր, ննջարանում, որտեղ նա լվացվում էր կանգնած՝ փոքրիկ թաթարական մաշիկներով, մրսելուց կուրծքը ձգված, ջրի և հոտավետ օճառի թարմություն էր բուրում. նա ամաչելով ինձ էր դարձնում թաց դեմքը. ետևից, մազերի տակից օճառած պարանոցով, կրունկը գետին է խփում. «Դո՛ւրս կորի»: Հետո այն սենյակից, որի պատուհանները նայում էին պատշգամբ, նոր եփած թեյի բուրմունք էր տարածվում. այնտեղ պայտած կոշիկները դոփդոփելով ետ ու առաջ էր անում կազակուհին. նա կոշիկները հագնում էր բոբիկ ոտներին, նրա մերկ կոճիկները, նուրբ, ինչպես ազնվացեղ հովատակինը, արևելյան փայլփլում էին փեշի տակից. փայլում էր և կլորիկ պարանոցը սաթի վզնոցով, սև գլխիկը՝ աշխույժ, զգայուն, ուղղակի շողշողում էր շեղ աչքերով, քամակը խաղում էր ամեն շարժումից:

Եղբայրս թեյի էր գալիս ծխախոտը ձեռքին, հորս ժպիտով և շարժուձևով. ոչ բարձրահասակ, գիրանալու հակումով, նա նման չէր հորս, սակայն աղայական շարժուձևերից ինչ-որ բան անցել էր եղբորս. սկսել էր լավ հագնվել, նստելիս մի տեսակ անկաշկանդ-նրբակիրթ ոտքը ոտքին էր գցում, նույն կերպ պահում էր ծխախոտը. բոլորը մի ժամանակ վստահ էին նրա փայլուն ապագային, նա ինքն էլ էր վստահ, հիմա միանգամայն գոհ էր մալոռուսական այս խուլ անկյունում իր ունեցած դերից և թեյի էր դուրս գալիս կայծկլտուն աչքերով. նա իրեն զգում էր ուժով, առողջությամբ լի, մենք նրա ընտանիքն էինք, իր համար շատ հաճելի, մեզ հետ միասին ծառայության գնալը, որ, ինչպես և Խարկովում, բաղկացած էր կիսով չափ ծխախոտ ծխելուց և զրույցներից, նրա համար ամենօրյա ուրախություն էր: Երբ դուրս էր գալիս ի վերջո և Լիկան, արդեն պատրաստ, հագնված ամառային ուրախությամբ, նա ամբողջապես պայծառանում էր Լիկայի ձեռքը համբուրելով:

Քայլում էինք զմայլելի բարդիների կողքով, որ յուղափայլ շողում էին արևի տակ, մայթի նման գցված տախտակների վրայով, տների շոգ պատերի և տաքացած այգիների տակով. Լիկայի բացած հովանոցը վառ մետաքսե ուռուցիկ գնդիկ էր թանձր կապույտի մեջ: Հետո մենք կտրում էինք շոգ

հրապարակը, մտնում վարչության դեղին շենքը: Այնտեղ ներքևում պահակների սապոգների, թութունի հոտ էր, որ ծխում էին նրանք: Սանդուղքով երկրորդ հարկ էին բարձրանում զանազան գրագիրներ և գործավարներ՝ սև լյուստրինե բաճկոնակներով, ինչ-որ թղթեր բռնած, զբաղված տեսքով ողջունելով մեզ խոխոլավարի գլխի խոնարհումով, խորամանկ և փորձառու մի ցեղ, հակառակ իր առերևույթ պարզամտության: Մենք սանդուղքի տակով անցնում էինք առաջին հարկի խորքը, մեր բաժանմունքի ցածր սենյակները, որ շատ հաճելի էին այնտեղ հավաքված աշխույժ ինտելիգենտական անփույթ դեմքերից... Ինձ համար տարօրինակ էր նրան տեսնել այդ սենյակներում, զանազան հարցաթերթերով զբաղված, որ դնում էր ծրարների մեջ նահանգներն ուղարկելու համար:

Կեսօրին պահակները մեզ թեյ էին տալիս էժանագին բաժակներով, էժանագին պնակներով՝ մեջը լիմոնի մի կտոր, և այդ ամենի պաշտոնականությունը ինձ համար էլ առաջին շրջանում մի քիչ հաճելի էր: Այդ ժամանակ մյուս բաժիններից մեզ մոտ էին հավաքվում զրուցելու և ծխելու մեր բոլոր բարեկամները: Գալիս էր Սուլիման՝ վարչության քարտուղարը: Դա գեղեցիկ, փոքր-ինչ կորամեջք մարդ էր ոսկեղօծ ակնոցով, հոյակապ թավշյա փայլուն սև մազերով և մորուքով, փափուկ, փաղաքուշ քայլվածք ուներ, փաղաքուշ ժպիտ և նույնպիսի խոսելաձև. ժպտում էր մշտապես և մշտապես խաղում իր այդ փափկությամբ, նրբակրթությամբ. նա մեծ էսթետ էր, վանքին, որ բլուրի վրա էր, հովտում, ասում էր քարացած ակորդ: Գալիս էր հաճախակի և նայում Լիկային ավելի ու ավելի երանավետ ու խորհրդավոր. նրա սեղանին մոտենալով, ցած խոնարհվում էր նրա ձեռների վրա, բարձրացնում ակնոցը և քաղցրանուշ, մեղմ ժպտում. «Իսկ հիմա ի՞նչ եք ուղարկում»: Լիկան դրանից ամբողջապես լարվում էր և ջանում պատասխանել որքան կարելի է սիրալիր, բայց և որքան հնարավոր է կարճ: Ես միանգամայն հանգիստ էի, հիմա արդեն ոչ մեկին չէի խանդում:

Ծառայության մեջ ես ակամա, ինչպես Օրյոլի «Գոլոս»-ում, մի առանձնահատուկ վիճակի մեջ ընկա, ինձ վրա, որպես աշխատողի, նայում էին սիրալիր-ծաղրական: Նստել և անշտապ հաշվումներ էի կատարում, ամփոփագրեր կազմում, թե այսինչ նահանգի այնինչ մարզում որքան ծխախոտ, ճակնդեղ է ցանված, այնտեղ ինչ միջոցառումներ են ձեռնարկվել այդ ճակնդեղին վնասող բլոճների դեմ «պայքարի» ուղղությամբ, երբեմն պարզապես որևէ բան էի կարդում, ուշադրություն չդարձնելով շուրջս խոսակցություններին: Ինձ ուրախացնում էր, որ ունեմ իմ սեղանը և այն, որ կարող եմ ուզածս քանակությամբ պահանջել գրասենյակից նոր գրչածայրեր, մատիտներ, հիանալի գրելաթուղթ:

Ժամը երկուսին ծառայությունն ավարտվում էր, եղբայրս ժպտալով վեր էր կենում տեղից. «Գնացինք մեր տները, ժողովուրդ», բոլորն իրար անցած վերցնում էին իրենց ամառային գլխարկները, խմբովին դուրս էին գալիս լուսավոր հրապարակ, իրար ձեռք թափահարում և, չեսուչաներն ու փայտերը փայլեցնելով, գնում ամեն մեկն իր բանին:

21

Ժամը մինչև հինգը քաղաքում ամայություն էր, այգիները վառվում էին արևի տակ: Եղբայրս քնում էր, մենք պարզապես փռված էինք լինում Լիկայի լայն մահճակալին: Արևը, տան շուրջը պտույտ կատարելով, արդեն փայլում էր ննջարանի պատուհանին, ներս նայում այգուց, այգին իր բաց կանաչ տերևներով արտացոլվում էր լվացարանի հայելու մեջ: Այս քաղաքում է սովորել Գոգոլը, նրանն էին շրջակայքի բոլոր վայրերը՝ Միրգորոդ, Յանովշչինա, Շիշակի, Յարեսկի, մենք հաճախ ծիծաղելով հիշում էինք. «Որքան արբեցուցիչ, որքան շքեղ է ամռան օրը Մալոռուսիայում»:

— Համենայն դեպս, շոգ է,— ասում էր նա, ուրախ հառաչելով և պառկելով երեսնիվեր:— Եվ ինչքան շատ ճանճ կա: Իսկ ինչպե՞ս է շարունակությունը, բանջարանոցների մասին:

— «Զմրուխտները, տպազիոնները, հակինթները եթերային միջատների թռչում են երփներանգ բանջարանոցների վրա...»:

— Դա ուղղակի հեքիաթային լավ է: Ես շատ, շատ կուզեի լինել Միրգորոդում: Մի անգամ գնանք անպայման: Այո՞: Խնդրում եմ, մի անգամ գնանք: Բայց որքան տարօրինակ, ոչ հաճելի է եղել նա կյանքում: Երբեք ոչ մեկին չի սիրահարվել, նույնիսկ ջահել ժամանակ:

— Այո, ջահել ժամանակվա նրա միակ անմիտ արարքը Լյուբեկ մեկնելն է:

— Ինչպես դու՝ Պետերբուրգ... Ինչո՞ւ ես դու այդքան սիրում ճամփորդել:

— Ինչո՞ւ ես դու սիրում նամակներ ստանալ:

— Բայց հիմա ես էլ ումի՞ց եմ ստանում:

— Միևնույն է, սիրում ես: Մարդիկ մշտապես սպասում են ինչ-որ բանի, երջանիկ, հետաքրքիր բանի, երազում որևէ ուրախություն, որևէ իրադարձություն: Դրանով է հրապուրում և ճանապարհը: Հետո՝ ազատություն, լայնարձակություն... Նորություն, որը միշտ տոնական տրամադրություն է ստեղծում, բարձրացնում կյանքի զգացողությունը, իսկ չէ որ մենք հենց միայն այդ էլ ուզում ենք, այդ ենք որոնում ամեն մի ուժեղ զգացմունքի մեջ:

— Այո, այո, այդպես է:

— Ասում ես՝ Պետերբուրգ: Եթե գիտենաս, թե ի՛նչ սարսափ էր դա և ինչպես այնտեղ մեկընդմիշտ հասկացա, որ ես խորապես հարավի մարդ եմ: Գոգոլը գրում էր Իտալիայից. «Պետերբուրգ, ձյուն, սրիկաներ, դեպարտամենտ՝ այդ ամենը տեսա երազում. արթնացա նորից հայրենիքում»: Ահա այդպես էլ ես արթնացա այստեղ: Չեմ կարողանում հանգիստ լսել՝ Չիգիրին, Չերկասի, Խորոլ, Լուբնի, Չերտոմլիկ, Դիկոյե Պոլյե բառերը, չեմ կարողանում առանց հուզմունքի տեսնել եղեգնե տանիքներ, գյուղացիների խուզած գլուխներ, կարմիր ու դեղին սապոգներ հագած կնիկներ, նույնիսկ քրծենու կողովիկները, որոնց մեջ նրանք անկտիով բալ և սալոր են կրում. «Чайка, скиглить, литаючи, мов за дитьми плаче,солньце гріе,витер віе на степу козачем ..». Սա Շևչենկոն է, միանգամայն հանճարեղ բանաստեղծ: Մալոռուսիայից գեղեցիկ երկիր չկա աշխարհում: Իսկ գլխավորն այն է, որ նա արդեն պատմություն չունի: Նրա պատմական կյանքը վաղուց և ընդմիշտ վերջացած է: Կա միայն անցյալ, կան երգեր, լեգենդներ նրա մասին՝ մի տեսակ արտաժամանակայնություն: Դա ինձ ամենից ավելի է հիացնում:

—Դու հաճախ ես ասում՝ հիացնում, հիացմունք:

— Կյանքը հենց պետք է հիացմունք լինի…

Արևը թեքվում էր, թանձր ներս լցվում բաց պատուհանից ներկած հատակին, հայելե արտացոլումը խաղում էր առաստաղին: Լուսամուտագոգերը ավելի ու ավելի պայծառ էին վառվում, նրանց վրա ուրախ կույտերով վխտում էին ճանճերը: Ճանճերը կծում էին նրա մերկ զով ուսերը: Հանկարծ լուսամուտագոգին նստում էր մի ճնճղուկ, ուշադիր և կայտառ նայում էր շուրջը, և վեր թռչելով նորից անհետանում այգու բաց կանաչի մեջ, որ արդեն թափանցիկ էր նախահիրիկնային արևի շողերից:

— Դեհ, էլի մի բան պատմիր,— ասում էր նա։— Ասա, իսկ Ղրիմ կգնա՞նք մենք երբևէ։ Եթե իմանաս ինչպե՛ս եմ երազում։ Դու կարող էիր մի վիպակ գրել,— ինձ թվում է, դու հիանալի կգրեիր,— և մենք փող կունենայինք, արձակուրդ կվերցնեինք... Ինչո՞ւ ես գրելը թողել։ Դու իսկական մսխող ես, քո ընդունակությունները վատնող։

— Կային մի տեսակ կազակներ, որ կոչվում էին «բրոդնիկներ» թափառել բառից[8]։ Ահա ես էլ եմ բրոդնիկ։ «Աստված մեկին թախտ է տալիս, մյուսին էլ՝ դժվար ճամփա»։ Գոգոլի գրածներից ամենալավը նրա հուշատետրն է. «Տափաստանի որորը կլորաձև փոմփոլով բարձրանում է ճամփի վրայից... Ճամփով մեկ կանաչ բնագիծ՝ վրան տատասկափուշ և ոչինչ դրանից այն կողմ, միայն անծայրածիր հարթություն... Արևածաղիկներ չափառների և փոսերի վրա, և հարդյա ծածկ մաքուր ծեփած խրճիթի, և սիրունիկ, կարմիր շրջանակով եզերված փոքրիկ պատուհան… Դու, հնագույն արմատը Ռուսիայի, ուր առավել սրտալի է զգացմունքն ու ավելի քնքուշ բնությունը սլավոնական»։

Նա ուշադիր լսում էր։ Հետո հանկարծ հարցնում.

— Ասա, իսկ ինչո՞ւ դու ինձ համար կարդացիր այն կտորը Գյոթեից։ Այն, ինչպես նա հեռանում էր Ֆրեդերիկայից և հանկարծ մտովի տեսավ մի ձիավորի, որ ինչ-որ տեղ էր շտապում ոսկեթել տրեզներով մոխրագույն բաճկոն հագած։ Ինչպե՞ս է այնտեղ ասված։

— «Այդ ձիավորը ես ինքս էի։ Իմ հագին ոսկեթել տրեզներով մոխրագույն բաճկոն էր, որպիսին ես երբեք չէի հագնում»։

— Այո, և դա էլ հրաշալի է ու սարսափելի։ Եվ հետո դու ասացիր, որ ամենքն էլ ջահել ժամանակ իրենց երազանքներում ունեն իրենց ցանկալի բաճկոնը... Նա ինչո՞ւ թողեց Ֆրեդերիկային։

— Նա ասում էր, որ իրեն միշտ կառավարում էր իր «դևը»։

— Այո, դու էլ ինձ շուտով կդադարես սիրել։ Ասա, խնդրում եմ, ճիշտն ասա, ի՞նչ ես դու ամենից ավելի երազում։

— Ի՞նչ եմ երազում։ Երազում եմ լինել Ղրիմի հին խաներից մեկը, ապրել քեզ հետ Բախչիսարայի պալատում... Բախչիսարայը քարքարոտ, սարսափելի շոգ կիրճում է, իսկ պալատում մշտապես ստվեր է, զով, շատրվաններ, պատուհանից դուրս՝ թթենիներ…

— Ասա, իսկապե՞ս։

— Իսկապես։ Չէ որ ես մշտապես ապրում եմ մի որևէ խիստ անհեթեթ բանով։ Ահա թեկուզ այս տափաստանի որորը, նրա մեջ է տափաստանի և ծովի միացությունը... Նիկոլայ եղբայրս, երբեմն, ծիծաղելով ասում էր ինձ, որ ես ի բնե խենթուկ եմ, և ես շատ էի տառապում, մինչև որ մի անգամ պատահմամբ կարդացի, որ ինքը Դեկարտն ասել է, որ նրա հոգեկան կյանքում պարզ և խոհեմ մտքերը միշտ ամենաչնչին տեղն են գրավել։

— Եվ ինչ, պալատում հարե՞մ լիներ։ Դա՞ էլ իսկապես։ Դու ինքդ էիր ինձ ապացուցում, հիշո՞ւմ ես, որ տղամարդու սիրո մեջ շատ տարբեր սիրային զգացմունքներ են միախառնվում, որ դու այդ զգացել ես Նիկուլինայի հանդեպ, հետո Նադյայի... Դու չէ որ երբեմն դաժանորեն անկեղծ ես ինձ հետ։ Նման ինչ-որ բան օրերս ասում էիր նույնիսկ մեր կազակուհու մասին։

---

[8] Ռուսերեն՝ бродить — թափառել։

— Ես ասում էի միայն, որ երբ նայում եմ նրան, ահավոր ցանկություն եմ ունենում ընկնել աղուտային տափաստաններ, ապրել ծածկասայլում :

— Ահա, խնդրեմ, ինքդ ես ասում, որ կուզեիր նրա հետ ապրել ծածկասայլում:

— Չասացի, որ նրա հետ:

— Հապա ո՞ւմ,— օ՜յ, նորից ճնճղուկը: Սարսափելի վախենում եմ, երբ ներս են թռչում ու զարկվում հայելուն:

Եվ, տեղից վեր թռնելով, նա արագ և անշնորհք սկսում էր ձեռներն իրար զարկել: Բռնում էի նրան, համբուրում մերկ ուսերը, ոտքերը... Նրա մարմնի տաք և սառը մասերի այդքան տարբեր լինելն ինձ ամենից ավելի էր հուզում:

22

Երեկոյան դեմ շոգն անցնում էր: Արևն արդեն տան ետևում էր, մենք թեյ էինք խմում ապակեպատ պատշգամբում, դեպի բակ բաց պատուհանների մոտ: Նա հիմա շատ էր կարդում և այդ ժամերին շարունակ ինչ-որ բաներ էր հարցնում եղբորիցս, իսկ սա հաճույքով դաս էր տալիս նրան: Երեկոն անսահման էր, անշարժ, միայն ծիծեռնակներ էին երևում բակում և վեր խոյանալով սուզվում էին խոր երկնքի մեջ: Նրանք խոսում էին, իսկ ես լսում էի. «Ой, на горі та женці жнуть…»: Երգը պատմում էր, որ սարի վրա հունձ են անում,— ցորեն են հնձում, հոսում էր հանդարտ, երկար, բաժանման թախծով, հետո ամրանում էր և հնչում պինդ՝ լայնաշունչ,հեռաստանով, խրոխտ, մարտական.

А по-під горою,

По-під високою

Козаки йдуть!

Երգը երկար ու ձիգ, թախծոտ զմայլվում էր, թե ինչպես է հովիտով հոսում կազակական զորքը, ինչպես է այն առաջ տանում փառապանծ Դորոշենկոն, գնում բոլորի առջևից: Իսկ նրա ետևից, ասում էր երգը, նրա ետևից Սագայդաչնին.

Що проміняв жінку

На тютюн та люльку,

Необачний...

Երգը դանդաղում էր, հպարտ հիանում այդքան արտասովոր մարդով: Բայց և իսկույն թմբուկներն էր զարկում է՛լ ավելի ուրախ շնչով.

Мені з жінкою

Не возиться!

А тютюн та люлька

Козаку в дорозі

Знадобиться!

Լսում էի, տխուր ու անուշ նախանձելով ինչ-որ բանի:

Մայրամուտին զբոսնում էինք, երբեմն գնում քաղաք, երբեմն զբոսայգի, որ եկեղեցու ետևի զառիթափին էր, երբեմն գնում էինք քաղաքից դուրս, դաշտ: Քաղաքում մի քանի սալարկված փողոցներ կային հրեական զանազան առևտուրներով, ժամացույցի, դեղատնային և ծխախոտի անհասկանալիորեն շատ խանութներով. քարե սպիտակ փողոցներ էին, դեռ տաք ցերեկվա տապից, դրանց խաչմերուկներում կրպակներ կային, ուր անցորդները խմում էին գազաջրով օշարակներ, և այդ ամենը խոսում էր հարավի մասին և ձգում է՛լ ավելի հեռու դեպի հարավ. հիշում եմ, այն ժամանակ չգիտես ինչու հաճախ մտածում էի Կերչի մասին: Եկեղեցուց նայելով հովտին, մտովի մեկնում էի Կրեմենչուկ, Նիկոլան: Քաղաքից դուրս, դաշտ էինք գնում արևմտյան արվարձանով, որ խիստ գյուղական էր: Այնտեղի խրճիթները, բալենու այգիները և բոստանները դուրս էին գալիս հարթավայր, դեպի սլաքի պես ուղիղ միրգորոդյան ճանապարհը: Ճամփի շատ հեռվում, հեռագրասյուների երկայնությամբ, դանդաղ շարժվում էր խոխոլական սայլը, որ քշում էին լծի մեջ ճոճվող, գլուխները կախ գցած երկու եզ, սայլը շարժվեց և անհետացավ, ինչպես ծովում, այդ հեռագրասյուների հետ. վերջին սյուներն արդեն հարթավայրում հազիվ էին երևում, փայտերի նման փոքր: Դա Յանովշչինա, Յարիսկի, Շիշակի տանող ճանապարհն էր…

Երեկոն հաճախ անց էինք կացնում քաղաքային այգում: Այնտեղ երաժշտություն կար, ռեստորանի լուսավորված տեռասը հեռվից, մթության մեջ երևում էր ինչպես թատերաբեմ: Եղբայրս գնում էր ուղիղ ռեստորան, մենք հաճախ գնում էինք այգու այն մասը, որը նույնպես վերջանում էր զառիթափով: Գիշերը թանձր մութ էր, տաք: Մթության մեջ ցածում տեղ-տեղ երևում էին լույսեր և եկեղեցական, ներդաշնակորեն բարձրանում ու մարում էին երգերը՝ երգում էին արվարձանների ջահելները: Երգերը ձուլվում էին մթությանն ու լռությանը: Այնտեղ, դղրդալով վազում էր գնացքը լուսավորված օղակներով,— այդ ժամանակ առանձնապես էր զգացվում, թե որքան խորն ու սև է հովիտը,— և աստիճանաբար լռում, մարում, ասես, գետնի տակն էր անցնում: Ու նորից լսվում էին երգերը, և հովտի ետև հորիզոնի ամբողջ շրջանակը դողդողում էր դոդոշների անլռելի դողով, որ կախարդում էր այդ լռությունն ու մութը, գցում այն ընդդարմացման մեջ, որին, թվում էր, վերջ չէր լինելու:

Երբ բարձրանում էինք ռեստորանի մարդաշատ տեռասը, այդ մթությունից հետո այն հաճելիորեն ճնշում էր, կուրացնում: Եղբայրս, արդեն հարբած և գորովալից, անմիջապես ձեռքով էր անում մեզ սեղանի մոտից, որտեղ նրա հետ նստած էին Վագինը, Լեոնտովիչը, Սուլիման: Մեզ աղմուկով տեղավորում էին, պահանջում նորից սպիտակ գինի, գավաթներ և սառույց: Հետո երաժշտություն արդեն չէր լինում, տեռասի ետևում այգին մութ էր, դատարկ, ինչ-որ տեղից երբեմն թեթև զով էր փչում, շարժում ապակե կափարիչների տակ դրված մոմերի լույսը, որի շուրջ վխտում էին գիշերային միջատները, սակայն բոլորն ասում էին, որ դեռ շատ վաղ է: Վերջապես համաձայնվում էին՝ ժամանակն է: Եվ, այնուամենայնիվ, միանգամից չէին բաժանվում, տուն էին գնում խմբովին, բարձր խոսելով, «մայթերին» պինդ դոփելով: Այգիները քնած էին, խորհրդավոր սևին էին տալիս ուշ լուսնի ցած լույսով տաք լուսավորված: Երբ մենք արդեն մենակ մտնում էինք մեր բակ, լուսինը

ողողում էր բակը, փայլփլում պատշգամբի սև ապակիներին. կամացուկ ճռռում էր ծղրիդը, կցաշենքի մոտի ակացիայի ամեն տերև, ամեն ճյուղ զարմանալիորեն հստակ և գեղեցիկ իրենց անշարժ ստվերն էին գծում սպիտակ պատին:

Ամենից հաճելի էին քնելուց առաջ ապրած պահերը: Մոմը հանդարտ վառվում էր գիշերասեղանիկին: Թարմության, ջահելության, առողջության բերկրանքով սենյակ էր հորդում զովը բաց պատուհաններից: Թեթև խալաթով անկողնու եզրին նստած, նա մուգ աչքերով նայում էր մոմին և հյուսում մեղմ փայլող հյուսքը:

— Այ դու շարունակ զարմանում ես, թե ինչպես եմ փոխվել,— ասում էր նա:— Բայց եթե գիտենայիր, թե ինչպե՜ս ես փոխվել դու: Միայն թե դու սկսել ես մի տեսակ ավելի քիչ նկատել ինձ: Հատկապես երբ մենք մենակ ենք: Վախենում եմ, որ ես քեզ համար դառնում եմ օդի նման մի բան. առանց այն հնարավոր չէ ապրել, սակայն և այն չես նկատում: Մի՞թե այդպես չէ: Ասում ես, որ հենց այդ է ամենամեծ սերը: Իսկ ինձ թվում է, դա նշանակում է, որ միայն ես հիմա քիչ եմ քեզ համար:

— Քիչ ես, քիչ,— պատասխանում էի ծիծաղելով:— Հիմա ինձ համար ամեն ինչ քիչ է:

— Ես էլ եմ ասում, ինչ-որ տեղեր քեզ ձգում են: Գեորգի Ալեքսանդրովիչն արդեն ասել է ինձ, որ դու խնդրում ես գործուղումներ տեղերում վիճակագրություն անցկացնելու: Ինչո՞ւ: Շոգին, փոշու մեջ, սայլով դխկդխկալով ճամփա կտրել, հետո նստել մարզային շոգ կառավարչություններում և անվերջ հարցեր տալ խոխոլներին այն բլանկներով, որ ես ուղարկում եմ…

Նա բարձրացնում էր աչքերը, հյուսքը ուսին ետ գցելով:

— Ի՞նչն է քեզ քաշում:

— Միայն այն, որ ես երջանիկ եմ, և հիմա իսկապես ինձ համար ամեն ինչ քիչ է:
Նա բռնում էր ձեռքս:

— Իսկապե՞ս երջանիկ ես:

23

Առաջին անգամ գնացի հենց այնտեղ, ուր նա այնքան ուզում էր գնալ ինձ հետ՝ միրգորոդյան ճամփով: Ինձ հետը տարավ Վագինը, որին ինչ-որ բանի համար ուղարկում էին Շիշակի:

Հիշում եմ, ինչպես էինք վախենում, որ քնով չանցնենք, չուշանանք նշանակված ժամից,— պետք էր ճամփա ընկնել մինչև շոգը, շատ վաղ,— ինչպես նա արթնացրեց ինչ քնքշանքով, ինքը արևածագից վաղ ոտքի ելած, ինձ համար արդեն թեյ պատրաստած, զսպելով տխրությունը, որ ես մենակ եմ մեկնում: Ամպամած էր և զով, նա շարունակ դուրս էր նայում պատուհանից. Հո անձրևն իմ ճամփորդությունը չի՞ փչացնելու: Մինչև օրս հիշում եմ այն քնքուշ և տագնապալի հուզումը, երբ մենք տեղից վեր թռանք դարպասի մոտ լսելով փոստակառքի զանգակի ձայնը, ինչպես արագ հրաժեշտ տվեցինք և դռնակից դուրս թռանք դեպի ձիափոխ սայլակառքը, որի մեջ պարուսինե երկար բալախանով և ամառային մոխրագույն գլխարկով նստած էր Վագինը:

Հետո զանգակը խլանում էր հսկայական օդային տարածության մեջ, սկսված օրը չոր էր, շոգ, սայլակը համաչափ վազում էր ճանապարհի թանձր փոշու միջով, և շուրջն ամեն ինչ այնքան միապաղաղ էր, որ շուտով արդեն ուժ չկար նայելու անկյանք-լուսավոր հորիզոնի հեռուն և լարված ինչ-որ բան սպասելու նրանից: Կեսօրին ցորենի այդ տաք անապատով մեր կողքից անցավ

կատարյալ քոչվոր մի բան. Կոչուրեյի անվերջանալի ոչխարանոցները. «Կեսօր, ոչխարանոցներ,— գրի առա ես սայլի ցնցումների տակ:— Տապից մոխագույն երկինք, ճուռակներ և ճեղագռավներ... Ես կատարյալ երջանիկ եմ»: Յանովշչինայում գրեցի պանդոկի մասին. «Յանովշչինա, հին պանդոկ, պանդոկի գորշ ներս և զով կիսամութ. հրեան ասաց, որ գարեջուր չունի, «կա միայն խմիչք»:— «Ի՞նչ խմիչք»— «Դեհ, խմիչք էլի: Խմիչք Մանուշակ»: Հրեան նիհար է, լապսերդակ հագած, բայց խմիչքը ներսի սենյակից բերեց գիմնազիստը, նրա որդին՝ զարմանալի գիրուկ մի պատանի, բաց մոխրագույն բաճկոնը նոր գոտիով կիպ ձգած, շատ գեղեցիկ, մի տեսակ պարսկական գեղեցկությամբ: Շիշակիից հետո ես անմիջապես հիշեցի գոգույան հուշատետրը: «Եվ հանկարծ գարնանացանք ուղիղ ճամփի մեջտեղ՝ զառիթափ դեպի խորք և ցած. և անտառի խորքում, և անտառների ետև՝ անտառներ, մոտիկ, կանաչների ետևում՝ հեռավորները՝ կապույտները նրանց ետևում՝ ավազաշերտ՝ արծաթե-հարդագույն... Զառիթափի և դիքի գլխին թևերն էր թափահարում ճռճռան հողմաղացը...»: Այդ զառիթափի տակ, հովտի խորքում աղեղնաձև թեքվում էր Պսյոլը և այգիներով կանաչին տալիս մի գյուղ: Այդ գյուղում երկար որոնում էինք ինչ-որ Վասիլենկոյի, որի հետ գործ ուներ Վագինը, և երբ գտանք, պարզվեց, տանը չէր, ու մենք նստել սպասում էինք նրա խրճիթի լորենու տակ մարգագետնային ուռիների խոնավության և գորտերի կռկռոցի մեջ: Այդտեղ էլ նստեցինք Վասիլենկոյի հետ ամբողջ երեկո, ընթրեցինք, թրմօղի խմեցինք, և լամպը ներքևից լուսավորում էր տերևների կանաչը, շուրջը թանձրանում էր ամառային գիշերվա անթափանցելի խավարը: Հետո այդ մթության մեջ հանկարծ թխկաց պարտեզի դռնակը և սեղանի մոտ շքեղ հայտնվեց կապտության աստիճանի սպիտակացրած դեմքով մի օրիորդ, Վասիլենկոյի ընկերուհին, տեղի զեմստվոյի բուժակուհին. անմիջապես իմացել էր, իհարկե, որ նրա մոտ նահանգից եկած հյուրեր կան: Առաջին պահին չգիտեր շփոթմունքից ինչ աներ, իրեն ինչպես պահեր, հետո սկսեց մեզ հետ խմել ըմպանակ ըմպանակի ետևից և ավելի ու ավելի հաճախացնել բացականչությունները իմ ամեն մի սրամտության առթիվ: Նա սոսկալի նյարդային էր, լայն այտոսկրավոր, չափազանց սևաչյա, ձեռները ջլուտ էին, շիպրի թունդ հոտով, ոսկրոտ թիակներ ուներ, ամառային թեթև երկնագույն բլուզի տակից երևում էին ծանր կրծքերը, իրանը բարակ էր, ազդրերը լայն: Գիշերը գնացի նրան ուղեկցելու: Քայլում էինք սև մթության մեջ, ինչ-որ նրբանցքի չորացած անվահետքերով: Մի չափառի մոտ նա կանգ առավ, գլուխը դրեց կրծքիս: Մեծ դժվարությամբ ինձ զսպեցի…

Վագինի հետ տուն վերադարձանք հաջորդ օրը, ուշ: Լիկան արդեն անկողնում էր, կարդում էր. ինձ տեսնելով, վեր թռավ ուրախացած և զարմացած. «Ինչպես, արդեն եկա՞ր»: Երբ նրան շտապով պատմում էի ամբողջ ուղևորությունս և ծիծաղելով սկսեցի պատմել բուժակուհու մասին, նա ինձ ընդհատեց.

— Ինչո՞ւ ես դա ինձ պատմում:

Եվ աչքերը արտասուքով լցվեցին:

— Որքան դաժան ես ինձ հետ,— ասաց, շտապով բարձի տակ որոնելով թաշկինակը:— Բավական չէ, որ թողնում ես մենակ…

Քանի-քանի՛ անգամ եմ կյանքումս հիշել այդ արտասուքները: Ահա մտաբերում եմ, թե ինչպես հիշեցի մի անգամ, այդ գիշերից մի քսան տարի հետո: Դա բեսարաբյան ծովափնյա ամառանոցում էր: Լողանալուց եկա և պառկեցի առանձնասենյակում: Շոգ և քամոտ կեսօր էր. այգու ուժեղ, մետաքսե-տաք, մերթ հանդարտվող, մերթ կատաղի սաստկացող աղմուկը տան շուրջ, ստվեր ու փայլ ծառերին, փափուկ ճկվող ճյուղերի շարժումը այս ու այն կողմ... Երբ քամին թանձր աղմկելով սաստկանում էր, մոտենում, հանկարծ բացում էր ստվերոտ սենյակի պատուհանը շրջանակող ողջ

այդ փայտե կանաչը, ցույց տալիս պատուհանից շոգ-արծնապակե երկինքը, և անմիջապես բացվում էր ստվերը սպիտակ առաստաղին, առաստաղը լուսավորվելով դառնում էր մանիշակագույն: Հետո նորից ամեն ինչ լռում էր, քամին փախչելով կորչում էր այգու հեռուներում, ծովափի զառիթափի գլխին: Նայում էի այդ ամենին, ականջ դնում, և հանկարծ մտածեցի, մի տեղ, քսան տարի առաջ, այն վաղուց մոռացված մալոռուսական խուլ վայրում, որտեղ մենք նրա հետ նոր սկսում էինք մեր համատեղ կյանքը, նույնպես նման մի կեսօր էր. ես արթնացա ուշ,— նա արդեն գնացել էր աշխատանքի,— այգուն նայող պատուհանները նույնպես բաց էին և պատուհաններից դուրս նույնպես աղմկում, երերվում, խայտաճամուկ փայլում էր, իսկ սենյակում ազատ շնկշնկում էր այն երջանիկ քամին, որ խոստանում է մոտալուտ նախաճաշ, բերում է տապակած սոխի հոտ. աչքերս բացելով, ներշնչեցի այդ քամին և, բարձիս հենվելով, նայեցի կողքիս դրված մյուս բարձին, որի վրա դեռ պահպանվել էր հազիվ որսալի մանուշակաբույրը նրա մուգ գեղեցիկ մազերի և թաշկինակի, որը, ինձ հետ հաշտվելով, նա դեռ երկար պահել էր ձեռքին. և հիշելով այդ ամենը, հիշելով, որ դրանից հետո կես կյանք եմ ապրել առանց նրա, տեսել եմ ողջ աշխարհը, մինչդեռ նա արդեն ամբողջ մի հավիտենականություն չկա այս աշխարհում, ես, սարսափահար, ոտքերս իջեցրի բազմոցից, դուրս եկա և ասես օդի միջով քայլեցի քացախածառերի ծառուղով դեպի զառիթափ, այնտեղից նայելով արջասպե-կանաչ ծովին, որ հանկարծ թվաց ինձ սարսափելի և հրաշալի, նախաստեղծ և նոր…

Այդ գիշեր երդվեցի նրան, որ այլևս ոչ մի տեղ չեմ գնա: Մի քանի օրից նորից մեկնեցի:

24

Երբ Բատուրինոյում էինք, Նիկոլայ եղբայրս ասում էր.

— Սրտանց խղճում եմ քեզ: Շուտ վրադ խաչ քաշեցիր:

Բայց ես ինձ վրա ոչ մի խաչ չէի զգում:

Իմ ծառայությունը դարձյալ համարում էի պատահական բան, ինձ համարել ամուսնացած, չէի կարողանում: Առանց նրա ապրելու միտքն իսկ ինձ կսարսափեցներ հիմա, սակայն, և մեր մշտական անբաժանելիության հնարավորությունը մեջս տարակուսանք էր առաջացնում. մի՞թե մենք իսկապես էլ միացել ենք ընդմիշտ և ահա այսպես պիտի ապրենք մինչև ծերություն, ուրիշների նման պետք է ունենանք տուն, երեխաներ: Վերջինը՝ երեխաները, տունը, ինձ առանձնապես անտանելի թվացին:

— Ահա մենք կամուսնանանք,— ասում էր նա ապագայի մասին երազելով:— Համենայն դեպս, ես այդ շատ եմ ուզում, և, հետո, պսակվելուց ավելի գեղեցիկ բան կա՞: Մենք, գուցեև, երեխա ունենանք... Մի՞թե դու չէիր ուզենա:

Մի բան քաղցր և խորհրդավոր ճվլում էր սիրտս: Սակայն ես կատակի էի տալիս:

— «Անմահները ստեղծում են, մահկանացուները աշխարհ են բերում իրենց նմանների»:

— Իսկ ե՞ս,— հարցնում էր նա:— Ես ինչո՞վ պետք է ապրեմ, երբ մեր սերը, ջահելությունն անցնի և այլևս պետք չլինեմ քեզ:

Դա լսելը շատ տխուր էր, և ես ջերմորեն ասում էի.

— Երբեք ոչինչ չի անցնի, դու երբեք չես դադարի ինձ պետք լինելուց:

Հիմա արդեն ես, ինչպես նա՝ առաջ, Օրյոլում ուզում էի լինել սիրված և սիրել, մնալով ազատ և ամեն ինչում առաջնություն ունենալ:

Այո, ամենից ավելի նա ինձ հուզում էր այն ժամին, երբ քնելուց առաջ հյուսում էր հյուսքը, մոտենում ինձ համբուրելու բարի գիշեր մաղթելով, և ես տեսնում էի, թե առանց կրունկների նա որքան ցածր է ինձնից, ինչպես է նա վարից վեր նայում աչքերիս:

Ամենից ավելի ուժգին զգում էի սերս նրա նկատմամբ այն պահերին, երբ նա իր առավել նվիրվածությունն էր արտահայտում իմ նկատմամբ, ինքնուրացումը, հավատը, որ ինձ վերապահում էր ինչ-որ առանձնահատուկ իրավունքներ զգացմունքի և արարքների:

Մենք հաճախ էինք հիշում մեր առաջին ձմեռը Օրյոլում, այն, ինչպես բաժանվեցինք այնտեղ, ինչպես ես մեկնեցի Վիտեբսկ, և ես ասում էի.

— Այո, այդ Պոլոցկը, ի՞նչն էր ինձ ձգում այնտեղ գնալու: Այդ Պոլոցկ կամ հին ձևով՝ Պոլոտսկ բառի հետ իմ մեջ վաղուց կապվել է ավանդությունը հին կիևյան իշխան Վսեսլավի մասին, որ կարդացել էի դեռ պատանեկությանս տարիներին, նա գահընկեց էր արվել եղբոր կողմից, փախել էր «պոլովցիների մութ երկիրը» և այնտեղ իր կյանքն ապրել «մեծ աղքատության մեջ», սքեմի մեջ, աղոթքների մեջ, չարչարանքի մեջ, «հիշողության հրապուրանքների» մեջ. իբր միշտ լուսադեմին արթնանում էր «դառն ու քաղցր արցունքներով», խաբուսիկ երազանքով, թե ինքը նորից Կիևում է, «իր իշխանապետությունում», և որ ոչ թե Պոլոցկում, այլ Կիևյան Սոֆիայում են ղողանջում զանգերը: Այդ ժամանակից Պոլոցկը միշտ պատկերացնում էի իսկապես հրաշալի իր հնությամբ և կոպտությամբ. ինչ-որ մութ, վայրի ձմեռային օր ինչ-որ փայտե Կրեմլ փայտե եկեղեցիներով և սև խրճիթներով, ձյունաթմբեր կոխկրտված ձիավորների և քուրք ու տրեխ հագած ոտավորների ոտքերի տակ... Երբ վերջապես եղա իսկական Պոլոցկում իհարկե, այնտեղ ոչ մի նմանություն չգտա իմ հորինածի հետ: Եվ, սակայն, իմ մեջ մինչև հիմա էլ երկու Պոլոցկ կա՝ այն, հորինածս, և իսկականը: Եվ այդ իսկականը նույնպես հիմա արդեն տեսնում եմ բանաստեղծական. քաղաքում տխուր է, թաց, ցուրտ, կիսախավար, իսկ կայարանում տաք մեծ սրահ հսկայական կիսաշրջանաձև պատուհաններով, արդեն վառվում են ջահերը, թեև դրսում դեռ նոր է մթնում, սրահում ահագին բազմություն կա՝ և քաղաքացիական և զինվորական, բոլորը շտապով ուտում են մինչ Պետերբուրգի գնացքի գալը, ամենուրեք խոսակցության ձայներ, դանակների չխկոց ափսեներին, սոուսների, շչիների հոտեր, որ իրենց շուրջն են սփռում այս ու այն կողմ թռչկոտող սպասավորները…

Նա, ինչպես միշտ նման պահերին, լսում էր ինձ առանձնահատուկ լարված ուշադրությամբ, և լսելով, համոզված համաձայնվում. «Այո, այո, հասկանում եմ քեզ»: Եվ ես օգտվում էի դրանից, ներշնչում նրան.

— Գյոթեն ասում էր. «Մենք ինքներս կախված ենք մեր իսկ ստեղծածից»: Կան զգացումներ, որոնց ես բոլորովին չեմ կարողանում հակառակվել: Երբեմն որևէ բանի մասին մի պատկերացում մեջս այնպիսի տառապալից ձգտում է առաջացնում դեպի այն, ուր ինձ ինչ-որ բան է պատկերացել, այսինքն՝ դեպի այն, ինչ գտնվում է այդ պատկերացման ետև, հասկանո՞ւմ ես՝ դրա ետև, որ ուղղակի չեմ կարող նկարագրել:

Մի անգամ Վագինի հետ գնացել էինք Կազաչյի Բրոդի, հինավուրց մի գյուղ Պոդնեպրովյեում, եղանք գաղթողների ճանապարհելուն, որ գնում էին վերաբնակության Ուսուրական երկրամաս:

Վերադարձանք առավոտյան, գնացքով: Երբ եկա կայարանից, նա եղբորս հետ արդեն վարչությունում էր: Առնականորեն արևառած և կայտառ, ինքս ինձնից շատ գոհ, բորբոքված ցանկությամբ՝ շտապով պատմելու նրան և եղբորս, թե ինչ հազվագյուտ տեսարան ինձ հաջողվեց տեսնել,— ամբողջ մի հորդա աչքիս առաջ ճամփա ընկավ դեպի այդ հեքիաթային երկրամասը, որ տասը հազար վերստ հեռու էր Կազաչյի Բրոդիից,— արագ շրջեցի դատարկ և հավաքված, մաքուր տնով մեկ, մտա ննջարան, որ շորերս փոխեմ և լվացվեմ, մի տեսակ բերկրալի ցավով նայեցի նրա արդուզարդի զանազան մանր-մունր իրերին, փոքրիկ բարձիկին՝ անկողնու բարձի վրա, այդ ամենը թվաց ինձ անսահմանորեն թանկ և միայնակ, սուր արձագանքեց սրտումս նրա առջև մեղավորության զգացումով, սակայն գիշերասեղանիկի վրա տեսա բացված գիրք և մի պահ կանգ առա. դա Տոլստոյի «Ընտանեկան երջանկությունն» էր, և բացված էջին տողեր կային ընդգծված. «Այն ժամանակվա իմ բոլոր մտքերը, այն ժամանակվա բոլոր զգացումները իմս չէին, այլ նրա մտքերն ու զգացումներն էին, որ հանկարծ դարձել էին իմը...»: Մի քանի էջ թերթեցի և շարունակության մեջ տեսա էլի նշումներ. «Հաճախ այդ ամառ ես գալիս էի իմ ննջարան և ապագայի համար ցանկությունների ու հույսերի նախկին տխրության փոխարեն, ինձ համակում էր տագնապը ներկայի երջանկության... Այդպես անցավ ամառը, և ես սկսեցի ինձ միայնակ զգալ: Նա միշտ ուղևորությունների մեջ էր և չէր խղճում, չէր վախենում ինձ մենակ թողնել...»:

Մի քանի րոպե կանգնած էի անշարժ: Պարզվում է, իմ մտքով էլ չի անցել, որ նա կարող է ունենալ (և ունի) ինձնից թաքուն, ինձ անհայտ և, կարևորը, տխուր զգացումներ և մտքեր և այն էլ արդեն անցյալ ժամանակով. «Այդ ժամանակվա իմ բոլոր մտքերը, այն ժամանակվա զգացումները... Հաճախ այդ ամառ ես գալիս էի...»: Ամենից անսպասելի էր այս վերջինը. «Այդպես անցավ ամառը, և ես սկսեցի ինձ միայնակ զգալ...»: Ուրեմն նրա արցունքներն այն գիշեր, երբ վերադարձա Շիշակիից, պատահական չէի՞ն:

Վարչություն գնացի առանձնապես կայտառ տրամադրությամբ, ուրախ համբուրվեցի նրա և եղբորս հետ, խոսում և կատակում էի անդադար: Թաքուն տառապանքով սպասելով,— մինչև որ մենակ մնացինք, անմիջապես ասացի խիստ.

— Պարզվում է, դու առանց ինձ «Ընտանեկան երջանկությո՞ւնն» էիր կարդում:

Նա կարմրեց:

— Այո, ի՞նչ է որ:

— Զարմացած եմ գրքի վրա քո ընդգծումներից:

— Ինչո՞ւ:

— Որովհետև դրանցից միանգամայն պարզ է, որ քեզ համար արդեն ծանր է ինձ հետ ապրելը, որ դու միայնակ ես, հիասթափված:

— Ինչպես ես միշտ ամեն ինչ չափազանցնում,— ասաց նա:— Ի՞նչ հիասթափություն: Պարզապես ինձ համար մի քիչ տխուր էր, և իրոք որոշ նմանություն գտա... Հավատացնում եմ քեզ, որ դա բոլորովին այն չէ, ինչ երևակայում ես:

Նա ո՞ւմ էր հավատացնում: Ի՞նձ, թե իրեն: Սակայն ես շատ ուրախ էի լսելու այդ ամենը. շատ էի ուզում, ինձ համար հարմար էր հավատալ նրան: «Տափաստանի փուփուլավոր որորը բարձրանում է ճամփից... Վազում է մեջքը կապույտ կոպիտ մահուդով ձգված, և ցնցվում են կտորի տակ թրթռացող կրծքերը, իսկ բոկոտն ոտքերից, մինչև ծնկները բաց, արյուն ու առողջություն են

հորդում...» Ինչքան «թերեր» ասես որ չկային այստեղ: Եվ կարո՞ղ էի ես հրաժարվել դրանցից: Եվ հետո, մտածում էի, որ դրանք միանգամայն համատեղելի են նրա հետ: Ամեն մի առիթով ներշնչում էի նրան մի բան. ապրիր միայն ինձ համար և ինձնով, մի զրկիր ինձ իմ ազատությունից, ինքնակամությունից. ես քեզ սիրում եմ և դրա համար է՛լ ավելի կսիրեմ: Ինձ թվում էր, ես այնքան եմ սիրում նրան, որ ինձ ամեն ինչ կարելի էր, ամեն ինչ ներելի:

25

— Դու շատ ես փոխվել,— ասում էր նա:— Դարձել ես ավելի տղամարդկային, բարի, հաճելի: Դարձել ես կենսուրախ:

— Ահա, իսկ իմ եղբայր Նիկոլայը և քո հայրը կանխագուշակում էին, թե մենք շատ դժբախտ կլինենք:

— Նրա համար, որ Նիկոլայն ինձ շատ չսիրեց: Թե ինչ էի զգում ես Բատուրինոյում նրա սառն սիրալիրությունից, չես էլ կարող պատկերացնել…

— Ընդհակառակն, նա քո մասին խոսում էր մեծ քնքշությամբ: Ես նրան էլ եմ սարսափելի խղճում, ասում էր նա, նա էլ դեռ շատ ջահել աղջիկ է, և, մտածիր, թե ինչ է սպասվում ձեզ առջևում. մի քանի տարի հետո քո գոյությունն ինչո՞վ պետք է տարբերվի նահանգային որևէ աստիճանավորից: Հիշո՞ւմ ես, ինչպես էի երբեմն կատակով նկարագրում իմ ապագան: Փոքրիկ բնակարան երեք փոքրիկ սենյակներից, հիսուն ռուբլի ռոճիկ…

— Նա միայն քեզ էր խղճում:

— Վատ էր խղճում, ասում էր, որ նրա հույսը միայն այն է, որ ինձ ու քեզ կփրկի իմ «անառակությունը», որ ես անընդունակ կլինեմ նման կարիերայի և որ մենք շուտով իրարից կհեռանանք. կամ դու նրան անխղճաբար կլքես, ասում էր նա, կամ էլ նա քեզ, որոշ ժամանակ մնալով այդ հաճելի վիճակագրության մեջ և հասկանալով, թե ինչ ճակատագիր ես դու նրա համար պատրաստել:

— Ինձ վրա նա իզուր էր հույս դնում, ես քեզ երբեք չեմ թողնի: Կթողնեմ միայն այն դեպքում, եթե տեսնեմ, որ քեզ այլևս պետք չեմ, որ խանգարում եմ քեզ, քո ազատությանը, քո կոչմանը…

Երբ մարդու հետ դժբախտություն է պատահում, նա անդադար վերադառնում է շարունակ նույն տառապալից և անօգուտ մտքին. ե՞րբ և ինչպե՞ս դա սկսվեց, ինչի՞ց գոյացավ այդ ամենը, և ես ինչպես չկարողացա կարևորություն տալ այն ժամանակ այն բանին, ինչը պետք է ինձ համար նախազգացում հանդիսանար. «Ես քեզ կթողնեմ միայն այն դեպքում...»: Ինչպե՞ս ես ուշադրություն չէի դարձնում այդ խոսքերին, այն բանին, որ նա, այնուամենայնիվ, ինչ-որ «դեպք» չէր բացառում:

Ես չափազանց էի գնահատում իմ «կոչումը», ավելի ու ավելի անխոհեմաբար էի օգտվում ազատությունիցս՝ Նիկոլայ եղբայրս իրավացի էր: Եվ ավելի ու ավելի չէի կարողանում տանը մնալ. հենց ազատ օր էր լինում, անմիջապես մեկնում էի, գնում որևէ տեղ:

— Որտե՞ղ ես այդպես արևից այրվել,— հարցնում է ճաշի ժամանակ եղբայրս:— Ո՞ւր էիր նորից կորել:

— Եղել եմ վանքում, գետի վրա, կայարանում…

— Եվ միշտ մենակ,— կշտամբանքով ասում է Լիկան։— Քանի անգամ խոստացել է, որ միասին կգնանք վանք, այս ամբողջ ժամանակ ես ընդամենը մի անգամ եմ այնտեղ եղել, իսկ այնտեղ հիանալի է, այնքան հաստ պատեր են, ծիծեռնակներ, վանականներ...
Ինձ համար ամոթալի էր, տառապալի նրան նայել: Սակայն, ազատությանս համար վախից, միայն ուսերս թոթվեցի.

— Ինչի՞դ են պետք այդ վանականները:

— Իսկ քո՞ ինչին են պետք:

Աշխատում էի փոխել խոսակցությունը:

— Այնտեղ գերեզմանոցում այսօր մի շատ տարօրինակ բան տեսա. դատարկ, բայց արդեն լրիվ պատրաստ գերեզման՝ միաբանության անդամներից մեկը կարգադրել էր նախօրոք իր համար փորել ու նույնիսկ խաչն էլ տնկել. խաչի վրա արդեն գրված է՝ ով է այնտեղ թաղված, երբ է ծնվել, գրված է նաև «վախճանվել է»— միայն դատարկ տեղ է թողնված ապագա վախճանի ամսաթվի համար: Շուրջը մաքրություն, կարգուկանոն, արահետներ, ծաղիկներ, և հանկարծ այդ սպասող գերեզմանը:

— Ահա, տեսնո՞ւմ ես:

— Ի՞նչ եմ տեսնում:

— Դիտավորյալ չես ուզում ինձ հասկանալ: Սակայն, աստված քեզ հետ: Ճիշտ է ասված Տուրգենևի մոտ...

Ընդհատեցի նրան.

— Դու կարծեմ հիմա կարդում ես միայն նրա համար, որ որևէ բան գտնես քո և իմ մասին: Ի դեպ, բոլոր կանայք են այդպես կարդում:

— Էհ, թեկուզ ես կին եմ, բայց այդքան եսասեր չեմ...

Եղբայրս քնքշորեն միջամտեց.

— Դե վերջ տվեք, պարոնայք:

26

Ամռան վերջերին վարչությունում իմ վիճակն ավելի կարգավորվեց. առաջ ես միայն «կցված» էի, իսկ հիմա հաստիքով տեղավորվեցի և նոր պաշտոն ստացա, ինձ ավելի քան համապատասխան, դարձա «պահապանը» վարչության գրադարանի՝ վարչության նկուղներում կուտակված զեմստվոյական զանազան հրատարակությունների: Այդ պաշտոնը, որ ինձ համար ստեղծել էր Սուլիման, պարտավորեցնում էր ինձ. ընտրել և կարգավորել այդ հրատարակությունները, տեղավորել դրանք սենյակում, որ հատուկ տրամադրվել էր այդ նպատակով,— երկարուկ, կամարակապ սենյակ կիսանկուղային հարկում,— կահավորված անհրաժեշտ քանակությամբ պահարաններով և դարակներով, ապա հսկողություն դրանց վրա և վարչությունում ժամանակավոր օգտագործման հանձնում՝ այն նյութերի, որ կարող են պետք լինել այս կամ այն բաժնին տվյալ պահին: Ես ընտրեցի, կարգավորեցի, տեղավորեցի, սկսեցի հսկել և սպասել հանձնումին: Սակայն քանի որ ոչինչ հանձնելու հարկ չէր լինում,— որոշ բաներ բաժիններին

կարող էին պետք գալ միայն աշնանը, զեմստվոյի ժողովից առաջ,— ուստի ինձ մնում էր միայն հսկողությունը, պարզապես նստել այդ կիսանկուղային սենյակում, որ ինձ դուր էր գալիս իր չափազանց ամրոցային հաստ պատերով և կամարներով, իր կատարյալ լռությամբ,— ոչ մի ձայն չէր հասնում այնտեղ ոչ մի տեղից,— և իր ոչ մեծ, հատակից բարձր պատուհանով, որի միջով վերևից լուսավորում էր արևը, և երևում էին վարչության ետևի ամայուտում աճող զանազան վայրի թփերի և խոտերի արմատները: Իմ կյանքը դրանից հետո դարձավ ավելի ազատ. օրերով նստում էի այդ դամբարանում, կատարյալ միայնության մեջ, գրում էի, կարդում, կարող էի թեկուզ մի ամբողջ շաբաթ չգնալ այնտեղ, փակել կաղնեփայտե ցածրիկ դուռը և գնալ, մեկնել ուր խելքս փչեր: Չգիտեմ ինչի համար մեկնեցի Նիկոլան, հաճախ գնում էի մերձքաղաքային մի խուտոր, որտեղ բնակություն էին հաստատել հանուն արդար կյանքի երկու եղբայր տոլստոյականներ, մի ժամանակ ամեն կիրակի երեկո անց էի կացնում խոխոլական մեծ գյուղում, որ գտնվում էր քաղաքից դուրս գալուց առաջին կայարանի ետևում, վերադառնում էի ուշ գիշերային գնացքով... Ինչո՞ւ էի մեկնում, գնում: Նա զգում էր այն թաքունը, որ ամեն ինչից զատ, իմ թափառումների նպատակն էր: Շիշակիի բուժակուհու մասին պատմածս նրա վրա տպավորություն էր թողել ավելի, քան ես կարծում էի: Այդ օրից նրա մեջ սկսեց խանդ առաջանալ, որ նա ջանում էր, բայց միշտ չէ, որ կարողանում էր թաքցնել: Այսպես, Շիշակիի մասին պատմածիցս մի երկու շաբաթ հետո նա, ի կատարյալ հակադրություն իր բարի, ազնիվ, դեռ աղջկական բնավորության, հանկարծ իրեն պահեց ինչպես ամենասովորական «տանտիրուհի»— մի պատրվակ գտավ և խիստ վճռականությամբ վռնդեց մեզ ծառայող կազակուհուն:

— Շատ լավ գիտեմ,— տհաճորեն ասաց ինձ,— որ դա քեզ վշտացնում է. դե, իհարկե, այնքան հիանալի «տկտկացնում է» կոշիկները այդ, ինչպես ասում ես, «փոքրիկ զամբիկը», ինչ չարխաքաշ կոճիկներ ունի, ինչ շքեղ փայլուն աչքեր: Բայց դու մոռանում ես, որ այդ փոքրիկ զամբիկը լեզվանի է, ինքնակամ, և որ իմ համբերությունն էլ, այնուամենայնիվ, վերջ ունի…

Պատասխանեցի սրտանց, ամենայն անկեղծությամբ.

— Ինչպե՞ս կարող ես ինձ խանդել: Ես, ահա, նայում եմ քո աննման ձեռքին և մտածում. միայն այս մի ձեռքը չեմ փոխի աշխարհի բոլոր գեղեցկուհիների հետ: Բայց ես բանաստեղծ եմ, արվեստագետ, իսկ ամեն մի արվեստ, Գյոթեի խոսքերով ասած, զգայական է:

27

Մի անգամ օգոստոսին իրիկնադեմին գնացի խուտոր տոլստոյականների մոտ: Քաղաքը դեռ ամայի էր այդ շոգ ժամին, և հետո՝ շաբաթ օր էր: Քայլում էի հրեաների փակ խանութների և հին առևտրական շարքերի մոտով: Դանդաղ խփում էին երեկոյան ժամերգության զանգերը, փողոցներում արդեն երկար ստվերներ էին այգիներից և տներից, սակայն դեռևս պահպանվում էր այն առանձնահատուկ իրիկնադեմի տապը, որ լինում է հարավային քաղաքներում ամռան վերջին, երբ ամեն ինչ վառվում է նույնիսկ այգիներում և նախապարտեզներում, որ օր-օրի այրվել էին արևի տակ, երբ ամեն ինչ և ամենուր,— և քաղաքում, և տափաստանում, և բոստաններում,— անուշ հոգնած է երկար ամառից:

Հրապարակում, քաղաքային ջրհորի մոտ, աստվածուհու պես կանգնած էր խոշորամարմին մի խոխոլուհի՝ բոբիկ ոտներին պայտած կոշիկներ. նա ուներ խաժ աչքեր և այն պայծառությունը լայն ճակատի, որ հատուկ է խոխոլուհիներին և լեհուհիներին: Հրապարակից դեպի սարի տակ, հովիտ գնացող փողոցն էր նայում հարավային հորիզոնի հազիվ երևացող տափաստանային բլուրների նախահիրիկնային հեռաստանը: Այդ փողոցով իջնելով, թեքվեցի դեպի քաղաքի ծայրամասում

գտնվող քաղքենիական կալվածքների միջև ընկած խուլ նրբանցքն ու դուրս եկա լևադա[9], որպեսզի բարձրանամ նրա ետևի սարը, տափաստանը: Լևադայում երկնագույն և սպիտակ կավածեփ խրճիթների մեջ ընկած կալատեղերում երևում էին շղթաները. դա կալսում էին այն նույն ջահել տղաները, որ այնպես վայրենի և սքանչելի բվվում կամ երգում էին ամռան գիշերներին: Սարի վրա ամբողջ տափաստանը, որքան աչքդ կտրում էր, ոսկեգույն էր խիտ հունձքից: Լայն ճանապարհին այնքան խոր և փափուկ փոշի էր նստած, որ թվում էր թավշյա սապոգներով ես քայլում: Եվ ամեն ինչ շուրջդ՝ ամբողջ տափաստանը և ամբողջ օդը, անտանելի փայլում էր ցած արևից: Ճանապարհից ձախ, հենց դա էր տոլստոյականների խուտորը: Ճամփից թեքվեցի և նրանց մոտ գնացի հնձած արտով: Սակայն պարզվեց, խուտորը դատարկ էր. ոչ խրճիթում, ոչ էլ խրճիթի մոտերքը մարդ չկար: Ներս նայեցի բաց պատուհանից ներսում թանձր շարժվեց պատերին, առաստաղին, դարակների ամանների վրա անթիվ-անհամար ճանճերի սևությունը: Ներս նայեցի անասնանոցի բաց դռնից. միայն իրիկնային արևն էր կարմրին տալիս չոր գոմաղբի վրա: Գնացի բոստան և տեսա կրտսեր տոլստոյականի կնոջը. նա նստած էր բոստանի եզրային բաժանագծին: Մոտենում էի, նա չէր նկատում կամ ձևացնում էր, թե չի նկատում ինձ. անշարժ նստած էր կողքով, փոքրիկ, միայնակ, բոբիկ ոտները մի կողմ մեկնած, մի ձեռքով հենվել էր հողին, մյուսով բերանում պահել մի ծղոտիկ:

— Բարի երեկո,— ասացի, մոտենալով:— Ինչո՞ւ եք այդպես տխուր:

— Համեցեք և նստեցեք,— պատասխանեց նա քմծիծաղով և, ծղոտիկը դեն նետելով, ինձ մեկնեց թխացած ձեռքը:

Նստեցի և նայեցի. բոլորովին փոքրիկ աղջնակ, որ պահակություն է անում բոստաններին: Արևից խանձված մազեր, գյուղական բլուզ վզի մեծ կտրվածքով, հին սև պլախտա կանացիավարի զարգացած ազդրերին ձգված: Նրա փոքրիկ բոբիկ ոտները փոշոտ էին և նույնպես սևացած ու չոր արևայրուկից. սա ինչպես է, մտածեցի, բոբիկ ոտներով ման գալիս գոմաղբի և զանազան փշոտ խոտերի վրա: Այն բանից, որ նա մեր շրջանակից էր, որտեղ բոբիկ ոտները ցույց չեն տալիս, ես ինձ միշտ անհարմար էի զգում, բայց և մեծ ցանկություն էի ունենում նայելու նրա ոտքերին: Իմ հայացքն զգալով, նա ոտքերը հավաքեց:

— Ո՞ւր են ձերոնք:

Նա նորից քմծիծաղ տվեց:

— Գնացել են ամեն մեկը մի կողմի վրա: Մի սուրբ եղբայրը գնացել է լևադա, կալսելու, ինչ-որ խեղճ այրի կնոջ է օգնում, մյուսը նամակներ է տարել քաղաք մեծն ուսուցչին. հերթական հաշվետվությունը մի շաբաթվա մեր բոլոր մեղանչումների, գայթակղությունների և մարմնական հաղթահարումների: Բացի այդ, հերթական «փորձությունը», որի մասին նույնպես պետք է հայտնել. Խարկովում բանտարկել են «եղբայր» Պավլովսկուն թռուցիկներ տարածելու համար զինվորական ծառայության դեմ, անշուշտ:

— Դուք կարծես շատ անտրամադիր եք:

— Զզվել եմ,— ասաց նա, գլուխը թափ տալով և ետ գցելով:— Այլևս չեմ կարող,— ավելացրեց նա կամացուկ:

— Ի՞նչ չեք կարող:

---

[9] Գյուղամերձ հանդ՝ պտղատու և անպտուղ ծառերով *(ծթ.)*:

— Ոչինչ չեմ կարող: Ծխախոտ տվեք ինձ:

— Ծխախո՞տ:

— Այո, այո, ծխախոտ:

Տվեցի, լուցկին վառեցի, նա արագ և անվարժ ծխեց և, ընդհատ-ընդհատ ներս քաշելով ու կանացիավարի ծուխը շրթունքներից դուրս փչելով, լռեց, նայելով հովտից այն կողմ, հեռուն: Ցած արևը դեռ տաքացնում էր մեր ուսերը, և ծանր, երկարուկ ձմերուկները, որ ընկած էին մեր կողքին, չոր հողի մեջ խրված, օձանման խճճված այրված պատատացողունների մեջ... Հանկարծ նա ծխախոտը շպրտեց և, գլուխը ծնկներիս գցելով, անզուսպ հեկեկաց: Եվ այն բանից, ինչպես մխիթարում էի նրան, համբուրում արևաբույր մազերը, ինչպես սեղմում էի ուսերն ու նայում ոտքերին, շատ լավ հասկացա, թե ինչու էի գալիս տոլստոյականների մոտ:

Հապա Նիկոլա՞ևը: Ինչի՞ս էր պետք Նիկոլաևը: Գնալով, որոշ գրառումներ էի անում.

— Հենց նոր դուրս եկա Կրեմենչուկից, երեկո է: Կրեմենչուկի կայարանում, կառամատույցի վրա, բուֆետում, շատ մարդ կար, հարավային հեղձուցիչ օդ է, հարավային հրմշտոց: Վագոններում նույնպես: Ամենից շատ են խոխոլուհիները, բոլորը ջահել, արևից թխացած, համարձակ, ճանապարհից և շոգից գրգռված. գնում են ուր որ «ցածերը», գործի: Այնպես են հուզում մարմնի և գյուղական հագուստի հոտով, այնպես են կչկչում, երգում, ուտում և խաղում արագախոսությամբ, ընկուզանման աչքերով, տառապեցնելու չափ…

— Երկար, երկար կամուրջ Դնեպրի վրա, կարմիր կուրացնող արև աջ կողմի պատուհանից և հեռվում պղտոր դեղին ջուր: Ավազոտ ծանծաղ ափին բազմաթիվ հանգիստ մերկացող և լողացող կանայք: Ահա մեկը շապիկը հանեց, անվարժ վազեց և կրծքով ընկավ ջուրը, ոտքերը կատաղի թափահարեց ջրի մեջ…

— Արդեն վաղուց անցել ենք Դնեպրը: Իրիկնային ստվեր է ամայի սարերում, ամբողջապես ծածկված հնձած խոտով և հնձած արտերով: Չգիտես ինչու մտածում էի Սվյատոպոլկ Նզովյալի մասին. ահա այսպիսի մի իրիկուն նա ձիով գնում է այս հովիտով մի ոչ մեծ զորագնդի առջևից. ո՞ւր, ի՞նչ է մտածում: Ու դա հազար տարի առաջ էր, և ամեն ինչ երկրի վրա նույնկերպ գեղեցիկ է և հիմա: Ոչ, դա Սվյատոպոլկը չէ, դա մի վայրենի գյուղացի է դանդաղ գնում ձիով սարերի մեջ ընկած ստվերով, և նրա ետև նստած է մի կին՝ ձեռները մեջքին կապած, զզզզված մազերով, արևից թխացած ջահել ծնկներով, ատամները սեղմած նայում է գյուղացու ծոծրակին, սա ուշադիր նայում է առջևը…

— Լուսնյակ թաց գիշեր: Պատուհանից դուրս հարթ տափաստան է, ճամփի սև ցեխ: Ամբողջ վագոնը քնած է, կիսախավար է, հաստ մոմի մնացուկ փոշոտ լապտերի մեջ: Բաց պատուհանից դաշտային խոնավություն է փչում, որ տարօրինակ կերպով խառնվում է վագոնի ծանր, գարշահոտ օդին: Խոխոլուհիներից մի քանիսը քնած են մեջքի վրա, չռված: Բացված շրթունքներ, կրծքեր բլուզների տակ, ծանր ազդրեր պլախտաների և փեշերի մեջ.— Մեկը հիմա արթնացավ և երկար նայում էր ուղիղ ինձ: Բոլորը քնած են, թվում է ահա հիմա կկանչի խորհրդավոր շշուկով…

Գյուղը, որտեղ լինում էի կիրակի օրերը, գտնվում էր կայարանից ոչ հեռու, լայնարձակ և հարթ հովտում: Մի անգամ աննպատակ հասա մինչև այդ կայարան, իջա և գնացի: Մթնշաղ էր, առջևում այգիների մեջ սպիտակին էին տալիս խրճիթները, ավելի մոտ, արոտատեղիում, սևին էր տալիս հալից ընկած հողմաղացը: Նրա տակ բազմություն էր հավաքված և բազմության ետևում սրտակեղեք վնգվնգում էր ջութակն ու դոփում էին պարող ոտքերը... Հետո մի քանի կիրակնօրյա

երեկոներ կանգնեցի այդ բազմության մեջ, մինչև կեսգիշեր լսեցի մեկ ջութակն ու դոփդոփյունը, մեկ խմբովին երկարաձիգ երգերը. մոտենալով, կանգնում էի խոշոր շրթունքներով և դեղնաչք զարմանալի պայծառ հայացքով բարձրակուրծք, շեկ աղջկա կողքին, և անմիջապես, օգտվելով նեղվածքից, թաքուն իրար ձեռք էինք բռնում: Կանգնում էինք հանգիստ, ջանալով իրար չնայել. հասկանում էինք, որ ինձ համար վատ կլինի, եթե ջահել տղաները նկատեն, թե ինչի համար է սկսել հողմաղացի տակ հայտնվել քաղաքացի պանիչը: Առաջին անգամ իրար կողքի ընկանք պատահմամբ, հետո, հենց ես մոտենում էի, նա անմիջապես մի վայրկյանով շուռ էր գալիս և, զգալով ինձ իր կողքին, բռնում էր մատներս արդեն ամբողջ երեկո: Եվ որքան ավելի էր մթնում, այնքան ավելի ամուր էր սեղմում նա մատներս և ավելի մոտ հպվում ուսիս: Գիշերը, երբ ամբոխն սկսում էր նոսրանալ, նա աննկատելիորեն անցնում էր հողմաղացի ետև, արագ թաքնվում էր այնտեղ, իսկ ես դանդաղ քայլում էի կայարան տանող ճամփով, սպասում էի, մինչև հողմաղացի մոտ մարդ չմնա և կուզեկուզ ետ էի վազում: Մենք անխոս պայմանավորվել էինք այդպես անել, լուռ էինք կանգնում և հողմաղացի տակ, և լուռ, երանավետ լլկվում: Մի անգամ նա եկավ ինձ ճանապարհելու: Մինչև գնացքի գալը դեռ կես ժամ կար, կայարանում մթություն էր և լռություն, շուրջը միայն հանգստացուցիչ ճռռում էին ճռիկները, և հեռվում, որտեղ գյուղն էր, սև այգիների վրա կապտա-կարմրին էր տալի բարձրացող լուսինը: Պահեստային գծի վրա կանգնած էր ապրանքատար վագոն, դռները բաց... Ես ակամա, ինքս էլ սարսափելով արածիցս, նրան քաշեցի դեպի վագոնը, ինքս բարձրացա, նա վեր թռավ ետևիցս և ամուր գրկեց պարանոցս: Սակայն ես լուցկին չխկացրի, որպեսզի շուրջս նայեմ, և սարսափից ետ թռա: Լուցկին լուսավորեց վագոնի մեջտեղ դրված երկար էժանագին դագաղը: Նա ճարպկորեն դուրս թռավ, ես էլ՝ ետևից... Վագոնի տակ նա անընդհատ ընկնում էր, ծիծաղից խեղդվում, համբուրում էր ինձ վայրի ուրախությամբ, իսկ ես չէի համբերում, թե երբ պետք է մեկնեմ, և դրանից հետո այլևս այդ գյուղ ոտք չդրի:

28

Աշնանը մենք վայելում էինք այն տոնական շրջանը, որ լինում է քաղաքում ամեն տարեվերջին՝ ամբողջ նահանգից զեմստվոյական իրավասուների հավաքը նահանգական ժողովի: Մեզ համար տոնական անցավ և ձմեռը. մալոռուսական թատրոնի հյուրախաղերն էին Զանկովեցկայայի և Սակսագանսկու մասնակցությամբ, համերգներ մայրաքաղաքային նշանավորների՝ Չերնովի, Յակովլևի, Մրավինայի, եղան շատ պարահանդեսներ, դիմակահանդեսներ, հրավիրովի երեկույթներ: Զեմստվոյական ժողովից հետո ես գնացի Մոսկվա, Տոլստոյի մոտ և, վերադառնալով, մի առանձնահատուկ հաճույքով տրվեցի աշխարհիկ գայթակղություններին: Եվ դրանք, այդ գայթակղությունները, շատ փոխեցին մեր կյանքը արտաքուստ՝ կարծեմ ոչ մի երեկո տանը չէինք անցկացնում: Աննկատելիորեն փոխեցին, վատացրին և մեր հարաբերությունները:

— Դու նորից դառնում ես մի ուրիշ տեսակ,— ասաց նա մի անգամ:— Իսկական տղամարդ: Չգիտես ինչու սկսել ես ֆրանսիական մորուք պահել:

— Քեզ դուր չի՞ գալիս:

— Ոչ, ինչո՞ւ: Միայն թե՝ ի՜նչ շուտ է ամեն ինչ անցկացնում:

— Այո: Ահա դու էլ սկսել ես ջահել կնոջ նմանվել, նիհարել ես, ավելի գեղեցկացել

— Ու դու նորից սկսել ես ինձ խանդել: Եվ ահա արդեն վախենում եմ քեզ խոստովանել:

— Ի՞նչ:

— Այն, որ մյուս դիմակահանդեսին ուզում եմ զգեստավորված լինել։ Ոչ թանկ և շատ պարզ մի բան, սև դիմակ և մի որևէ սև հագուստ, թեթև, երկար…

— Դա ի՞նչ պիտի նշանակի։

— Գիշեր։

— Ուրեմն նորից սկսում ես օրյոլյան շրջանի նման մի բան։ Գիշեր։ Դա բավական գոթիկ է։

— Ոչ մի օրյոլյան և գոթիկ բան չեմ տեսնում,— պատասխանեց նա չոր և անկախ, և այդ չորության ու անկախության մեջ սարսափով զգացի նախկինի նման մի բան։— Պարզապես սկսել ես նորից ինձ խանդել։

— Իսկ ինչո՞ւ եմ սկսել նորից խանդել։

— Չգիտեմ։

— Ոչ, գիտես։ Որովհետև դու նորից սկսել ես հեռանալ ինձնից, նորից ուզում ես դուր գալ, տղամարդկանց հիացմունքներն ընդունել։

Նա անբարյացակամ ժպտաց։

— Դու որ այդ մասին չպիտի խոսես։ Ահա ամբողջ ձմեռ Չերկասովայից պոկ չես գալիս։

Կարմրեցի։

— Չէ՛ մի, պոկ չես գալիս։ Կարծես ես մեղավոր եմ, որ նա լինում է այն նույն տեղերում, որտեղ մենք ենք լինում։ Ինձ համար ամենից ավելի ցավալի է այն, որ դու ինձ հետ դարձել ես կարծես պակաս ազատ, կարծես քո մեջ ինձնից թաքուն մի գաղտնիք է առաջացել։ Ասա ուղղակի՝ ի՞նչ։ Դու ի՞նչ ես մեջդ թաքցնում։

— Ի՞նչ եմ թաքցնում,— պատասխանեց նա։— Տխրություն, որ արդեն մեր նախկին սերը չկա։ Բայց դե ինչ խոսենք։

Եվ, լռելով, ավելացրեց.

— Իսկ ինչ վերաբերում է դիմակահանդեսին, ապա պատրաստ եմ լրիվ հրաժարվել այնտեղ լինելուց, եթե դա քեզ համար տհաճ է։ Միայն թե դու չափազանց ես խիստ իմ հանդեպ, իմ յուրաքանչյուր երազանք անվանում ես գոթիկություն, ամեն ինչից զրկում ես ինձ, իսկ ինքդ քեզ ոչնչից հետ չես պահում…

Գարնանն ու ամռանը ես նորից բավական ճամփորդեցի։ Աշնան սկզբին նորից հանդիպեցի Չերկասովային (որի հետ մեր մեջ մինչ այդ իրոք ոչինչ չէր եղել) և իմացա, որ նա տեղափոխվում է Կիև։

— Ընդմիշտ հեռանում եմ ձեզնից, սիրելի բարեկամ,— ասաց նա, նայելով ինձ իր գիշատիչ աչքերով։— Ամուսինս երկար սպասեց ինձ այնտեղ։ Ուզո՞ւմ եք ինձ մինչև Կրեմենչուկ ուղեկցել։ Միայն, իհարկե, խիստ գաղտնի։ Այնտեղ պետք է անցկացնեմ ամբողջ գիշեր՝ նավին սպասելով…

29

Դա նոյեմբերին էր, մինչև հիմա տեսնում և զգում եմ այդ անշարժ, մռայլ օրերը մալոռուսական խուլ քաղաքում, նրա ամայի փողոցները նեղ մայթերին քաշած փայտե փռվածքով և ցանկապատերի ետևում սև այգիներով, բարդիների մերկ բարձրությունը բուլվարներում, դատարկ քաղաքային այգին ամառային ռեստորանի մեխված պատուհաններով, այդ օրերի խոնավ օդը, տերևների փտած գերեզմանոցային հոտը, և իմ անմիտ, աննպատակ թափառումներն այդ փողոցներում, այդ այգում, իմ շարունակ նույն մտքերն ու հիշողությունները... Հիշողություններ՝ այնքան ծանր, սարսափելի մի բան, որ նույնիսկ հատուկ աղոթք կա դրանցից փրկվելու:

Ճակատագրական ինչ-որ ժամի նրա թաքուն տառապանքները, որոնց մասին երբեմն-երբեմն միայն մի բան էր բերնից թռցնում, սկսեցին նրան խելագարեցնել: Գեորգի եղբայրս այդ օրը ծառայությունից տուն էր վերադարձել ուշ, իսկ ես՝ ավելի ուշ, և նա գիտեր, որ մենք ուշ ենք գալու, վարչությունը նորից պատրաստվում էր տարեկան զեմստվոյական ժողովի, նա մենակ մնում էր տանը, մի քանի օր տնից դուրս չէր գալիս, ինչպես միշտ ամեն ամիս, և ինչպես միշտ այդ ժամանակ բնավ իր սովորականի նման չէր: Նա, հավանաբար, երկար կիսապառկած է եղել մեր ննջարանի թախտին, ըստ սովորության ոտները տակը ծալած, շատ ծխել է,— որոշ ժամանակից ի վեր սկսել էր ծխել, ուշադրություն չդարձնելով իմ խնդրանքներին և պահանջին՝ թողնելու այդ իրեն չափազանց չվայելող զբաղմունքը,— երկար նայել է, հավանաբար, իր առջև, հետո հանկարծ վեր է կացել, առանց մի ջնջումի գրել է ինձ մի քանի տող թղթի կտորի վրա, որ եղբայրս տուն վերադառնալով գտել էր այդ ամայացած ննջարանի զարդասեղանիկին, և արագ սկսել է հավաքել իր իրերից որոշ բաներ՝ մնացածը պարզապես թողել է, և այդ մնացածը, այս ու այն կողմ թափթփած, ես երկար ժամանակ չէի կարողանում հավաքել ու պահել մի տեղ: Գիշերը նա արդեն հեռու էր, ճամփին՝ դեպի տուն, հոր մոտ... Ինչո՞ւ ես հենց անմիջապես չնետվեցի նրա ետևից: Միգուցե ամոթից և այն բանից, որ արդեն շատ լավ գիտեի նրա անդրդվելիությունը կյանքի որոշ պահերին: Իսկ իմ հեռագրերին և նամակներին ի պատասխան, վերջապես, ստացա երկու տող միայն. «Աղջիկս մեկնել է և իր գտնվելու տեղը արգելել է հայտնել որևէ մեկին»: Չգիտեմ, ինչ էր լինելու ինձ հետ առաջին շրջանում, եթե հետս չլիներ եղբայրս (իր անօգնականությամբ և ցրվածությամբ հանդերձ): Այն մի քանի տողը, որ նա գրել էր որպես բացատրություն իր փախուստի, եղբայրս ինձ անմիջապես չտվեց, նախ ամեն կերպ նախապատրաստում էր ինձ,— բավական անհմուտ և դժվարությամբ,— ի վերջո համարձակություն առավ, մի երկու կաթ արցունք թափեց և տվեց: Թղթի վրա գրված էր հաստատուն ձեռագրով. «Չեմ կարող տեսնել այլևս, ինչպես ես ավելի ու ավելի հեռանում ինձնից, ի վիճակի չեմ այլևս դիմանալու այն վիրավորանքներին, որ շարունակ, գնալով ավելի հաճախ հասցնում ես իմ սիրուն, չեմ կարող սպանել այն իմ մեջ, բայց չեմ կարող և չհասկանալ, որ հասել եմ ստորացման վերջին սահմանին, հիասթափության իմ բոլոր հիմար հույսերից և երազանքներից, աղերսում եմ աստծուց, որ տա քեզ ուժ դիմանալու մեր բաժանումին, մոռանալու ինձ և լինելու երջանիկ քո նոր, արդեն լիովին ազատ կյանքում...»: Կարդացի այդ մի հայացքով և ասացի բավական անպատկառորեն, զգալով, ինչպես հողը գնում է ոտքերիս տակից, դեմքիս, գլխիս մաշկը սառչում է, կուչ գալիս:

— Էհ, դա պետք էր սպասել, սովորական բան են այդ «հիասթափությունները»:

Դրանից հետո քաջություն ունեցա գնալու ննջարան և անտարբեր տեսքով փռվելու թախտին: Իրիկնամուտին եղբայրս զգուշությամբ ներս նայեց. ձևացրի, թե քնած եմ: Որևէ դժբախտության դեպքում գլուխը կորցնող, մեր հոր նման դժբախտության չդիմացող, նա շտապեց հավատալ, որ իսկապես քնած եմ, և օգտվելով այդ երեկո նորից վարչության նիստին ներկա գտնվելու անհրաժեշտությունից, կամացուկ հագնվեց և գնաց... Կարծում եմ, ես այդ գիշեր ինձ չխփեցի միայն

այն պատճառով, որ հաստատ վճռեցի. միևնույն է, խփելու եմ՝ եթե ոչ այսօր, ապա վաղը: Երբ սենյակը լուսավորվեց այգում, պատուհանի ետև, լուսնի կաթնագույնից, դուրս եկա ճաշասենյակ, լամպը վառեցի, բուֆետի մոտ խմեցի մի թեյի բաժակ օղի, երկրորդը... Դուրս գալով տնից, քայլեցի փողոցներով. դրանք սարսափելի էին՝ լուռ էր, տաք, խոնավ, շուրջն ամեն տեղ, մերկ այգիներում և բուլվարի բարդիների մեջ թանձր իջել էր սպիտակ մառախուղը լուսնի լույսի հետ խառնված: Սակայն վերադառնալ տուն, վառել ննջարանի մոմը և նրա աղոտ լույսի տակ տեսնել բոլոր այդ թափթփված գուլպաները, կոշիկները, ամառային զգեստները և այն գունեղ փոքրիկ խալաթը, որի տակ, հաճախ գրկում էի նրան քնելուց առաջ, համբուրում ինձ դարձրած, տրվող դեմքը, զգում նրա տաք շունչը, ավելի սարսափելի էր: Փրկվել այդ սարսափից անզուսպ արցունքներով կարելի էր միայն նրա հետ, նրա մոտ, իսկ հենց նա չկար:

Հետո եղավ ուրիշ գիշեր: Մոմի նույն աղոտ լույսը ննջարանի անշարժ լռության մեջ: Սև պատուհաններից դուրս անդադար հորդում է մթության մեջ ուշ աշնան գիշերային անձրևը: Պառկել եմ և նայում եմ դեմիս անկյունը. նրա եռանկյան մեջ կախված է հին սրբապատկերը, որի առջև նա աղոթում էր քնից առաջ. հին, ասես թափծու տախտակ, երեսի կողմից կարմիր ներկած և այդ լաքապատ կարմրի մեջ աստվածամոր պատկերը ոսկեհուռ հագուստով, խստադեմ և վշտալի. մեծ, սև աչքեր մութ օղակված: Սարսափելի՜ օղակ: Եվ սարսափելի, սրբապիղծ միացում մտքերիս: Աստվածամայրը՝ և նա, այս սրբապատկերը՝ և կանացի այն ամենը, որ նա թափթփել է այստեղ փախուստի խելահեղ շտապողականության մեջ:

Հետո անցավ մի շաբաթ, ևս մեկը, անցավ մի ամիս, ես վաղուց հրաժարվել էի ծառայությունից, ոչ մի տեղ մարդկանց մեջ չէի լինում: Հաղթահարում էի հիշողություն հիշողության ետևից, օր օրի ետևից, գիշեր գիշերվա ետևից, և չգիտեմ ինչու ինձ միշտ թվում էր. ահա այսպես մի ժամանակ, ինչ-որ տեղ, ինչ-որ սլավոն գյուղացիներ գետամիջի քարշավայրով, անտառաճամփեքի դարուփոսերով քարշ էին տալիս ծանր անցագերաններով բեռնված իրենց մակույկները:

30

Դեռ մի ամիս էլ տանը և քաղաքում տանջվում էի նրա ամենագո ներկայությունից: Վերջապես զգացի, որ այլևս ուժ չունեմ այդ տառապանքին դիմանալու և վճռեցի մեկնել Բատուրինո. ապրել այնտեղ որոշ ժամանակ, առանց ապագայի մասին մտածելու:

Տարօրինակ էր մտնել շարժվող վագոն, արագ գրկելով եղբորս վերջին անգամ, մտնել ու ասել ինքդ քեզ. ահա, նորից ազատ ես թռչունի նման: Ձմեռային մութ գիշեր էր, առանց ձյան, վագոնը դղրդում էր չոր օդում: Փոքրիկ ճամպրուկս առած տեղավորվեցի դռան մոտի անկյունում, նստել և հիշում էի, թե ինչպես էի սիրում նրա մոտ կրկնել լեհական ասացվածքը. «Մարդն ստեղծված է երջանկության համար, ինչպես թռչունը թռչելու համար»,— և համառորեն նայում էի դղրդացող վագոնի պատուհանից դուրս, որպեսզի ոչ ոք արցունքներս չտեսնի: Գիշերը մինչև Խարկով... Եվ այն, մյուս գիշերը՝ Խարկովից հետո, երկու տարի առաջ. գարուն, լուսաբաց, նրա խոր քունը լուսացող վագոնում... Լարված նստել էի լապտերի տակ կիսամթում, վագոնի դժվար և կոպիտ նեղվածքի մեջ, և սպասում էի մի բանի՝ առավոտին, մարդկանց, նրանց շարժմանը, մի բաժակ տաք սուրճի Խարկովի կայարանում…

Հետո Կուրսկն էր, նույնպես անմոռանալի. գարնանային կեսօր, նրա հետ նախաճաշ կայարանում, նրա ուրախությունը. «Կյանքում առաջին անգամ եմ կայարանում նախաճաշում»: Հիմա, գորշ և չոր սառնամանիք օրվա իրիկնամուտին այդ կայարանի առջև կանգնած էր մեր չափազանց երկար և անասելի սովորական մարդատար գնացքը, երրորդ կարգի մեծ, ծանր վագոնների անվերջանալի

պատը, որ հատուկ էին Կուրսկ-Խարկով-Ազովյան երկաթուղուն: Դուրս եկա և նայեցի: Շոգեքարշը սևին էր տալիս այնքան հեռու առջևում, որ հազիվ էր երևում: Գնացքի ոտնակներից ցած են թռչում մարդիկ թեյամանները ձեռքներին, բոլորն էլ հավասարապես զզվելի, շտապում են բուֆետ եռման ջուր վերցնելու: Դուրս եկան և վագոնի իմ հարևանները. անտարբեր, իր անառողջ գիրությունից հոգնած վաճառականը և սարսափելի աշխույժ ու ամեն ինչի հանդեպ հետաքրքրասեր տղան, որի դեմքի և շրթունքների ռամկական չորությունը ամբողջ օրն իմ մեջ զզվանք էր հարուցում: Տղան ինձ վրա կասկածոտ հայացք է նետում,— ես էլ եմ ամբողջ օրը նրա ուշադրությունը գրավել... ինչի է, իբր, ամբողջ ժամանակ նստել, լռում է չգիտես աղա թե ով այս մարդը,— սակայն զգուշացնում է ինձ սիրալիր արագախոսությամբ.

— Նկատի ունեցեք, այստեղ միշտ տապակած բադեր են վաճառում, էժան, չտեսնված էժան:

Կանգնել եմ, մտածում եմ բուֆետի մասին, ուր չեմ կարող գնալ, այնտեղ այն սեղանն է, որի մոտ նստած էինք միասին մի ժամանակ: Արդեն պինդ ռուսական ձմռան հոտ է փչում, թեև այստեղ էլ դեռ ձյուն չկա: Ինչ գերեզման է սպասում ինձ այնտեղ, Բատուրինոյում: Հորս և մորս ծերությունը, դժբախտ քրոջս թառամելը, աղքատ կալվածքը, աղքատ տուն, մերկ, ցածրիկ այգի, որի մեջ վզվզում է ձմռան սառցասառն քամին, շների ձմեռային հաչոցը. ձմռանը, երբ ահա այսպիսի քամի է փչում, այն մի տեսակ առանձնահատուկ է, անպետք, ամայի... Գնացքի պոչն էլ է անվերջանալի: Դիմացը, կառամատույցի արգելապատի ետև վեր են խոյանում մերկ բարդիների ցախավելները, բարդիների ետև սառած գետաքարե սալահատակին նստողների են սպասում գավառական կառքերը, որոնց տեսքն անխոս արտահայտում է տաղտուկը, ձանձրույթն այն բանի, որ կոչվում է Կուրսկ: Կառամատույցին բարդիների տակ կանգնած են շալերով փաթաթված կանայք, գոտկատեղին շալի ծայրերն իրար կապած, ցրտից կապտած երեսներով, և հաճոյակամ բղավում են, կանչում. վաճառում են հենց այդ անասելի էժան բադերը, հսկայական, սառած, բշտիկավոր մաշկով: Նրանք, ովքեր արդեն եռման ջուրը վերցրել են, կայտառ ետ են վազում կայարանից դեպի տաք վագոնները, հաճույքով սարսռում, վազելով ցոփ զվարթությամբ սակարկում են կանանց հետ... վերջապես դժոխային մռայլությամբ ոռնում է հեռվում շոգեքարշը, սպառնալով ինձ ճանապարհը շարունակել... Ամենաանելանելին այն էր, որ չգիտեի, թե նա որտեղ է թաքնվել: Այլապես ամոթ-բան կհաղթահարեի և վաղուց արդեն գտած կլինեի նրան ուր էլ որ լիներ, և ինչ գնով էլ լիներ ետ կբերեի ինձ մոտ. նրա այդ վայրենի արարքն, անշուշտ, խելահեղության նոպա է եղել, որի համար զղջալ նրան նույնպես խանգարում է ամոթը:

Հայրական տուն իմ այս նոր վերադարձն արդեն նման չէր երեք տարի առաջվա վերադարձիս: Հիմա ես ամեն ինչի նայում էի ուրիշ աչքերով: Եվ Բատուրինոյում էլ, պարզվեց, ամեն ինչ ավելի վատ էր, քան պատկերացնում էի ճանապարհին. գյուղի խղճուկ խրճիթները, վայրի փրչոտ շներ և վայրենի սառցակալած ջրբերներ տների շեմերին՝ երկաթացեխի մեջ խրված, նույնպիսի ցեխագնդեր կալվածք տանող ճամփին, դատարկ բակ՝ տխուր պատուհաններով մռայլ տան առջև՝ պապերի ու ապուպապերի ժամանակից եկող անհեթեթ բարձր և ծանր տանիքով ու երկու ծածկերից մութ առմուտքերով, ծառ, որ գորշացել է հնությունից,— ամեն ինչ հին է, մի տեսակ լքված, աննպատակ,— և աննպատակ սառը քամին ճկում է նվիրական եղևնու կատարը, որ ցցվել է տան տանիքի ետևում ձմեռային մերկությամբ խղճուկ այգուց... Տան ներսում արդեն տեսա ակնհայտ աղքատություն, վառարանների ճեղքերին կավ էր քսած, հատակը տաքության համար ծածկված էր գեղջկական սթարներով... Միայն հայրս էր ջանում իրեն պահել այդ ամենին հակառակ. նիհարած, փոքրացած, բոլորովին ճերմակած, նա հիմա մաքուր սափրված էր, կանոնավոր սանրված, հագնված էր ոչ նախկին անփութությամբ,— ծանր էր տեսնել ծերության և աղքատության այդ ձգվածությունը,— իրեն պահում էր (հավանաբար հանուն ինձ, հանուն իմ

խայտառակության և դժբախտության) բոլորից ավելի կայտառ և ուրախ: Մի անգամ նա ասաց ինձ, դողդոջուն, արդեն սմքած ձեռքին ծխախոտը պահած, նայելով ինձ քնքուշ տխրությամբ.

— Էհ, ինչ արած, բարեկամս, ամեն ինչ բնականոն է՝ և երիտասարդության բոլոր հուզումները, բոլոր տխրություններն ու ուրախությունները, և ծերության խաղաղությունն ու հանգիստը... Ինչպե՞ս էր դա,— ասաց նա ծիծաղելով աչքերով.— «Խաղաղ վայելքներ»,— գրողը տանի դրանց իսպառ.

Ամայության մեջ մենության,

Ազատ՝ շնչով դաշտերի,

Խրճիթում մեր այս համեստ,

Ունենք խաղաղ վայելքներ…

Երբ հիշում եմ հորս, միշտ զղջումի զգացում եմ ունենում: Ինձ շարունակ թվում է, որ բավականաչափ չեմ գնահատել ու սիրել նրան: Ամեն անգամ ինձ մեղավոր եմ զգում, որ չափազանց քիչ գիտեմ նրա կյանքը, հատկապես երիտասարդությունը. չափազանց քիչ եմ հոգ տարել իմանալու այն, երբ կարելի էր: Եվ շարունակ ջանում եմ ու չեմ կարողանում իմանալ լիովին, թե ինչ մարդ էր նա. առանձնահատուկ դարի և առանձնահատուկ ցեղի մարդ, զարմանալի մի տեսակ անպտուղ, բայց և կատարելապես հոյակապ իր ողջ խառնվածքի թեթև ու բազմերանգ տաղանդավորությամբ, իր կենդանի սրտով և արագ մտքով, որ ամեն ինչ հասկանում, ամեն ինչ ըմբռնում էր մեն-մի ակնարկից, որ իր մեջ մարմնավորում էր հազվագյուտ հոգեկան շիտակություն և հոգու գաղտնարաններ, բնավորության արտաքին պարզություն և ներքին բարդություն, աչքի սթափ սրատեսություն և սրտի բանաստեղծական ռոմանտիկություն: Այն ձմռան ես քսան տարեկան էի, իսկ նա՝ վաթսուն: Մի տեսակ նույնիսկ դժվար է հավատալ. ինչ-որ ժամանակ ես քսան տարեկան էի, և նոր էին միայն սկսել բացվել, հակառակ ամեն ինչի, իմ երիտասարդ ուժերը: Իսկ նրա ամբողջ կյանքն արդեն անցել էր: Բայց ահա, ոչ ոք այն ձմռան չէր հասկանում այնպես, ինչպես նա, թե ինչ էր կատարվում իմ հոգում, և, հավանաբար, ոչ ոք նրա նման չէր կարողանում զգալ հոգուս մեջ տխրության ու ջերմության այդ միաձուլումը: Այդ օրը մենք նստած էինք նրա առանձնասենյակում: Արդեն ձյուն էր դրել, խաղաղ և մեղմ արևոտ օր էր, արևով լուսավորված ձյունածածկ բակը քնքուշ ներս էր նայում առանձնասենյակի ցածրիկ պատուհանից՝ տաքուկ, ծխած, անխնամ մնացած և մանկությունից ինձ համար սիրելի իր այդ անխնամությամբ և հարմարավետությամբ, իր պարզ կահավորանքի անփոփոխությամբ, որ ինձ համար այնքան անբաժանելի էին հորս սովորույթներից և ճաշակից, իմ բոլոր հին հիշողություններից՝ նրա և իմ մասին: Եվ նա, ասելով «խաղաղ վայելքների» մասին, ծխախոտը մի կողմ դրեց, վերցրեց պատից հին կիթառն ու սկսեց նվագել իր սիրած ժողովրդական մի երգ, և նրա հայացքը դարձավ պինդ զվարթ, միաժամանակ ինչ-որ թաքցնելով իր մեջ՝ ներդաշնակ կիթառի քնքուշ ուրախությանը, որ տխուր քմծիծաղով մռթմռթում էր թանկ և կորցրած մի բանի մասին, և այնոմասին, որ կյանքում ամեն ինչ, միևնույն է, անցնում է, ու չարժե արտասվել...

Վերադառնալուցս քիչ անց չկարողացա ինձ զսպել, մի օր վեր կացա ու գլխապատառ քաղաք նետվեցի, և նույն օրն էլ վերադարձա ձեռնունայն. բժշկի տուն ինձ պարզապես ներս չթողեցին: Հուսահատական հանդգնությամբ դուրս թռա սահնակից ծանոթ, հիմա արդեն սարսափելի մուտքի մոտ, սարսափով նայեցի ճաշասենյակի կիսավարագուրված պատուհաններին, որտեղ այնքան օրեր մի ժամանակ նստում էի նրա հետ բազմոցին,— մեր այն առաջին, աշնանային օրերին,—

զանգը քաշեցի... Դուռը բացվեց, և ես հայտնվեցի դեմառդեմ նրա եղբոր առջև, որը գունատվելով ասաց հատ-հատ.

— Հայրս չի կամենում ձեզ տեսնել: Իսկ Լիկան, ինչպես ձեզ հայտնի է, բացակայում է:

Դա այն գիմնազիստն էր, որ այն աշնանը կատաղի վեր ու վար էր անում Վոլչոկի հետ սանդուղքին: Հիմա իմ առջև կանգնած էր մռայլ, շատ թուխ դեմքով մի պատանի՝ սպայական ձևածքի սպիտակ շեղօձիք բլուզով, երկարաճիտք կոշիկներով, նոր ծլած սև բեղիկներով, փոքրիկ սև աչքերի անդրդվելի չար հայացքով, թխությունից կանաչավուն գունատ:

— Հեռացեք, խնդրեմ,— ավելացրեց նա կամացուկ, և երևում էր, ինչպես բլուզի տակ տրոփում էր սիրտը:

Եվ, այնուամենայնիվ, ամբողջ ձմեռ, ամեն օր ես համառորեն նամակի էի սպասում նրանից. չէի կարող հավատալ, որ նա այդքան քարասիրտ-դաժան կլինի:

31

Նույն տարի գարնանն իմացա, որ նա տուն է եկել թոքերի բորբոքումով և մի շաբաթից մահացել է: Իմացա նաև, որ նրա կամքն է եղել, որպեսզի ինչքան կարելի է երկար թաքցնեն ինձնից իր մահը:

Մինչև հիմա էլ ինձ մոտ պահպանվել է այն տետրը դարչնագույն սեկե կազմով, որ գնել ու նվիրել էր ինձ իր առաջին ռոճիկից, թերևս իր կյանքում ամենահուզիչ օրը: Այդ տետրի առաջին էջին դեռևս կարելի է կարդալ այն մի քանի բառը, որ նա գրել է ինձ նվիրելով՝ երկու սխալով, որ արել էր հուզմունքից, շտապելուց, ամոխածությունից…

Օրերս տեսա նրան երազում՝ միակ անգամը առանց նրա իմ ողջ երկար կյանքի ընթացքում: Նա նույնքան տարեկան էր, որքան այն ժամանակ, միասին մեր կյանքի և միասին մեր ջահելության տարիներին: Նա նիհար էր, հագին սգազգեստի նման մի բան էր: Տեսա նրան աղոտ, բայց այնքան ուժգին սիրով, ուրախությամբ, մարմնական և հոգեկան այնպիսի մոտիկությամբ, որ չէի զգացել կյանքում երբեք և ոչ մեկի նկատմամբ:

Ծովամերձ Ալպեր, 1933